The publication of this work was
made possible with the support of the
Iran Heritage Foundation

NATIONAL ACADEMY OF SCIENCES REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF ORIENTAL STUDIES
“MATENADARAN”
MASHTOTS INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPTS

PERSIAN DOCUMENTS OF THE MATENADARAN

D E C R E E S

VOLUME IV

(1734-1797)

by K. P. Kostikyan

YEREVAN
“NAIRI”
2008

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
«ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ»
ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՊԱՐՍԿԵՐԵՆ ՎԱՎԵՐԱԳՐԵՐԸ

Հ Ր Ո Վ Ա Ր Տ Ա Կ Ն Ե Ր

ՊՐԱԿ ՉՈՐՐՈՐԴ

(1734-1797)

Կազմեց
Ք. Պ. Կոստիկյան

ԵՐԵՎԱՆ
«ՆԱԻՐԻ»
2008

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի և Մաշտոցի անվան Մատենադարանի գիտական խորհուրդների որոշմամբ

ՀՏԴ 950:941(479.25)
ԳՄԴ 63.3(5 Իրան)+63(2Հ)
Մ 331

Խ Մ Բ Ա Գ Ի Ր Ն Ե Ր՝
Վ. Ա. Բայբուրդյան
Պ. Ա. Չոբանյան

Մատենադարանի պարսկերեն վավերագրերը. հրովարտակներ (պրակ չորրորդ), Եր., 2008, էջ 387

Սույն պրակում ընդգրկված են Երևանի Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի 1734-1797 ժամանակաշրջանի 55 պարսկերեն հրովարտակների պարսկերեն տեքստերը, ֆոտոպատճենները, հայերեն ու անգլերեն թարգմանությունները: Աշխատության առաջաբանում և վավերագրերի պատմագիտական մեկնաբանություններում ներկայացված է նրանց արժեքը հայագիտության և հայ-պարսկական հարաբերությունների ուսումնասիրման համար:

Նախատեսվում է արևելագետների, պատմաբանների, ինչպես նաև բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների համար:

ԳՄԴ 63.3(5 Իրան)+63(2Հ)

ISBN 978-550-01521-6

© Քրիստինե Կոստիկյան, 2008
© Մաշտոցի անվան Մատենադարան, 2008

ԱՌԱՋԱԲԱՆ

Մատենադարանի պարսկերեն հրովարտակների սույն պրակում ընդգրկված են Մատենադարանի 1734 – 1797 թթ. ժամանակաշրջանի 55 հրովարտակները, որ հրապարակվել են Նադիր շահի, նրա որդի Ռեզա Ղուլի Միրզայի (Իրանի փոխարքան լինելու ժամանակահատվածում) և հետագայում Արևելյան Հայաստանի շրջանների վրա ժամանակ առ ժամանակ իրենց գերիշխանությունը հաստատած Իրանի ու Վրաց տիրակալների՝ Իբրահիմ շահի, Ազատ խանի, Մուհամմադ Հասան խանի, Հերակլ Բ-ի և նրա որդի, թագաժառանգ Գեորգիի, Քերիմ խան Վաքիլի և Աղա Մուհամմադ շահի կողմից: Ելնելով տվյալ ժամանակաշրջանի Իրանի, հայ և վրաց ժողովուրդների պատմական փոխկապակցված իրողությունների առանձնահատկություններից՝ ներառված են հիշյալ տիրակալների բոլոր այն հրովարտակները, որ պահպանվել են Երևանի Մատենադարանում՝ անկախ այն բանից, թե դրանք հրապարակվել են նախքան նրանց պաշտոնական գահակալումը, թե դրանից հետո[1]:

Այս հրովարտակներից նրանք, որոնք վերաբերում են Մայր Աթոռ Ս. Էջմիածնի իրավունքներին ու կալվածքներին[2] XVIII դարում ընթերցվել ու գրանցվել են Սիմեոն Երևանցի կաթողիկոսի կողմից և հիմնականում ճիշտ հակիրճ վերաշարադրանքի ձևով ներկայացված են նրա «Ջամբռ» աշխատության մեջ, իսկ նրանցից շատերի տվյալները նաև օգտագործվել են նույն գրքում զանազան հարցերի լուսաբանման մեջ: Ընդգրկված հրովարտակներից շատերի հակառակ կողմում զետեղված հայերեն հակիրճ գրառումները կատարված են Սիմեոն կաթողիկոսի կողմից:

Սեֆյան պետության անկումից հետո Արևելյան Հայաստանի շրջանները, չնայած տեղի բնակչության երկարատև դիմադրությանը, աստիճանաբար նվաճվում են Օսմանյան զորքերի կողմից: Ղարաբաղի ու Սյունիքի հայ մելիքների ու բնակչության մեծամասնությունը, չհաշտվելով թուրքական տիրապետության հետ, խանդավառությամբ են դիմավորում Նադիր խան Աֆշարի հզորացումն ու պայքարը Անդրկովկասի տարածքները ետ գրավելու համար:

1734-1735 թվականներին պատերազմելով Օսմանյան Թուրքիայի դեմ՝ Նադիր շահը վերանվաճում է նախկինում Սեֆյան Իրանին հպատակ Արևելյան Հայաստանի շրջանները, որոնք այնուհետև մնում են Նադիրի ստեղծած պետության կազմում մինչև նրա մահը 1747թ.: Հայաբնակ շրջաններում իրանական զորքերի հաջողությանը մեծապես նպաստում է տեղի

[1] Տե՛ս Նադիր, Իբրահիմ և Աղա Մուհամմադ շահերի հրովարտակները:

[2] Տե՛ս Մատենադարան (այսուհետև՝ ՄՄ), թղթ. 1գ, վավերագրեր 355, 353, 354, 361, 377, 378ա, 380, 396, 399, 400, 402, 401, 405, 406, 408, 413, 412, 417, 415, 416, 418, թղթ. 1ե, վավ. 591, թղթ. 1զ, վավ. 886, 976:

հայ մելիքների ու բնակչության օժանդակությունը: Նադիրը գիտակցելով այդ օժանդակության կարևորությունը ռազմական հաջողությունների հասնելու գործում՝ սիրաշահում էր Ամենայն Հայոց Կաթողիկոսին ու հայ մելիքներին, խրախուսում նրանց խոստումներով և անձնվեր ծառայությունների դիմաց վավերացնում նրանց իրավունքները հրովարտակներով: 1735թ. Նադիր շահը այցելում է Էջմիածնի վանքը, 1000 *թումանի* հատկացնում նրա վերանորոգմանը և տալով նաև այլ թանկարժեք նվերներ, հրովարտակներով հաստատում է վանքի, կաթողիկոսի ու նրա միաբանության հնուց հաստատված իրավունքները[3]:

Նադիր շահի ժողովածուի մեջ ընդգրկված հրովարտակներից առաջինը ուղղված է Գեղարքունիքի Մելիք Միանսարին (կամ Մեհասար): Այդ հրովարտակի ձախ եզրը, ներառյալ նաև թվականն ու կնիքը, վնասված է: Չնայած դրան, նրա բովանդակությունը գրեթե լիովին հասկանալի է, իսկ թվականը հնարավոր է վերականգնել: Վավերագրում առկա է Նադիրի *թողրան,* իսկ կնիքի դրոշմը ամենայն հավանականությամբ եղել է ստորին ձախ եզրում, ինչպես բոլոր այն հրովարտակներում[4], որոնք հրապարակվել են նախքան նրա պաշտոնական թագադրությունը Մուղանի դաշտում 1736թ. մարտի 6-ին: Նադիր շահն այդ հրովարտակը Գեղարքունիքի մելիքին է հղել Երևանի նահանգը Օսմանյան Թուրքիայից ետ գրավելու նպատակով դեպի Արարատյան դաշտը ձեռնարկած արշավանքի ընթացքում, որը տեղի է ունեցել 1734-5թթ.: Քանի որ այնտեղ նշվում է դեպի Երևան ձեռնարկվող արշավանքի մասին, իսկ վավերագրի վերջում նշվում է զի դաադե ամիսը, ապա թվականը պետք է լինի հիջրայի 1146 թվականը, որը համապատասխանում է 1734 թվականի ապրիլի 5–ից մայիսի 5-ն ընկած ժամանակահատվածին, այսինքն այն ժամանակվան, երբ Նադիրը դեռ շարունակելով Գանձակի երկարատև պաշարումը, մտադրվում է շարժվել դեպի Երևան[5]: Այդ հրովարտակով շահը պահանջում էր մելիքի հավատարմությունը և թուրքական կայազորների դիրքերի հետախուզման հարցում նրա լրտեսների գործնական օժանդակությունը՝ խոստանալով դրա դիմաց ականջ չդնել «մելիքի դեմ չարախոսողներին» ու կարգավորել նրա խնդիրները:

Շահնազարի որդի Մելիք Միանսարի (Մեհասար) անվան հիշատակությունը պահպանվել է նաև 1726թ. մի ռուսերեն փաստաթղթում Գեղարքունիքի ու Ղարաբաղի մելիքների շարքում[6]: Այդ փաստաթուղթը Ջրաբերդի ու Գեղարքունիքի ավագների դիմումն է հղված Ռուսաստանի կայսերը, որով

[3] Мухаммед Казим, Наме-йи алам-ара-йи Надири, (перс.), т. 1, Москва, 1960, с. 632-634.

[4] Տե՛ս վավերագրեր 1-11:

[5] میرزا مهدی خان استرابادی، جهانگشای نادری، باهتمام سید عبدالله انوار، تهران ۱۳۷۷، ص ۲۴۵-۲۳۹

[6] Армяно-русские отношения в первой трети XVIII века, т. 2, ч. II, Ереван, 1967, с. 283.

խնդրվում է նրա հովանավորությունը: Ամենայն հավանականությամբ մելիք Միանսարի մասին վերը նշված «չարախոսությունները» կապված էին վերոհիշյալ դիմումում արտացոլված նրա նախկին ռուսամետ դիրքորոշման հետ, որը չէր կարող Նադիրի շահի դրական գնահատականին արժանանալ:

Ժողովածուի հաջորդ երեք հրովարտակները վերաբերում են Ղարաբաղի Դովշանլու (Առաջաձոր[7]) գյուղի պատմությանը և հրապարակվել են 1734թ. Նադիր շահի կողմից ի հաստատումն գյուղի ավագերեց Դավիթի ավագության և մելիքական իրավունքների՝ հանձնարարելով նրան իրեն ենթակա գյուղերից *սուրսաթ* կոչված հարկը հավաքել[8]: Թերևս այս հրովարտակը ձեռք բերելու նպատակով է կազմված եղել նաև համախոսական գրությունը՝ հաստատված Խաչենի Ղազանչի, Չորման, Ներքին Քոլատակ, Բազարքենդ, Բալլուղայա, Խնձրիստան, Տամկալե, Վանք, Շալվա և մի քանի այլ գյուղերի տանուտերերի ու ավագների կողմից, որոնք իրենց համաձայնությունն են տվել, որպեսզի Առաջաձոր գյուղի ավագերեց Դավիթը դառնա իրենց առաջնորդն ու մելիքը[9]: Ինչպես փաստում են Մատենադարանի կաթողիկոսական դիվանում պահպանված հայերեն վավերագրերը, այս Դավիթը իր հոր՝ Առաջաձոր գյուղի ավագերեց Եսայիի[10] մահից հետո 1716թ. Աղվանից Եսայի կաթողիկոսի կոնդակով հաստատվել էր Առաջաձոր գյուղի ավագերեցի պաշտոնում, իսկ Խաչենի Մելիք Գրիգորի 1727թ. հրամանով՝ նշանակվել նաև այդ գյուղի «առաջնորդ ու տանուտեր»[11]:

Վերոհիշյալ հրովարտակները արժեքավոր տեղեկություններ են հաղորդում Սուրխայ խանի և նրա զորքերի կողմից Ղարաբաղում կատարած ավերածությունների, ինչպես նաև նրա դեմ Նադիրի ձեռնարկած ռազմական արշավանքի ընթացքում պարսից զորքը պարենով ապահովելու համար առանց այդ էլ հարստահարված տեղի բնակչությունից անողոքաբար գանձվող ծանր հարկերի մասին: Այս վավերագրերում ակնառու է դառնում այն իրողությունը, որ Նադիր շահի ռազմական հաջողությունները ձեռք էին բերվում ժողովրդի համար խիստ ծանր գնով[12]:

Մելիք Դավիթի անունով հրապարակված Նադիր շահի հրամանագրերից մեկում[13] նշվում է, որ մելիքին ենթակա շրջանի մեջ մտնում էին չորս գյուղ, այդ թվում Խնձրիստան գյուղը: Այդ շրջանը իհարկե չէր ընդգրկում

[7] Առաջաձոր, գյուղ (Խաչեն գավառում), որ նշվում է դեպի Արծաթասար ձգվող լեռնաշղթայի հարավային ստորոտում (Մ. Բարխուդարյանց, Արցախ, Երևան, 1999, էջ 257):
[8] Տե՛ս վավերագրեր 2, 3, 4:
[9] ՄՄ, կաթողիկոսական դիվան, թղթ. 2բ, վավ. 177, նրա պատճեն տե՛ս վավ. 376:
[10] ՄՄ, կաթողիկոսական դիվան, թղթ. 240, վավ. 10:
[11] ՄՄ, կաթողիկոսական դիվան, թղթ. 240, վավ. 108:
[12] Ann K. S. Lambton, Landlord and Peasant in Persia, London-NewYork-Toronto, 1953, p. 132.
[13] Տե՛ս վավերագիր 4:

ողջ Խաչենի մելիքությունը, հետևաբար Մելիք Դավիթը չի կարող դիտվել որպես այդ մելիքության միանձնյա ղեկավարը: Մեզ հայտնի չէ որևէ վկայություն Մելիք Դավիթի և Խաչենի Հասան-Ջալալյանների միջև ազգակցական կապի գոյության մասին: Այս մելիքի մասին հետագա տարիներից որևէ հիշատակություն չի պահպանվել: Արդեն երկու տարի անց 1736թ. հրապարակված Նադիր շահի մեկ այլ հրովարտակում[14], ուր Դովշանլու գյուղը նշվում է Խաչենի մելիք Գրիգոր Հասան-Ջալալյանին ենթակա շրջանի գյուղերի թվում, որևէ հիշատակություն չկա Մելիք Դավիթի մասին:

Նադիր շահը 1736թ. գարնանը իր պաշտոնական թագադրումից անմիջապես հետո Ղարաբաղի հինգ մելիքությունները հաստատում է որպես շահի ենթակայության տակ գտնվող «մահալլ-ե խամսե» կոչվող առանձին վարչական միավոր: Դիզակի Մելիք Եգանը, որ մասնակցում է Նադիրի թագադրությանը Մուղանի դաշտում[15], նշանակվում է այդ վարչական միավորի կառավարիչ (*զաբիթ*): Թեև չի պահպանվել Մելիք Եգանի այս իրավունքը հաստատող շահական հրամանագիրը, սակայն այդ ժամանակաշրջանի Ղարաբաղին վերաբերող գրեթե բոլոր վավերագրերը պատմական այլ սկզբնաղբյուրների հետ փաստում են Ղարաբաղում նրա ունեցած լայն լիազորությունների ու անվիճելի հեղինակության մասին: Մասնավորապես, վերը նշված հրամանագրով[16] Խաչենի Առաջաձոր (Դովշանլու) և Ղաբարթու գյուղերի պետական հարկերը գանձելու իրավունքը հանվում է Բարդայի կառավարիչների իրավասության շրջանակներից և տրվում Մելիք Եգանին, որպեսզի վերջինս այդ հարկերը փոխանցի Ատրպատականի փոխարքա Մուհամմադ Իբրահիմին:

Մելիք Եգանին 1744թ. հաջորդած նրա ավագ որդի Արամի մահից (1745թ.) հետո Դիզակի մելիքը դարձած Եսային ևս մելիք էր նշանակվել Նադիր շահի կողմից[17]: Նադիր շահի կողմից 1746թ. Մելիք Եսայուն տրված մի հրովարտակի պահվում է Ադրբեջանի Պետական Կենտրոնական Պատմական արխիվում. «նշանակում եմ նրան Դիզակ գավառի մելիք կամ կառավարիչ՝ դնելով նրա վրա պարտականություն հետևել պետական շահերին՝ ցույց տալով իր ջերմեռանդությունը դեպի կառավարությունը»[18]:

Նադիր շահի 1738թ. հրապարակված հրովարտակով[19] հաստատվում են Երևանի մելիքներ Սկրտումի և Հակոբջանի *մուաֆության* իրավունքները: Այս մելիքները ևս մասնակցել էին 1734թ. թուրքերի դեմ Նադիրի ձեռնարկած ռազմական միջոցառումներին, որոնց մատուցած ծառայությունները

[14] Տե՛ս վավերագիր 12:
[15] Աբրահամ Կրետացի, Պատմություն, Երևան, 1973, էջ 80:
[16] Տե՛ս վավերագիր 12:
[17] Դիվան հայ վիմագրության, V, Արցախ, Երևան, 1982, էջ 178:
[18] Ֆ. Պողոսյան, Խամսայի մելիքների իրավունքներն ու պարտականությունները, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1966, № 1, 203:
[19] Տե՛ս վավերագիր 13:

ինքը՝ Նադիրը, բարձր է գնահատել[20]: Այս մելիքները Աբրահամ կաթողիկոսի[21] հետ ներկա են գտնվել 1736թ. Մուղանում կազմակերպված Նադիրի թագադրության հանդեսին[22]: Դեռ մինչև Նադիրի թագադրությունը Աբրահամ կաթողիկոսի միջնորդությամբ Նադիրի հրամանագրով Մելիք Հակոբջանին իրավունք էր տրվել Երևանում բացել դրամահատարան[23]:

Ժողովածուի մեջ ընդգրկված հրովարտակների մեծ մասը ձեռք բերված լինելով Ամենայն Հայոց կաթողիկոսների ջանքերով՝ կոչված էին պաշտպանելու Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կալվածքներն ու իրավունքները զանազան ոտնձգություններից:

Աբրահամ Կրետացի կաթողիկոսը օգտվելով իր հանդեպ Նադիր շահի ունեցած հատուկ բարեհաճությունից՝ իր կարճատև կաթողիկոսության ընթացքում ձեռք է բերում ավելի քան 50 հրովարտակ[24], որոնցից միայն մի քանիսն են պահպանվել: Մատենադարանում պահպանված այս հրովարտակների շարքում են Մայր Աթոռ Ս. Էջմիածնի վանքից, նրա նվիրակներից ու կալվածքներից անօրինական հարկագանձումները, վանքի եկամուտների նկատմամբ ոտնձգությունները արգելելու և նրանից գանձվող հարկերը հստակեցնելու նպատակով հրապարակված հրովարտակները:

Գրիգոր Մակվեցի կաթողիկոսի կողմից դեռևս 1431թ. Էջմիածնի համար գնվել էին Վաղարշապատ, Աշտարակ, Բաթռինջ, Նորագավիթ, Աղավնատուն, Թեղենիս-Քիրաջլու և Մուղնի գյուղերի վեցական *դանգ մուլքերը*[25]: 1585թ. Մայր Աթոռը ձեռք է բերում Դիբաքլու գյուղը[26]:

XVII դարում Փիլիպոս Աղբակեցի, Հակոբ Ջուղայեցի ու մյուս կաթողիկոսների կողմից Էջմիածնի համար մաս-մաս գնվում է Օշական գյուղը[27]: Պահպանվել են Մաստարա գյուղի գնման ու Էջմիածնին *վակֆ* արվելու կապակցությամբ կազմված կալվածագրերը՝ թվագրված 1656, 1657, 1709 և 1719 թվականներով[28]: Ֆրանկանոց գյուղը ևս ամբողջովին գնվել է Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի կողմից 1655թ[29]:

XVII դարում ընդհանուր առմամբ 23 գյուղ է հիշվում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կալվածքների թվում, որոնց մի մասը սակայն վանքը Հակոբ Ջուղա-

[20] Աբրահամ Կրետացի, Պատմություն, էջ 244:
[21] Տ. Աբրահամ Գ Կրետացի, Ամենայն Հայոց Կաթողիկոս 1734 –1737թթ.:
[22] Աբրահամ Կրետացի, Պատմություն, էջ 80:
[23] Նույն տեղում, էջ 72:
[24] Նույն տեղում, էջ 52, 70, 73, 128, 149:
[25] Հ. Փափազյան, Մատենադարանի պարսկերեն վավերագրերը. կալվածագրեր, Երևան, 1968, վավերագիր 5:
[26] Սիմեոն Երևանցի, Ջամբռ, Երևան, 2003, էջ 166:
[27] ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1ա, վավ. 61ա, բ, 64, 65ա, 66, 70, 74, 100, 101; թղթ. 1բ, վավ. 123, 160, 176:
[28] ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1գ, վավ. 947, 948, 950, 951:
[29] Սիմեոն Երևանցի, Ջամբռ, էջ 158:

յեցի կաթողիկոսի մահից հետո կորցնում է[30]: Վաղարշապատ գյուղի 1725թ. հարկացուցակից, որտեղ թվարկված են նաև հարկերից ազատվող վանքապատկան կալվածքներն ու այլ ստացվածքները, պարզվում է, որ այդ թվականներին Էջմիածնին էին պատկանում Վաղարշապատ, Օշական, Մաստարա, Քիրաջլու և Ֆրանկանոց գյուղերը[31]:

Նադիր շահի օրոք 1735թ. Աբրահամ Կրետացի կաթողիկոսին հաջողվում է շահական հրովարտակով ամրագրել Վաղարշապատ, Օշական, Մաստարա, Ֆրանկանոց, Քիրաջլու, Դիբաքլու և Չելեբիքենդ գյուղերի պատկանելությունը Մայր Աթոռ Ս. Էջմիածնին[32]: Սակայն արդեն 1741թ. հրապարակված հրովարտակներում խոսք է գնում Երևանի նահանգի միայն Վաղարշապատ, Օշական, Ֆրանկանոց ու Մաստարա գյուղերի մասին[33]: Այդ հրովարտակներից առաջինը, որ կարգադրում է չանհանգըստացնել Օսմանյան Թուրքիայի տիրապետության տակ գտնվող Արևմտյան Հայաստանից կաթողիկոսի ջանքերով Երևանի նահանգ փոխադրված հայերին, վկայում է Մայր Աթոռի կալվածքները, ինչպես նաև իր՝ կաթողիկոսի ծննդավայր Ջահուկը շենացնելու ուղղությամբ Ղազար կաթողիկոսի ձեռնարկած գործնական քայլերի մասին: Կաթողիկոսի խնդրանքով շնորհված հրովարտակով շահը ապահովագրում է այդ գյուղերը անօրինական հարկապահանջությունից[34]:

Ըստ Իբրահիմ շահից 1748թ. Ղազար կաթողիկոսի ձեռք բերած հրովարտակի Մայր Աթոռին էին պատկանում Վաղարշապատը, Օշականը, Ֆրանկանոցն ու Մաստարան[35]:

Ինչպես նշում է Սիմեոն Երևանցի կաթողիկոսը[36], հետագայում Մայր Աթոռ Ս. Էջմիածնից խլվում են նաև Օշական և Ֆրանկանոց գյուղերը, որոնք սակայն հիշյալ կաթողիկոսը կարողանում է վերադարձնել: Բացի այդ, Գրիգոր Մակվեցի կաթողիկոսի *վակֆնամեի* հիման վրա Սիմեոն Երևանցին ետ է վերադարձնում նաև Աշտարակ, Եղվարդ, Մուղնի և Աղավնատուն գյուղերը՝ ամրապնդելով նրանց պատկանելությունը Մայր Աթոռին Երևանի Հուսեյն Ալի խանի, *շեյխ-ուլ-իսլամի* ու այլ պաշտոնյաների կողմից ստորագրված ու կնքված փաստաթղթերով[37]:

[30] Հ. Փափազյան, Վանական կալվածքների սեփականատիրական մի քանի առանձնահատկություններ, «Բանբեր Մատենադարանի», № 10, Երևան, 1971, էջ 243:
[31] Հ. Փափազյան, Վաղարշապատ գյուղի 1725 – 1728 թթ. թուրքական հարկացուցակները, «Բանբեր Մատենադարանի», № 5, Երևան, 1960, էջ 453:
[32] Տե՛ս վավերագիր 8:
[33] Տե՛ս վավերագիր 19:
[34] Տե՛ս վավերագիր 22:
[35] ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 1գ, վավերագիր 398ա:
[36] Տ. Սիմեոն Ա Երևանցի Ամենայն Հայոց Կաթողիկոս 1763 – 1780թթ:
[37] Սիմեոն Երևանցի, Ջամբռ, էջ 51-52:

Մայր Աթոռ Ս. Էջմիածինը կալվածքներ է ունեցել Թավրիզում և Դեհխարղանում: Մեզ հայտնի չէ որևէ տվյալ Թավրիզում գտնվող կալվածքի ձեռք բերման ժամանակի և հանգամանքների վերաբերյալ: Ըստ Սիմեոն Երևանցու, Դեհխարղանում գտնվող կալվածքը, որը նրա օրոք էլ «շէն և ընդ ձեռամբ սրբոյ Աթոռոյս» էր, բաղկացած էր երեք կտոր այգիներից և մասմաս ձեռք էր բերվել Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի կողմից[38]: Քանի որ դրանք հեռու էին գտնվում Էջմիածնից, շատ կարևոր էր նրանց հետ կապն իրականացնող գործակալների ազատ երթևեկության ապահովումը տեղական կառավարիչների ու ճանապարհները հսկող ծառայողների ոտնձգություններից: Այս նպատակով էլ 1735թ. Աբրահամ Կրետացի կաթողիկոսը Նադիր շահից ձեռք է բերում հրովարտակ, որն ընդգրկված է սույն ժողովածուի մեջ (վավերագիր 7): Այս կալվածքները հաճախ վարձակալության էին տրվում: Դեհխարղանի այգիներից մեկը 1735թ. տրվում է տեղի Տեր Մինասին՝ տարեկան 500 լիտր չամիչ վարձավճարով[39]: Սիմեոն Երևանցին, իր հերթին, Թավրիզի կալվածքը 99 տարով հանձնում է ոմն Միրզա Ռաֆիի վարձակալությանը «տարեկան 100 լիտր ցորեն» վարձավճարով[40]:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի համար կարևոր նշանակություն ուներ նրա հարկերից ազատված լինելու՝ մուաֆության իրավունքի պաշտպանությունը: Ուստի պատահական չէ, որ ժողովածուի մեջ ընդգրկված հրովարտակներից 12-ը հրապարակված են այս խնդրի առնչությամբ[41]: Այդ հրովարտակների ու Մատենադարանի այդ շրջանի մի քանի այլ վավերագրերի առկայությունը հնարավորություն են ընձեռում ընդհանուր պատկերացում կազմել Իրանի Սեֆյան պետության անկմանը հաջորդած ժամանակաշրջանում Էջմիածնի *մուաֆության* իրավունքի բնույթի ու նրա փոփոխությունների մասին:

1735թ. Աբրահամ Կրետացի կաթողիկոսի խնդրագրի համաձայն անց է կացվում Մայր Աթոռի կալվածքների մանրամասն հաշվառում և Նադիր շահի հրովարտակով հաստատվում 106910 *դինարի* հարկերից ազատված լինելու (*մուաֆության*) իրավունքը[42]: Ըստ այդ վավերագրի՝ կաթողիկոսը Երևանի նահանգի 19 վանքերի համար ամեն տարի պետք է 175000 *դինար* վճարեր շահին:

Ինչպես այս կապակցությամբ իրավացի կերպով նշում է Սիմեոն Երևանցին՝ «եթե (Սուրբ Աթոռը) ավելի *մուլք* ունենար, քան այս գրածները,

[38] Նույն տեղում, էջ 253:
[39] ՄՄ, կաթողիկոսական դիվան, թղթ. 242, վավ. 26:
[40] Սիմեոն Երևանցի, Ջամբռ, էջ 253, նաև ՄՄ, կաթողիկոսական դիվան, թղթ. 1դ, վավ. 457, 458:
[41] Տե՛ս վավերագրեր 5, 6, 9, 11, 35, 38, 39, 40, 41, 45, 47, 49:
[42] Տե՛ս վավերագիր 9:

այլև ավելին ցանի, պիտի հարկ վճարի՝ համաձայն սահմանված կարգի, ինչպես տալիս է (ողջ) երկիրը[43]»:

Սակայն արդեն երկու տարի անց Ղազար կաթողիկոսի կաթողիկոսության շրջանում Էջմիածնի հասույթների ու բերքի հաշվառման ընթացքում հարկերի հավելագրման հետևանքով Մայր Աթոռը հարկադրված էր վերը նշված 175000 *դինարից* զատ վճարել նաև 117550 *դինար*[44]: Ըստ Սիմեոն Երևանցու, հարկագանձման այս կարգը պահպանվում է մինչև Նադիր շահի մահը[45]: Այնուամենայնիվ մի շարք աղբյուրներ պնդում են Նադիրի օրոք Մայր Աթոռից մի քանի անգամ գանձված ծանր տուգանքների մասին[46]: Ամենայն հավանականությամբ մի այդպիսի տուգանքի կապակցությամբ է անցկացվել 1744թ. Մայր Աթոռի կալվածքներից գանձվող հարկերի մանրամասն հաշվարկը, ըստ որի, բացի Երևանի նահանգի մյուս վանքերի համար վճարվող 175000 *դինարը,* Էջմիածնից գանձվել է՝ 212200 *դինարի* գումար[47]:

Ազատ խանի իշխանության շրջանում 1753թ. անց է կացվում Մայր Աթոռի հասույթների ու հարկերի հաշվառում և կազմվում մի փաստաթուղթ, որում հաշվի առնելով վանքի *մուաֆության* իրավունքը (որը նշվում է 107100 դինարի չափով), մատնանշվում է վանքի կողմից վճարվելիք գումարը 109125 դինարի չափով, որը պետք է վճարվեր Երևանի նահանգի մյուս վանքերի համար վճարվող 175000 դինարի հետ միասին[48]: Նույն թվականին հրապարակված Ազատ խանի հրովարտակում նույնպես խոսվում է անցկացված հարկային հաշվառման մասին և հրահանգվում «*հավալեները մումայիզների* ստուգմանը համապատասխան *իթլաղ* անել, այնպես, որ դրամաշորթություն տեղի չունենա»[49]: Երկու տարի անց նույն Ազատ խանի հրամանագրերից մեկով կարգադրվում է Նադիր շահի հրովարտակով սահմանված հարկաչափին ավելացված հարկագումարը հանել[50], իսկ նույն թվականի հունիսի 6-ի հրամանագրով՝ արգելվում է հարկագանձումը Երևանի նահանգի ավերված վանքերի համար[51]: Վերջին հրովարտակը համահունչ է

[43] Սիմեոն Երևանցի, Ջամբռ, էջ 201:
[44] Նույն տեղում, էջ 203-204:
[45] Նույն տեղում, էջ 204:
[46] Խաչատուր Ջուղայեցի, Պատմութիւն Պարսից, Վաղարշապատ, 1905, էջ 265; Մ. Չամչյան, Հայոց պատմություն, հ. Գ, Երևան, 1984, էջ 821; A Chronicle of the Carmelites, p. 642; Յովհաննես Շահխաթունեանց, Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հ. Ա, Ս. Էջմիածին, 1842, էջ 227-228:
[47] ՄՄ, կաթողիկոսական դիվան, թղթ. 1գ, վավ. 392:
[48] ՄՄ, կաթողիկոսական դիվան, թղթ. 1դ, վավ. 414:
[49] Տե՛ս վավերագիր 41:
[50] Տե՛ս վավերագիր 45:
[51] Տե՛ս վավերագիր 44:

Երևանի Հասան Ալի խանի կողմից Ալեքսանդր կաթողիկոսի[52] խնդրագրի հիման վրա դեռ 1755թ. ապրիլի 15-ին հրապարակված հրովարտակին, որով արգելվում է Երևանի խանության ավերված վանքերից *մալոջհաթ* հարկի գանձումն ու Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հողային կալվածքների չափագրումը[53]: Այս հրովարտակների կիրառության դեպքում Մայր Աթոռը լիովին ազատված կլիներ ամեն տեսակի հարկային պարտավորություններից: Սակայն ինչպես վկայում է Սիմեոն Երևանցին, հաջորդ երեք տարիներին Երևանի խանը օգտվելով նորընտիր կաթողիկոսի բացակայությունից[54] «զանազան վեճեր է առաջ բերում, նոր հարկեր նշանակում և առնում (Սուրբ) Աթոռից»՝ *մուաֆության* հավելյալը դարձնելով 117500 *դինար*[55]: Միաժամանակ նորից հաստատում և շարունակում է գանձել նաև վանքերի համար վճարվող 175000 *դինարի* գումարը[56]:

Սիմեոն Երևանցի կաթողիկոսը Քերիմ խանի իշխանության սկզբնական շրջանում հատուկ փաստաթղթով հաստատում է Մայր Աթոռի 186300 *դինարի մուաֆության* իրավունքը[57]: Սիմեոն կաթողիկոսին մեծ ջանքերի գնով ի վերջո 1765թ. հաջողվում է հասնել այն բանին, որ Երևանի Հուսեյն Ալի խանի հրամանագրերով Մայր Աթոռը ազատվում է բոլոր տեսակի հարկային պարտավորություններից, մասնավորապես նաև մյուս վանքերի համար վճարվող 175000 *դինարի* հարկագումարից[58]:

Ժողովածուի մեջ ընդգրկված 11 հրովարտակ ձեռք են բերվել Ղազար Ջահկեցի կաթողիկոսի[59] ջանքերով 1740 – 1743 թվականներին Նադիր շահից և նրա որդի ու Իրանի փոխարքա Ռեզա Ղուլի Միրզայից: Ղազար Ջահկեցի կաթողիկոսի ձեռք բերած հրովարտակներից ևս 8 –ը, որ պահպանվել են Մատենադարանում, հրապարակվել են Իբրահիմ շահի կողմից 1748 – 1749 թվականներին[60]:

Նախաձեռնելով իր արշավանքը Հնդկաստան՝ 1738թ. նոյեմբերի 7-ին Նադիր շահը իր որդի Ռեզա Ղուլի Միրզային նշանակում է Իրանի փոխարքա[61]: Վերջինս կառավարում է Իրանը մինչև 1740թ. մայիսը, երբ

[52] Տ. Աղեքսանդր Բ Բյուզանդացի Ամենայն Հայոց Կաթողիկոս 1753 – 1755թթ.:
[53] ՄՄ, կաթողիկոսական դիվան, թղթ. 1գ, վավ. 417:
[54] 1755 թվականին մահանում է Ալեքսանդր կաթողիկոսը, իսկ 1756թ. կաթողիկոս ընտրված Սահակ Ահագինը տարիներ շարունակ չի գալիս Մայր Աթոռ, մինչև, որ նրա տեղապահ Հակոբ Շամախեցին 1759թ. ընտրվում է կաթողիկոս:
[55] Սիմեոն Երևանցի, Ջամբռ, էջ 205-206:
[56] Նույն տեղում:
[57] Նույն տեղում, էջ 206:
[58] Նույն տեղում, էջ 208:
[59] Տ. Ղազար Ա Ջահկեցի Ամենայն Հայոց Կաթողիկոս 1737 – 1751թթ.:
[60] Տե՛ս վավերագրեր 28-32, 34, 35:
[61] The Cambridge History of Iran, vol. 7, Cambridge, 1991, p. 39.

Նադիրը վերադառնում է Հնդկաստանից[62]: Ուստի պատահական չէ, որ այս շրջանում Ղազար Ջահկեցու ջանքերով ձեռք բերված երեք հրովարտակները հրապարակված են Նադիրի որդի և Իրանի փոխարքա Ռեզա Ղուլի Միրզայի անունից: Այս հրովարտակներն առանձնանում են նրանով, որ յուրաքանչյուրում շոշափվում են մի քանի խնդիրներ և դրանց վերաբերյալ կարգադրություններ են արվում, այն դեպքում, երբ այդ հարցերից ամեն մեկի առնչությամբ սովորաբար հրապարակվում էր առանձին հրովարտակ:

Ռեզա Ղուլի Միրզայի հիշյալ հրամանագրերից մեկն արգելում է ետ պահանջել Երևանի նահանգից արտագաղթած քոչվոր ցեղերի կողմից հայերի մոտ թողնված գույքը, որ զավթել էին թուրքական իշխանությունները[63]: Երևանի նահանգից հիշյալ քոչվոր ցեղերը գաղթեցվել էին 1730-1731թթ. շահ Թահմասպ Բ-ի կողմից Երևանի նահանգում անցկացված արշավանքից հետո: Հետագայում այդ ցեղերի անդամները վերադառնալով՝ սկսում են ետ պահանջել իրենց ունեցվածքը, որն անշուշտ մեծ նեղություն էր պատճառում այն հայերին, որոնց պահպանությանն էր հանձնվել այն, բայց խլվել հետագայում Երևանի նահանգը իրենց ենթարկած թուրքական իշխանությունների կողմից: Այս խնդրի շուրջ Նադիր շահից հրովարտակ էր ձեռք բերել նաև նախորդ կաթողիկոս Աբրահամ Կրետացին 1735թ., որը սակայն չի պահպանվել[64]:

Հաջորդ հարցը, որ բարձրացվում է այդ հրովարտակում, վերաբերում է իրենց քրիստոնյա ազգականների ժառանգության նկատմամբ նոր մահմեդականացած հայերի, այսպես կոչված *ջադիդ-ուլ-իսլամների,* հավակնությունների արգելմանը. մի հարց, որի դրական լուծումը խիստ կարևոր էր իրանահպատակ հայության համար: Շիա մահմեդականների մոտ Սեֆյան ժամանակաշրջանում լայն կիրառություն ուներ այսպես կոչված Իմամ Ջա՛ֆարի օրենքը, ըստ որի *զիմմի ռայաթների* մահմեդականացած ազգականները իրավունք ունեին իրենց քրիստոնյա ազգականների ունեցվածքը ամբողջովին գրավելու և նրանց զրկելու ժառանգությունից[65]: Հիշյալ օրենքի կիրառությունը մեծ նեղություն էր պատճառում իրանահպատակ հայությանը՝ թույլ տալով անգամ ազգական չհանդիսացող մահմեդականացած անձանց հավակնություններ ունենալ մահացած քրիստոնյայի ունեցվածքի նկատմամբ[66] կամ էլ օտարման ոչ ենթակա *վակֆային* կալվածքները փորձել հափշտակել Մայր Աթոռ Ս. Էջմիածնից[67]: Սեֆյան պետության անկման

[62] Նույն տեղում, p. 42.
[63] Տե՛ս վավերագիր 16:
[64] Աբրահամ Կրետացի, Պատմություն, էջ 52:
[65] Հ. Փափազյան, Սեֆյան Իրանի ասիմիլյատորական քաղաքականության հարցի շուրջը, «Բանբեր Մատենադարանի», Երևան 1956, № 3, էջ 87-88:
[66] Ք. Կոստիկյան, Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, պրակ III, Երևան, 2005, վավերագիր 18:
[67] Նույն տեղում, վավերագիր 51:

շրջանում հայոց կաթողիկոսներ Աստվածատուր Ա Համադանցուն և Աբրահամ Բ Խոշաբեցուն հաջողվում է Իրանի շահ Թահմասպ Բ-ից, որի իշխանությունը ավելի շատ ձևական բնույթ էր կրում, այս հարցի վերաբերյալ ձեռք բերել հայ քրիստոնյաների շահերը պաշտպանող հրովարտակներ: Մասնավորապես, շահ Թահմասպ Բ-ի 1724թ. հրամանագրով մի շարք դատական ու վարչական ատյաններում իրենց իրավունքները հաստատելուց հետո միայն նոր մահմեդականացած հայերին իրավունք էր տրվում հավակնել իրենց ազգականների ունեցվածքին[68]: Նույն գահակալի 1731թ. հրովարտակը[69] հրահանգում է Չուխուր Սաադի կառավարչին արգելել նոր մահմեդականացած հայերին ժառանգության վեճ սկսել իրենց հարազատների հետ: Փաստորեն, այն ընդհանրապես արգելում է Իմամ Զա'ֆարի օրենքի կիրառությունը հայերի ժառանգական խնդիրներում: Աբրահամ Կրետացի կաթողիկոսը ևս Նադիր շահից ձեռք է բերում հրովարտակ «զի թուրքացողին ի հայրենյաց զրկեսցեն»[70]: Ըստ երևույթին, հենվելով վերը նշված հրովարտակների վրա, Ղազար կաթողիկոսին հաջողվում է այս հարցի առնչությամբ հայերի համար նպաստավոր կարգադրություն ստանալ Իրանի փոխարքայից, ըստ որի. «Եթե հայերից որևէ մեկը արժանանում է իսլամն ընդունելու պատվին, ապա նա չպետք է իր ազգականների հետ ժառանգության վեճ սկսի և … անօրինականություն գործի»: Կարևոր համարելով նշված խնդրի լուծումը հայ ժողովրդի համար՝ Ղազար կաթողիկոսը նույն բովանդակությամբ հրովարտակ է ձեռք բերում նաև Իբրահիմ շահից 1748թ.[71]:

Ծագումով լինելով Նախիջևանի Զահուկ գավառից, ուր հայ ունիթորների կենտրոնն էր՝ Ղազար Զահկեցի կաթողիկոսը լավատեղյակ էր հայերի դավանափոխության ու կաթոլիկական քարոզչության կործանարար հետևանքներին, ուստի և «անզիջում դիրքորոշում» ուներ կաթոլիկ քարոզիչների և քարոզչության հանդեպ, որը դրսևորվել է ինչպես նրա գրչին պատկանող կրոնական գործերում ու քարոզներում[72], այնպես էլ նրա ձեռք բերած հրովարտակներում: Կարմելյան միաբան Ֆիլիպ Մերիի խոսքերով, իրենք 1739-1740թթ. ենթարկվում էին հալածանքների «ոչ կաթոլիկ պատրիարք Լազարի (Ղազար) կողմից, որը պահանջում էր որ բոլոր քարոզիչները Իրանից դուրս քշվեն, եկեղեցիները կործանվեն»: Նա հինգ անգամ այս հարցով դիմում է փոխարքա Ռեզա Ղուլի Միրզային, մեծ գումարներ ծախսում, որի արդյունքում շատ կաթոլիկներ բանտ են նետվում և

[68] Նույն տեղում, վավերագիր 86:
[69] Նույն տեղում, վավերագիր 89:
[70] Աբրահամ Կրետացի, Պատմություն, էջ 52:
[71] Տե՛ս վավերագիր 28:
[72] Ա. Այվազյան, Հայոց եկեղեցին XVIII դարի հայ ազատագրական շարժման քառուղիներում, Երևան, 2003, էջ 141- 143:

շահական հրովարտակ է ձեռք բերվում[73]: Թեև Ռեզա Ղուլի Միրզայից ձեռք բերված այս հրովարտակը Մատենադարանի արխիվում չկա, սակայն պահպանվել են նրա կողմից Նադիր շահից ձեռք բերված 1741թ. երկու հրովարտակ՝ ուղղված միսիոներական քարոզչության դեմ[74]:

Ընդհանրապես, ինչպես երևում է Ղազար կաթողիկոսի կողմից ձեռք բերված հրովարտակների ուղղվածությունից, վերջինս մեծ ուշադրություն է դարձրել հայ ժողովրդի կրոնական իրավունքների պաշտպանությանը նաև մահմեդական բնակչության ու պաշտոնյաների բռնություններից և անօրինական միջամտությունից[75]:

Ղազար կաթողիկոսը 1745 թվականին Իրանի Մեշհեդ մայրաքաղաքն է գնում՝ Նադիր շահին այցելելու[76]: Այս շրջանում պետք է, որ եղած լինի Ղազար կաթողիկոսին ինչ-ինչ պատճառներով տուգանքների ենթարկելն ու կաթողիկոսությունից գահընկեց արվելը Նադիրի հրամանով[77]: Կաթոլիկ միաբանները նրա գահընկեց արվելը կապում են կաթոլիկներին վարկաբեկելու նրա փորձի հետ[78]: Այս իրավիճակը ձգվում է ընդամենը 6 ամիս: Էջմիածնի միաբանները Նադիր շահի թոռ Շահռուհի Երևան ու Էջմիածին այցելելու ընթացքում ծանր տուգանք ստանձնելով, կարողանում են Ղազար Զահկեցուն վերադարձնել կաթողիկոսությունը[79]:

Թեև տարբեր են ժամանակակիցների մեկնաբանությունները Ղազար կաթողիկոսի գահընկեց արվելու պատճառների մասին, սակայն ինչպես վերը նշել ենք, բոլոր աղբյուրները միանշանակ պնդում են նրա օրոք Մայր Աթոռի կողմից պարսից արքունիքին մի քանի անգամ վճարված ծանր տուգանքների մասին:

Այստեղ շահի անձնական վերաբերմունքը կաթողիկոսի նկատմամբ, կարծում ենք, խաղում էր երկրորդական դեր, նախ, որ ընդհանրապես Նադիր շահի իշխանության տարիներին ժողովրդից գանձվող ծանր հարկերն ու տուգանքները հաճախակի էին. այդ էին պահանջում շահի կողմից իրականացվող բազմաթիվ ռազմական ձեռնարկումները[80]; երկրորդ, որ Նադիրն արդեն չուներ Ամենայն Հայոց Կաթողիկոսին սիրաշահելով նրա հպատակների օժանդակությունը ստանալու կարիքը, որը նա զգում էր Օսմանյան Թուրքիայից հայկական տարածքները վերադարձնելու ժամանակահատվածում:

[73] A Chronicle of the Carmelites in Persia and the Papal Mission of the XVII-XVIII centuries, v. I, London, 1939, pp. 632-633.
[74] Տե՛ս վավերագրեր 18, 23:
[75] Տե՛ս վավերագրեր 17, 18, 20, 28, 30, 31:
[76] Մ. Չամչյան, Հայոց պատմություն, հ. Գ, էջ 827:
[77] Յովհաննես Շահխաթունեանց, Ստորագրութիւն, հ. Ա, էջ 227:
[78] A Chronicle of the Carmelites, pp. 641-642.
[79] Յովհաննես Շահխաթունեանց, Ստորագրութիւն, հ. Ա, էջ 228:
[80] Ann K. S. Lambton, Landlord and Peasant in Persia, p. 132.

1747թ. հունիսի 24-ին Նադիր շահը սպանվում է իր դեմ կազմակերպված դավադրության հետևանքով: Նույն թվականի հուլիսի 6-ին Մեշհեդում շահ է հռչակվում նրա եղբորորդի Ալի Ղուլին, որը հայտնի էր նաև Ադիլ շահ անվամբ: Նրա անունից հրապարակված որևէ հրովարտակ Մատենադարանի արխիվներում չի պահպանվել: Սակայն Իրանի այս տիրակալը իր կարճատև իշխանության ընթացքում որոշ ժամանակով իր տիրապետությունն է հաստատել Արևելյան Հայաստանի շրջանների վրա և միջամտել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի խնդիրներին, մասնավորապես նաև Ղազար կաթողիկոսի նոր գահընկեցությանը 1748թ. գարնանը[81]:

1748թ. գարնանը (մինչև մայիսի 20-ն ընկած ժամանակահատվածում) Պետրոս Քյութուրը կաթողիկոս է ընտրվում[82]: Նույն թվականի վերջին Ադիլ շահի դեմ ապստամբում է նրա հարազատ եղբայրը՝ Իբրահիմ Միրզան և դեկտեմբերի 8-ին իրեն շահ հայտարարում: Ղազար կաթողիկոսի եղբայր Հովսեփ քահանան «պատշաճ ընծաներով ու միջնորդութիւններով յաջողեցաւ Ղազարի ազատութեան եւ կաթողիկոսութեան վերադառնալուն հրովարտակը ստանալ», որից հետո Ղազար կաթողիկոսը վերահաստատվում է Ամենայն հայոց կաթողիկոսության գահին [83]:

Ղազարի կաթողիկոսական իրավունքները վերահաստատող հրամանագիրը, ինչպես նաև Մայր Աթոռ Ս. Էջմիածնի իրավունքներին վերաբերող մի շարք այլ հրամանագրեր, որ ձեռք են բերվել 1748թ. դեկտեմբերին, պահպանվել են Երևանի Մատենադարանում և ներկայացվում են ստորև[84]:

Նադիր շահի մահից հետո Երևանի նահանգում, ինչպես և հարակից Ղարաբաղի ու Նախիջևանի նահանգներում նախկին բեկլարբեկությունները վեր են ածվում խանությունների: Անդրկովկասի հայաբնակ շրջանները ընդգրկվում են Երևանի, Նախիջևանի, Ղարաբաղի, Մակվի ու մի շարք այլ մանր խանությունների մեջ:

Քանի որ Մատենադարանի արխիվում պահպանվել է հիմնականում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրովարտակների ժողովածուն, ուստի համառոտ կանդրադառնանք Երևանի խանությունում դրանց ձեռք բերմանն ուղեկցող պատմական իրադարձություններին:

Երևանի խանությունը ի վիճակի չլինելով պահպանել իր անկախությունը՝ մեծապես տուժում էր նրա տարածքում անընդհատ տեղի ունեցող ռազմական ընդհարումներից և մերթ ընդ մերթ ընկնում հարևան Վրաց թագավորության կամ Իրանում ուժեղացած տիրակալների գերիշխանության տակ: Մատենադարանում այս շրջանից պահպանված պարսկալեզու հրովարտակները այս իրողության խոսուն վկաներն են:

[81] Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Բ, Ս. Էջմիածին, 2001, էջ 3423-26:
[82] Նույն տեղում, էջ 3426:
[83] Նույն տեղում, էջ 3429-30:
[84] Տե՛ս վավերագրեր 28 – 32, 34, 35:

XVIII դարի 50-ական թթ. սկզբին Իրանը տրոհվել էր մի շարք մանր իշխանությունների, որոնց կառավարիչները գրեթե մշտապես պայքարում էին միմյանց դեմ: Ատրպատականում իշխում էր Նադիրի զորավարներից մեկը՝ աֆղանական գիլզայի ցեղից Ազատ խանը:

Ինչպես ցույց են տալիս վավերագրերը[85], 1751 - 1755թթ. ընթացքում ժամանակ առ ժամանակ Ազատ խանը իրեն է ենթարկել Երևանի խանությունը և այնտեղից հարկագանձումներ կատարել:

Ըստ վրացական աղբյուրների 1751թ. Հերակլ Բ վրաց թագավորի զորքը Երևանի խանության տարածքում ընդհարում է ունենում Ազատ խանի զորքի հետ և հաղթանակ տանում[86]:

Այս շրջանում էլ հրապարակվել է վրաց Հերակլ թագավորի 1751թ. հրովարտակը Էջմիածնի *մուաֆության* իրավունքի հաստատման մասին[87]:

1757թ. հունիսին Մուհամմադ Հասան խան Ղաջարը վճռական հաղթանակ է տանում Ազատ խանի դեմ և իրեն հպատակեցնում Ատրպատականը[88]: Նրանից էլ հայ հոգևորականությունը ձեռք է բերում հրովարտակ Էջմիածնի նվիրակներից *ռահդարիի* գանձումը արգելելու վերաբերյալ[89]:

Որոշ ժամանակ անց, 1759թ. փետրվարին, Մուհամմադ Հասան խանը պարտվում է Քերիմ խանի դեմ պայքարում[90]:

1760-1763թթ. ընթացքում Քերիմ խանը իրեն է ենթարկում ողջ Ատրպատականը[91]: 1763 թվականից հետո, երբ Քերիմ խանը արդեն հավակնում էր իրեն ենթարկել նաև Անդրկովկասի տարածքները, հայ հոգևորականները նրանից ձեռք են բերում հրովարտակներ, որոնք ևս ընդգրկված են ժողովածուի մեջ:

1759թ. Հակոբ Շամախեցի կաթողիկոսը[92] Էջմիածնի վանքի իրավունքներին ու կալվածքներին վերաբերող 14 կետից բաղկացած մի խնդրագիր է ներկայացնում Երևանի Հուսեյն Ալի խանին[93] հաստատելու խնդրանքով, որը և հաստատում է[94]: Սիմեոն կաթողիկոսը այս հրամանագիրը 1763թ.

[85] Տե՛ս վավերագրեր 38, 40 – 47:
[86] Լ. Մելիքսեթ-բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Գ, Երևան, 1955, էջ 76, 169:
[87] Տե՛ս վավերագիր 39:
[88] Մ. Չամչյան, Հայոց պատմություն, հ. Գ, էջ 859; The Cambridge History of Iran, vol. 7, p. 75.
[89] Տե՛ս վավերագիր 48:
[90] The Cambridge History of Iran, vol. 7, p. 76.
[91] Նույն տեղում, p. 78.
[92] Տ. Հակոբ Ե Շամախեցի Ամենայն Հայոց Կաթողիկոս 1759 – 1763թթ:
[93] Երևանի խանն էր 1759 – 1783, որի հրապարակած մի շարք հրամանագրեր պահպանվել են Երևանի Մատենադարանում (ՄՄ, կաթողիկոսական դիվան, թղթ. 1գ, 417, 427, 428, 441-442, 444-7 և այլն):
[94] Այդ հրամանագիրը տե՛ս ՄՄ, կաթողիկոսական դիվան, թղթ. 1գ, վավ. 428:

(հիջրայի 1176թ.) վերահաստատելու է տալիս նույն խանին[95], իսկ հիջրայի 1177թ. (1763/1764թթ.) այն հաստատում է նաև Քերիմ խանը[96]: Այս փաստաթուղթը ժողովածուի մեջ ներկայացված է որպես վավերագիր 49:

XVIII դարի 60-70-ական թթ. Երևանի խանությունը գտնվում էր Իրանը իր իշխանության ներքո միավորած Քերիմ խան Զենդի ազդեցության շրջանակներում: Սակայն Վրաց թագավորությունը ևս ջանում էր Երևանի խանին տեսնել իր հպատակների շարքում և հարկագանձումներ կատարել, որի համար մի քանի անգամ ռազմական արշավանքներ է կազմակերպում դեպի նրա տարածքը: Սիմեոն Երևանցի կաթողիկոսը, որ հաճախ միջնորդի դեր էր կատարում Վրաց Հերակլ թագավորի ու Երևանի խանի միջև ընթացող բանակցություններում, 1765թ. իր հիշատակարանում մատնանշում է այն փաստը, որ Երևանի խանությունը ստիպված էր ծանր հարկեր վճարել ինչպես Քերիմ խանին, այնպես էլ վրաց թագավորին[97]:

1778 և 1779 թթ. Հերակլ Բ-ն նոր արշավանքներ է կազմակերպում, որպեսզի հարկադրի Երևանի խանին կատարել իր վասալական պարտականությունները[98]: 1782թ. Երևանի Հուսեյն Ալի խանը պարտավորվում է մնալ Հերակլ Բ-ի հարկատուն՝ նախկինի պես տարեկան նրան վճարելով 3000 *թուման*: Բացի այդ նա պարտավոր էր իր զորքով օգնել թագավորին: Խանեը նախքան իրենց իշխանության ժառանգելը անպայման պետք է հաստատվեին վրաց թագավորների կողմից: Փոխարենը Հերակլը խոստանում է պաշտպանել Երևանի խանությունը արտաքին ու ներքին թշնամիներից[99]:

Այս դեպքերից մի քանի ամիս անց է հրապարակվել վրաց արքայազն Գեորգիի հրովարտակը[100], որ զետեղել ենք սույն ժողովածուի մեջ: Հավաստի տվյալներ կան այն մասին, որ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը դեռ XVIII դարի սկզբից ճորտեր է ունեցել վրաց թագավորության տարածքում[101]: Գեորգի Միրզայի վերոհիշյալ հրամանագրով Միրզա Ահմադը իր ընտանիքով հաստատվում է որպես Մայր Աթոռ Ս. Էջմիածնի սեփականությունը և նրա կաթողիկոսների ծառան: Այս հրովարտակը արժեքավոր փաստեր է պարունակում Վրաց թագավորության գերիշխանության շրջանում նրան բնորոշ սոցիալ -տնտեսական կարգերի ազդեցությամբ Արևելյան Հայաստան ներթափանցող ճորտության

[95] ՍՄ, կաթողիկոսական դիվան, թղթ. 1գ, վավ. 429ա; Սիմեոն Երևանցի, Ջամբռ, էջ 190-191:
[96] Նույն տեղում, էջ 315:
[97] Դիվան հայոց պատմության, գիրք Գ, Սիմեոն կաթողիկոսի հիշատակարանը, մաս I, Թիֆլիս, 1894, էջ 209-210:
[98] Վ. Գրիգորյան, Երևանի խանությունը XVIII դարի վերջում, Երևան, 1958, էջ 31:
[99] Նույն տեղում, էջ 73:
[100] Տե՛ս վավերագիր 52:
[101] Սիմեոն Երևանցի, Ջամբռ, էջ 288; Б. М. Арутюнян, Крупное монастырское хозяйство в Армении в XVII – XVIII в.в, Ереван, 1940, с. 92.

երևույթների մասին: Միրզա Ահմադը ամենայն հավանականությամբ ընծայվել էր վրաց արքայորդու կողմից ավելի վաղ, սակայն ինչ-ինչ պատճառով 1782թ. օգոստոսի Ղուկաս Կարնեցու[102] նամակից մենք իմանում ենք, որ նրան նույն Գեորգի Միրզան ետ է պահանջել: Ըստ երևույթին այդ ճորտի ներկայությունը Էջմիածնում խիստ անհրաժեշտ է եղել, որովհետև նրան ետ կանչելու կապակցությամբ Ղուկաս Կարնեցին իր բողոքն է հայտնել ոչ միայն Գեորգի Միրզային այլև Հերակլ արքային հղված իր նամակներում[103]: Ի վերջո տեղի տալով կաթողիկոսի խնդրանքին վրաց արքայորդին վերադարձնում է Միրզա Ահմադին և հրապարակում ժողովածուի մեջ ընդգրկված հրովարտակը, որի համար Ղուկաս Կարնեցին շնորհակալություն է հայտնում նրան[104]: Մատենադարանի կաթողիկոսական դիվանի մի շարք վավերագրերի բովանդակությունից հայտնի է դառնում, որ Միրզա Ահմադն ու նրա որդի Միրզա Քյալբաալին եղել են Էջմիածնի պարսկալեզու գրագիրները[105], նրանց միջոցով է վարվել գրագրությունը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Երևանի խանի միջև[106]: Այս Միրզա Քյալբաալին է կազմել սույն ժողովածուի մեջ ընդգրկված Քերիմ խանի 1763/64թ. հրովարտակի[107] և Մատենադարանի կաթողիկոսական դիվանում պահվող մի շարք այլ փաստաթղթերի պատճենները[108]:

Իրանի Սեֆյան պետության անկումից հետո հատկապես ծանր դրության մեջ էին գտնվում Սյունիքի և Ատրպատականի հայ բնակչությունն ու հայոց վանքերը: Նրանք սաստիկ տուժում էին այդ տարածքներում հաճախակի տեղի ունեցող պատերազմական գործողություններից և ավազակային հարձակումներից: Այդ իրողությունները արտացոլվել են նաև նրանց վերաբերող հրովարտակներում:

Մատենադարանի կաթողիկոսական դիվանի երկու հրովարտակներ տրված են Մակվի Ս. Թադեի վանքին Նադիր և Իբրահիմ շահերի անուններից[109]: Այս հրովարտակները հաստատում են Ս. Թադեի վանքի ազատված լինելը հարկերից և հրահանգում տեղական իշխանություններին իրանա-

[102] Տ. Ղուկաս Ա Կարնեցի Ամենայն Հայոց Կաթողիկոս 1780 – 1799:
[103] Դիվան Հայոց պատմության, Գիրք Դ, Ղուկաս Կարնեցի (1780-1800), Թիֆլիս, 1899, էջ 420 –422, 425:
[104] Նույն տեղում, էջ 439 –440:
[105] Այն, որ Միրզա Քյալբաալին եղել է Միրզա Ահմադի որդին, հայտնի է դառնում հետևյալ փաստաթղթի բովանդակությունից. ՍՄ, կաթողիկոսական դիվան, թղթ. 1ե, վավ. 748:
[106] ՍՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1գ, վավ. 429ա; թղթ. 1դ, վավ. 519; 1ե, վավ. 593, 671:
[107] Տե՛ս վավերագիր 49:
[108] ՍՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1գ, վավ. 429ա; թղթ. 1ե, վավ. 615ա, դ, 617բ և այլն:
[109] Տե՛ս վավերագրեր 27, 36:

թուրքական սահմանագծին տեղի ունեցող անհանգստությունների ժամանակ անհրաժեշտ օգնություն ցուցաբերել վանքի հոգևորականներին: Այս հրովարտակները, որ հրապարակվել են առաջինը՝ 1743, իսկ երկրորդը՝ 1748 թվականներին, ունեն գրեթե նույն բովանդակությունը. այսինքն՝ Իբրահիմ շահի հրովարտակը հրապարակվել է ի հաստատումն Նադիր շահի հրովարտակի: Այնուամենայնիվ այս հրովարտակները չէին կարող երաշխավորել վանքի ապահովությունը այդ տարածքներում անընդմեջ շարունակվող երկպառակչական կռիվների ընթացքում:

1758թ. Էջմիածնի կաթողիկոսի տեղապահ Հակոբ Շամախեցու կողմից Ս. Թադեի վանքի առաջնորդ Մինաս վարդապետին ուղղված կոնդակում նշվում է այս ընթացքում հիշյալ վանքի կրած բազում վնասների, նրա խղճալի դրության ու պարտքերի մասին[110]:

1762թ. Ազատ խանի զորավար Ֆաթհալի խանի զորքի կողմից աղետալի ավարառության է ենթարկվում Սյունիքի Տաթևի վանքը, որի ընթացքում սպանվում է նաև վանքի առաջնորդ Հովհաննես վարդապետը[111]:

Ավազակային հարձակումներից պաշտպանված չէր նաև Դարաշամբի Ս. Ստեփաննոս Նախավկայի վանքը, որի մասին է վկայում ժողովածուի մեջ ընդգրկված վավերագիր 51 -ը: Առավել պատկերավոր է նկարագրված այս վանքի ծանր դրությունը Սիմեոն Երևանցու 1770թ. կոնդակում. «… թէպէտ ամենայն տունս Արևելեան կայ միշտ 'ի նոյն վրդովման բայց առաւել յոյժ տունն Նախիջևանու վասն յոլովութեան ինքնագլուխ բռնավորաց որք կան անդ: Որք յամենայն ամի զմիմեամբք անկեալ և զբազմաթիւ հեծելազօրաց աստի և անտի յօգնութեան իւրեանց յասեալ զբազում վնասս և զյոլով աւերութիւնս ածին 'ի վերայ երկրին այնմիկ, մանաւանդ 'ի վերայ սրբոյ վանորէիցն որք անդ: Յորոց վրդովմանց և հեծելաշարժութեանց քանիցս անգամ կողոպտեցաւ և աւերեցաւ հրաշազարդ ուխտն Սրբոյն Ստեփաննոսի Նախավկային և իսպառ աղքատացաւ և չքաւորեցաւ թէ յեկեղեցական զարդուց, թէ արտաքին վայելչական իրաց և թէ ի կերլեաց»[112]:

Քերիմ խանի մահից հետո (1779թ.) սկսվում է Աղա Մոհամմադ խան Ղաջարի պայքարը Իրանը իր իշխանությանը ենթարկելու համար: Պայքարելով Քերիմ խան Զենդի հետնորդների դեմ՝ վերջինիս հաջողվում է մինչև 1786 թվականը իր իշխանությունը հաստատել գրեթե ողջ Իրանում: Այս ժամանակվանից նա իրեն համարում էր Իրանի տիրակալը, թեև հրաժարվում էր «շահ» տիտղոսից:

Աղա Մուհամմադ խանի հրովարտակներից երկուսը հրապարակվել են վերջինիս կողմից 1795 թվականին Անդրկովկասում իրականացրած արշավանքի ընթացքում: Դեռևս նախքան իրանական զորքերի մոտենալը Երևանին, Աղա Մուհամմադ խանը 1795թ. հուլիսի 1-ի հրովարտակով[113] ապահովություն է խոստանում Մայր Աթոռ Ս. Էջմիածնին: Այնուամենայնիվ, վանքը հարկադրված է լինում ծանր փրկագին վճարել հուլիսի վերջերին Չարբախում հաստատված իրանական բանակի զորավար Ալի Ղուլի խանին[114]: Վերջինիս անունից ևս հիշյալ ժամանակահատվածում հրապարակվել են հրամանագրեր, որոնցով զորավարը կաթողիկոսին ու Էջմիածնի վանքին ապահովություն է խոստանում և հորդորում հանգիստ լինել, քանի որ այդ մասին ստացվել է շահի հրամանը[115]:

Թանկարժեք նվերների գնով է ձեռք բերվում նաև Աղա Մուհամմադ խանի հաջորդ հրովարտակը[116], որը հրապարակվել է Թիֆլիսի ավերածությունից հետո, հոկտեմբեր ամսին, և կաթողիկոսին հանձնվել Երևան ուղարկված Սուլեյման Սարդարի ձեռքով[117]:

Աղա Մուհամմադ խանի արշավանքը մեծ վնասներ է հասցնում Անդրկովկասի խանություններին և նրա ծանր հետևանքները, սովն ու ավերածությունները զգալի են լինում ողջ 1796թ. տարվա ընթացքում թե' Ղարաբաղի և թե' Երևանի շրջաններում: 1796թ. ռուսական զորքերը կոմս Վ. Ա. Զուբովի գլխավորությամբ արշավանք են սկսում Անդրկովկասում, որի ընթացքում գրավում են նախ Դերբենդը, ապա երկարատև պաշարումից հետո դեկտեմբերին՝ նաև Գանձակը:

Մեծ հույսեր կապելով Անդրկովկասում Ռուսաստանի առաջխաղացման հետ՝ Ղուկաս Կարնեցի կաթողիկոսը չի անտեսում նաև Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հանդեպ Իրանի տիրակալի դրական վերաբերմունքի պահպանման կարևորությունը: Այս նպատակով 1796 թվականի դեկտեմբերին կաթողիկոսը Դավիթ ու Հովհաննես վարդապետների միջոցով ընծաներ է ուղարկում շահին՝ հայտնելու իր հնազանդությունը նրան և հրովարտակ խնդրելու: Կաթողիկոսի պատվիրակները շահի բարեհաճ ընդունելությանն են արժանանում ու հրովարտակով վերադառնում[118], որն էլ սույն ժողովածուի մեջ ընդգրկված վերջին հրովարտակն է: Ղուկաս Կարնեցին շահի մոտ ունեցած իր հեղինակությունն օգտագործում էր Երևանի խանի ոտնձգություններից պաշտպանվելու համար[119]: Ուստի պատահական չէ, որ 1795 և 1797 թվականներին Ղուկաս Կարնեցու ջանքերով ձեռք բերված Աղա Մուհամմադ շահի հրովարտակներում հատուկ հանձնարարականներ կան ուղղված Երևանի խանին, որպեսզի վերջինս «բարեկամաբար վարվի

[110] ՄՄ, կաթողիկոսական դիվան, թղթ. 244, վավ. 364:
[111] Դիվան հայոց պատմության, գիրք Գ, հ. Ա, էջ 57 - 62:
[112] ՄՄ, կաթողիկոսական դիվան, թղթ. 244, վավ. 271:

[113] Տե՛ս վավերագիր 53:
[114] Ղուկաս Կարնեցի, Դիվան հայոց պատմության, կազմեց Վ. Գրիգորյանը, գիրք I, հատոր Ա, Երևան, 1984, էջ 30:
[115] ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1դ, վավ. 521, 522
[116] Տե՛ս վավերագիր 54:
[117] Ղուկաս Կարնեցի, Դիվան հայոց պատմության, գիրք I, հ. Ա, էջ 30:
[118] Դիվան հայոց պատմության, հ. Ա-Բ, Թիֆլիս, 1893, էջ 31:
[119] Ղուկաս Կարնեցի, Դիվան հայոց պատմության, գիրք I, հ. Ա, էջ 31:

կաթողիկոսի հետ, օժանդակի նրան և հարգանքը նրա նկատմամբ պարտադիր համարի»[120]:

* *
*

Այսպիսով, ընդգրկված հրովարտակները հրապարակված են ոչ միայն Իրանի շահերի, այլև նրա միանձնյա կառավարմանը հավակնող իշխանավորների, վրաց թագավորի ու նրա թագաժառանգի կողմից: Այս հրովարտակները նախորդ՝ Սեֆյան շրջանի շահական հրովարտակներից տարբերվում են իրենց թե' արտաքին և թե' ներքին, բովանդակային առանձնահատկություններով:

Դիտարկվող ժամանակաշրջանում հրապարակված հրովարտակները ավելի հակիրճ են, ենթարկվել են ոճական և դարձվածաբանական փոփոխությունների: Նրանցում բացակայում է զանազան խնդիրների առնչությամբ մահմեդական հոգևորականների բարձրագույն ատյանների *դիվան-աս-սադարաթի* և *շար'ի* որոշումները (*միսալ* և *ֆաթվա*) բովանդակող մասերը, որը թերևս հետևանք է այդ շրջանում Իրանում ընթացող վարչա-քաղաքական փոփոխությունների և բարձրաստիճան հոգևորականության դերի որոշ նվազման: Թե' արտաքին և թե' բովանդակային որոշակի փոփոխություններ են կրել նաև շահական ու իշխանական կնիքները:

Ժողովածուի կազմության ընթացքում հետևել ենք «Մատենադարանի պարսկերեն հրովարտակների» նախորդ պրակներում մշակված սկզբունքներին:

Չվերծանվող, ջնջվելու կամ պատռվածքի հետևանքով անընթեռնելի բառերն ու տեքստային հատվածները նշված են բազմակետերով՝ …: Անկյունաձև [] փակագծերի մեջ առնված բառերը կամ բառերի խմբերը ավելացվել են տեքստի բովանդակությունը ավելի հասկանալի դարձնելու նպատակով:

Քանի որ հայերենում չկա պարսկերենի տառադարձման որևէ համընդհանուր ընդունված տարբերակ, ուստի տվյալ դեպքում հետևում ենք Հ. Փափազյանի կողմից օգտագործված տարբերակին, երբ «հարկային, սոցիալական, վարչական և այլ տերմինները, ինչպես նաև աշխարհագրական անուններն ու օտար անձնանունները մեծ մասամբ տրված են բնագրի պարսկական արտասանությամբ, բացի մի քանի տերմիններ ու անուններ, որոնք մեր գրականության մեջ տրադիցիոն կերպով արմատացել են հատուկ՝ տեղական արտասանությամբ. ինչպես օրինակ՝ «վիլայեթ», «մելիք» և այլն»[121]:

[120] Տե՛ս վավերագրեր 54 և 55:
[121] Հ. Դ. Փափազյան, Մատենադարանի պարսկերեն հրովարտակներ, պրակ 1, Երևան, 1956, էջ 39:

ՎԱՎԵՐԱԳԻՐ 1

Նադիր խանի 1734թ. հրամանագիրը, որով Գեղարքունիքի Մելիք Միանսարին կարգադրվում է հետախույզների միջոցով տեղեկություններ հայթայթել օսմանյան զորքերի մասին

Մելիք-Շահնազարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ 124,
բնագիր՝ վնասված, մեծ. 20 x 32սմ, գիր՝ շիքասթե, նասթալիղ

Բարձրյալ Ալլահին եմ ապավինում:

Գերագույն հրաման եղավ, որպեսզի բարձրաստիճան ու պատվարժան … *մահալի մելիք* Մելիք Միանսարը … [տեղյակ լինի, որ] որպես հնազանդ հպատակ … սրբազնագույնին [հղված] ուղերձը, նրա ու մյուս *քյադխուդաների* Գյոքչա գնալու մասին … արժանացավ [նրա] բարյացակամ ուշադրությանը, և բովանդակությունը զեկուցվեց արդարադատ մտքին:

… ծառայության կապակցությամբ, այլ ուղի չկա, որովհետև, եթե Բարձրյալ Ալլահը կամենա, Նրա զորությամբ շուտով Երևանը կնվաճենք …

Պետք է իր պատիվը բարձր պահի, այլապես եթե իր ծառայություններում թերանա, կպատժվի…

Իսկ այն կապակցությամբ, որ զեկուցել է, թե խարդախների մի խումբ է ի հայտ եկել, որ նրա թշնամիներն են ու նրանից չարախոսում են… եթե նա [իր ծառայություններում] անձնվիրություն հանդես բերի, ապա բարձր *վաքիլները* այդ դավադիրների խոսքը չեն լսի …

Անհրաժեշտ է, որպեսզի մի քանի հմուտ հետախույզ ուղարկի Երևանի կողմերը, որպեսզի գնան հետազոտեն, թե Օսմանյան զորքերը … և այլ ամրոցներում, և [նրանց] իրական վիճակի մասին տեղեկացնեն այն պատվարժան բարձրաստիճան անձին, որն էլ [այդ մասին Նորին] Մեծությանը կզեկուցի, որպեսզի համապատասխան … հրահանգներ տրվեն… Այս հարցում թող անհրաժեշտ ջանասիրություն ցուցաբերի և իր խորամտությունը ի ցույց հանի … խնդիրների ու պահանջների մասին թող զեկուցի… Այս թող ընդունի որպես խիստ կարգադրություն, բոլոր ջանքերը գործադրի [նրա կատարման համար] ու այն համարի իր պարտականությունը:

[Գրվեց 1146 թվականի] զի ղաադե [ամսին][122]:

[122] 1734թ. ապրիլի 5 – մայիսի 5:

Վ Ա Վ Ե Ր Ա Գ Ի Ր 2

Նադիր խանի 1734թ. հրովարտակը, որով Դովշանլու գյուղի ավագերեց Դավիթը հաստատվում է այդ և Խաչենի մի քանի այլ գյուղերի ավագի պաշտոնում

Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 2բ, վավերագիր 182, բնագիր[123], մեծ. 23 x 33,2 սմ, գիր՝ շիքասթե, նասթալիղ

Հանուն գթառատ և ողորմած Ալլահի
Բարձրյալին եմ ապավինում:

Գերագույն հրաման եղավ, որպեսզի խնդրարկուն ծանոթանալով բարձրագույն *ռաղամի* բովանդակությանը, ձեռնամուխ լինի հիշյալ *մահալի* ավագի գործերին, հավաքի այդ *մահալի ռայաթներին*, և նրանք զբաղվեն իրենց գործերով, որովհետև ոչ ոք չի նեղելու նրանց: Ամեն առումով թող հանգիստ ու սրտապնդված լինեն, որովհետև հաղթական մարտիկները կարգադրությանը համապատասխան այդ *մահալների ռայաթներին* չեն անհանգստացնելու: Կարգադրությանը չպետք է հակառակվեն և այն ընդունելով որպես խիստ կարգադրություն՝ ջանք չխնայեն [նրա կատարման հարցում]: Թող այն իրենց պարտականությունը համարեն:

Գրվեց 1147 թվականի ջումադի առաջին ամսի 16-ին[124]:
[Կնիք]. «Չկա [ավելի] արժանավորը քան Ալին է, չկա այլ սուր, բացի Զուլֆիկարը[125]: Ալլահի կամքով միակն[126] եմ և ութնյակի ու քառյակի[127] ծառան[128]»:

Ամենանվաստ օրհնաբանող ծառաներ Դովշանլու գյուղի Դավիթ ավագերեցի ու Խաչենի *մահալի* մյուս խեղճ *ռայաթների* խնդրագիրը

Արքայական երկնային բարեբախտ Մեծության հիմքը վերագտնողների բարձրությանը զեկուցում է [հետևյալը]. «Իշխանազուրկ Սուրխայի չարաբաստիկ լեզգիները Դաղստանի զորքերը հավաքագրած այս տարի թշվառներիս *մահալը* լցվեցին, շուրջ 4600 հոգու՝ մեծ ու փոքր, թե' այր, թե' կին, գերի տարան, տներն ու նրանցում եղած-չեղածը ամբողջովին այրեցին, հացահատիկի ողջ բերքը հորերից հանելով, կերան, ցանքսերում արածեցրին [իրենց չորքոտանիներին], ոտնատակ տվեցին ու ոչնչացրեցին դրանք: Այսպիսի բռնություն ու աղետ տեղի ունեցավ թշվառներիս հետ: Մի մասն էլ, որ չէր գերվել ու *մահալում* էր մնացել, օրվա հացի կարոտ ու կարիքավոր մարդիկ են: Որոշ անձիք թշվառներիս հանդեպ չարաշահումներ են անում ու նեղում: Այս պատճառով [*ռայաթները*] փախուստի են դիմում դեպի այլ *վիլայեթ* ու ցրվում: Խնդրում ենք որպես արքայական գերագույն սրբազնագույն ու ազնվագույն առանձնահատուկ ողորմություն գրավոր [հրամանագրով] մի քանի տարվա *մուաֆություն* շնորհ անել խեղճերիս, որպեսզի միգուցե հիշյալ *մահալը* վերականգնվի, նաև հիշյալ հոգևորականին շնորհել ավագի ու *մելիքի* պաշտոնը, որպեսզի նա մշտապես պատերազմելով Ռումի (Օսմանյան Թուրքիա) չարամիտ զորքերի դեմ՝ անձնազոհ արարքներ գործի հանուն հավատի ու հաղթական պետության, քանզի համաձայն է ամեն հարցում հոգ տանել խեղճերի մասին: Ըստ Ձերդ Մեծության բարձրագույն հրամանի»:

Վ Ա Վ Ե Ր Ա Գ Ի Ր 3

Նադիր խանի 1734թ. հրամանագիրը Խաչենի շրջանից սուրսաթ հարկի գանձման կապակցությամբ

Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 2բ, վավերագիր 162, բնագիր, մեծ. 16 x 22 սմ, գիր՝ շիքասթե, նասթալիղ

Անուններից լավագույն Ալլահի անունով
Բարձրյալին եմ ապավինում:

Գերագույն հրաման եղավ, որպեսզի խնդրարկուն իմանա, որ բարձրագույն միտքը վերահասու եղավ զեկուցման բովանդակությանը: Ամեն առումով պետք է վարվեն այնպես, ինչպես կարգադրվել է *մուհասիլին*. 1100 *խարվար* հացահատիկից, որ *ռայաթները* պարտավորվել են, այն, ինչ, որ մնացել է, պետք է կրեն ու տեղափոխեն բարձրագույն բանակատեղին, մյուս մասն էլ ամբողջովին նախապատրաստեն *հավալե* [ունեցող] զինվորականներին փոխանցելու համար: Եվ թող այս իրենց պարտականությունը համարեն:

Գրվեց 1147 թվականի պաշտելի ռաջաբ ամսին[129]:
[Կնիք][130]:

---

[123] Այս վավերագրի նոտարական պատճենը ևս պահպանվել է նույն արխիվում (ՍՄ, կաթողիկոսական դիվան, թղթ. 2բ, վավ. 186):
[124] 1734թ. հոկտեմբերի 15:
[125] Ալիի սրի անունն է:
[126] Բառախաղ Նադիր անվամբ և նրա նշանակությամբ:
[127] Խոսքը 12 շիա իմամների մասին է:
[128] Այս կնիքը դրոշմված է հրամանագրի տեքստից հետո այն հրովարտակներում, որոնք հրապարակվել են մինչև Նադիրի պաշտոնական թագադրությունը Մուղանի դաշտում 1736թ. մարտի 6-ին (տե'ս վավերագրեր 2-4, 6, 9, 10): Հետագա շրջանի Նադիրի հրովարտակներում դրոշմած են երկու այլ կնիքներ հրամանագրի վերին մասում (համեմատի'ր նաև Тбилисская коллекция персидских фирманов, т. II, Тбилиси, 1989, док. 21 и док. 22-42):
[129] 1734թ. նոյեմբերի 27 - դեկտեմբերի 27:
[130] Տե'ս վավերագիր 2-ի կնիքը:

Ամենանվաստ ծառա Խաչենի *մահալի* ներկայիս *մելիք* Դավթի խնդրագիրը

Խոնարհաբար զեկուցում է գերագույնին [հետևյալը]. «*Մուհասիլ* Իսֆանդիար *բեկին* ու Ջավադ *բեկին* տրված անվերապահորեն գործադրության ենթակա բարձրագույն *ֆիրմանով* Խաչեն *մահալի սուրսաթը*, որ 1500 *խարվար* է, հավաքել ու նախապատրաստել ենք: Սակայն այս *մահալը* ավերված է, *ռայաթները* բեռնակիր ավանակներ չունեն, որպեսզի կարողանան այն տեղափոխել բարձրագույն բանակատեղին: Խնդրում ենք գերագույն հրաման շնորհել, որպեսզի հավատի մարտիկների բեռնակիր կենդանիներից բերեն և պարենը, որ հավաքվել է, տեղափոխեն հաղթական բանակատեղին: Մնացյալն [ըստ] Նորին [Մեծության] բարձրագույն հրամանի»:

[Հակառակ կողմում]

Գրանցվեց հակիրճ գրանցումների *սարդեշթեում*:

[Կնիք]. «… Դավիթ»[131]:

ՎԱՎԵՐԱԳԻՐ 4

Նադիր խանի 1734թ. հրամանագիրը, որով կարգադրվում է չնայած ծագած դժվարություններին, Խաչենից անթերի կերպով սոյուրսաթ հարկը գանձել ու սուրհանդակի ձի տրամադրել

Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 2բ, վավերագիր 181, բնագիր, մեծ. 14 x 22,2 սմ, գիր՝ շիքասթե, նասթալիղ

Անուններից լավագույն Ալլահի անունով
Բարձրյալ Ալլահին եմ ապավինում:

Գերագույն հրաման եղավ հետևյալի մասին, որպեսզի խնդրարկուն իմանա, որ նրա խնդրագիրը ուշադրության արժանացավ և նրա բովանդակությունը զեկուցվեց [Նորին] Մեծությանը: *Սոյուրսաթի* կապակցությամբ խնդրագրում ներկայացված պատճառաբանությունները ընդունելի չեն: Ծանուցումը ստանալուն պես պետք է *մուհասիլների* հետ շտապ առաջին և երկրորդ *սոյուրսաթները* հավաքի և ուղարկի առանց հապաղելու, որովհետև պարենը հաղթական զորքերին անհրաժեշտ է: Ինչ վերաբերում է սուրհանդակի ձիերին, թող մի քանի լավ, վարժեցրած ձի ձեռք բերի ու տրամադրի, որպեսզի սուրհանդակը չխեղճանա ու չուշանա: Սուրհանդակի ձին թող առանց բարձր *ֆերմանի* որպես *իխրաջաթ* չտան, այլ տան նրան, ով *հոքմ* կունենա: Թող այս իրենց պարտականությունը համարեն:

Գրվեց 1147 թվականի շա'բան ամսին[132]:

[Կնիք][133]:

[131] Կնիքը հայերեն է:
[132] 1734թ. դեկտեմբերի 27 – 1735թ. հունվարի 25:
[133] Տե՛ս վավերագիր 2-ի կնիքը:

Ամենանվաստ ծառա Մելիք Դավթի խնդրագիրը

Ալեքսանդրի փառքը վերագտած իմ հովանավորի բարձրությանը հասցնում է [հետևյալը]. «Ալեքսանդրի փառքն ունեցող իմ հովանավոր Նորին Մեծությանը զեկուցել են, որ այս *մահալը* ավերված *մուլքերից* է, և նախկին *սոյուրսաթը* դեռ ամբողջովին չավարտված, [Նորին Մեծության] շնորհված երկրորդ *ռաղամը* ստացվեց: Իմ ապավեն, այս *մահալում* ընդամենը չորս գյուղ կա, յուրաքանչյուրում՝ 10-15 ընտանիք, նախկին և երկրորդ *սոյուրսաթներից* ամեն գյուղին բաժին է ընկնում 928 *խարվար*: Իմ ապավեն, *ռայաթների* կյանքը, ունեցվածքն ու պատիվը ամբողջովին Ալեքսանդրի փառքն ունեցող իմ հովանավորինն են: Այն ամենը, ինչ ունենք, Ալեքսանդրի փառքին արժանի իմ հովանավորի հաղթական զորքերի համար նախապատրաստում ենք: Նվաստս իմ գյուղում *սարքարի սոյուրսաթչիներին* էի [հարկը] փոխանցում, որ լուր հասավ, թե Խնձրիստանի *քյաղխոդա* Պողոսը գիշերով ամբողջ գյուղն առած փախուստի է դիմել: Մի քիչ հացահատիկ էր հավաքել, մնացածը մնացել է: Եվ այժմ այս *մահալում* մնացել է երեք գյուղ: Այն ամենը, ինչ կա, շնչավոր և անշունչ ունեցվածքից, բոլորը Նորին Մեծություն Ալեքսանդրի փառքին արժանի իմ հովանավորի սպասավորներինն է: Որովհետև անհրաժեշտ էր, իմ բարերարին զեկուցվեց: [Սպասում ենք] իմ ապավենի սպասավորների հրամանին: Ըստ բարձրագույն հրամանի»:

Նա է:

Խնդրագրից հետո Ալեքսանդրի փառքին արժանի իմ հովանավորին է հասցնում [հետևյալը]. «Որովհետև Խաչենի *մահալի* վրա հինգ սուրհանդակի ձիու պատրաստել և հինգն էլ Մելիք Իսրայելինն էին, որը Խաչենի *մահալի* Ղազանչի գյուղում էր: Սակայն Խաչենի հինգ ձիերից երկու-երեքը շարքից դուրս են եկել, երկուսն էլ վնասված են: Մելիք Իսրայելի հինգ ձիերն էլ տարան նրա մոտ, [այն վայրը], որ գտնվում է Ջրաբերդից ու Վարանդայից մեկական *մանզիլ* հեռավորությամբ: Մելիք Իսրայելը նվաստիս հակառակորդն է: Երբ նրա գյուղը սուրհանդակ է գալիս, մեկի հետ ուղարկում է Խաչենի *մահալը:* Խաչենի [այս *մահալում*] ընդամենը չորս գյուղ կար, որոնցից մեկը փախուստի է դիմել: Մնացել են երեք գյուղեր, որոնք ի վիճակի չեն *սոյուրսաթ* վճարել: Ողորմած տեր, խնդրում ենք օրհնյալ *ռաղամ* շնորհել, որպեսզի սուրհանդակը *ռայաթներին* նեղություն չպատճառի, թույլ տա մեր *սոյուրսաթով* զբաղվենք: Եվ այս Ալլահն ու Ալլահի մարգարեն անտես չեն առնի: Ըստ բարձրագույն հրամանի»:

[Հակառակ կողմում]

Գրանցվեց հակիրճ գրանցումների *սարդեշթեում*:

[Կնիք]. «… Դավիթ»[134]:

[134] Կնիքը հայերեն է:

ՎԱՎԵՐԱԳԻՐ 5

Նաղիր խանի 1735թ. հրովարտակը, որը հաստատելով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մուաֆության իրավունքը, արգելում է անօրինական հարկերի գանձումը Երևանի նահանգի հայկական վանքերից ու հոգևորականներից

Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 1գ, վավերագիր 355, պատճեն,
մեծ. 22,5 x 30,5 սմ, գիր՝ շիքասթե, նասթալիղ

Անուններից լավագույն Ալլահի անունով
Ալլահին եմ ապավինում:

Գերագույն հրաման եղավ, որպեսզի խնդրարկու քրիստոնյա քահանայապետի խնդրանքով և նրա շահերը հաշվի առնելով՝ ոչ ոք ոչ մի դեպքում չնեղի նրան ենթակա Երևանի *մահալի* վանքերի սևագլուխներին, քահանաներին ու սպասավորներին, նրանցից որևէ բան չպահանջի, [նրանց] չանհանգստացնի և վնաս չհասցնի: Այս թող ընդունեն որպես խիստ կարգադրություն և իրենց պարտականություն համարեն:

Գրվեց 1148 թվականի սրբազան մոհարրամ ամսի 24-ին[135]:

Ալեքսանդրի փառքին արժանի բարեբախտ Նորին Մեծության օրինյալ կնիքի տեղն է:

Ամենանվաստ օրհնաբանող ծառա Ուչքիլիսայի Աբրահամ կաթողիկոսի
խնդրագիրը

Գերագույն, Ալեքսանդրի փառքին արժանի Նորին վեհապանծ Մեծության հանգրվանածների երկնահաս գահի բարձրությանը խոնարհաբար հասցնում է [հետևյալը]. «Իմ հովանավոր Նորին Մեծության պետության կյանքը թող հարատև լինի և ծառաներիս կյանքը թող Նրա երիվարների սմբակների տակի հողը դառնա, որ ծառաներիս մեծագույն ողորմածության արժանացնելով, իր գթառատ հայացքով պատվեց: Քանի որ Երևանի [նահանգի] տարբեր կողմերում, յուրաքանչյուր գյուղում եղած վանքն ու եկեղեցին պատկանում է այս Ուչքիլիսային, ուր Ձեզ օրհնաբանող այս ծառան աղոթքներով ու օրհնանքներով է զբաղվում, բոլոր սևագլուխներն ու նրանց ծառաները շնորհված *ռաղամների* հիման վրա սրանից առաջ *մուաֆ* ու *մուսալլամ* են եղել, և լինելով գյուղերից առանձնացված, չեն մասնակցել նրանց *իխրաջաթի* վճարմանը: Այժմ Ձեզ օրհնաբանող ծառան լսել է, որ նվաստիս ենթակա սևագլուխներին, գյուղերում նեղություն պատճառելով, *իխրաջաթ* են պահանջում: Մինչ այժմ մեծահոգաբար *իխրաջաթի* անվան տակ ոչինչ չի գանձվել: Պարզապես անօրինականություն է: Խնդրում ենք Նորին Մեծություն մեր ապավենին, որի արդարությունն ու մեծահոգությունը

[135] 1735թ. հունիսի 17:

ակնհայտ են, որպես գերագույն օրինյալ ողորմություն, մի հրամանագիր շնորհել, որպեսզի ոչ ոք նվաստիս ենթակա վանքերի ու եկեղեցիների սևագլուխներին ու ճգնավորներին որևէ պահանջով չանհանգստացնի, և հանգիստ աղոթքներով զբաղվենք: Եվ այդ Ալլահն անտես չի առնի: Մնացյալն [ըստ] Նորին [Մեծության] բարձրագույն հրամանի»:

[Հակառակ կողմում]
Հանուն Ալլահի

Հիշյալ *սավադը* համապատասխանում է խնդրագրին կցված օրինյալ, արեգակնային կնիքով հաստատված *ռաղամի* բնագրին, գրող՝ Ձեզ համար աղոթող …, [կնիք];

Գրանցվեց հակիրճ գրանցումների *սարրեշթեում*;

[Հայերեն]՝

Աբրահամ կաթուղիկոսն արզ առնէ Նատր շահին յաւուրս … թէ 'ի բնէ ամենայն վանորայք հայոց ազատ են 'ի թագաւորական հարկաց, այլ այժմ մի միաբանից վանորէից ևս ջանան առնուլ զհարկ, առ որ և Նատր խանն զհրաման գրէ զի մի ինչ պահանջեսցէն:

ՎԱՎԵՐԱԳԻՐ 6

Նաղիր խանի 1735թ. հրամանագիրը, որով արգելվում են Երևանի նահանգի պաշտոնյաների ոտնձգությունները Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եկամուտների նկատմամբ

Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 1գ, վավերագիր 353, բնագիր,
մեծ. 25,5 x 38,8 սմ, գիր՝ շիքասթե, նասթալիղ

Նա է:
Անուններից լավագույն Ալլահի անունով
Բարձրյալ Ալլահին եմ ապավինում:

Գերագույն հրաման եղավ հետևյալ կապակցությամբ.

Քանզի խնդրարկու քրիստոնյա քահայապետը ստորև շարադրվածով դիմել էր ու խնդրել, ուստի կարգադրեցինք, որպեսզի Երևանի *օլքայի բեկլարբեկ*, բարձրաստիճան մեծ *ամիր-ալ-ումարա* Մուհամմադ Ղուլի խանն ու *ամիրները* ամեն առումով նրանց հետ վարվեն այնպես, ինչպես, որ ընդունված էր անցյալում, ըստ նախկին կարգի և ղզլբաշների ժամանակների հաշվի առնեն խնդրարկուի ու սևագլուխների շահերը, որպեսզի [նրանք] հանգիստ ու ապահով հավաքեն ու տնօրինեն իրենց բերքը: Եվ ոչ ոք չպետք է [նրանց] նեղություն պատճառի: Թող այս ընդունեն որպես խիստ կարգադրություն և իրենց պարտականությունը համարեն:

Գրվեց 1148 թվականի հաղթական սաֆար ամսի 17-ին[136]:
[Կնիք][137]:
Կարգադրվեց, որպեսզի պատվարժան *վաքիլ* ու *զաբիթ* Միրզա Քազիմը և նրա գրչակից Միրզա Քազիմը որոշմանը համապատասխան գործադրեն ու ըստ գերագույն *ֆերմանի* վարվեն: Վերջ:
[Կնիք][138]:

Ամենանվաստ օրհնաբանող ծառա Ուչքիլիսայի Աբրահամ
կաթողիկոսի խնդրագիրը

Գերագույն, Ալեքսանդրի փառքին արժանի Նորին վեհապանծ Մեծության երկնահաս գահին հանգրվանածների բարձրությանը խոնարհաբար հասցնում է [հետևյալը]. «Ձեզ օրհնաբանող ծառաների կյանքը թող Նրա երիվարների սմբակների տակի հողը դառնա: Ինչպես, որ բոլորին հայտնի է, օրհնաբանող ծառաներիս հանգրվանը հանդիսացող վանքում ամեն օր 500-ից ավելի մարդ. սևագլուխներ, քահանաներ, [վանքի] սպասավորներ, գնացող-եկող ճանապարհորդներ, խեղճեր ու աղքատներ [հաց] են ուտում: *Վիլայեթի* խառնակ դրության պատճառով տարբեր կողմերից դադարել է եկամուտներն ու ապրուստի միջոցների հոսքը, և նվաստներս ծանր դրության մեջ [ենք հայտնվել]: Իսկ ունեցած բերքին վնաս է հասցվել հաղթական զորքերի կողմից: Սրանից առաջ. թե' պարսիկների, և թե' օսմանցիների օրոք մեր ձեռքին եղած *ռաղամների, ֆերմանների* և *հոքմերի* հիման վրա բոլոր պարտավորություններից *մուաֆ* ու *մուսալլամ* ենք եղել, ոչ ոք նվաստներիս բերքին չի մոտեցել: Մեր ծեծված գլուխը բարձր ենք պահել և ոչ ոք չի խոչընդոտել: Այժմ, երբ Նորին Բարեբախտ Մեծություն մեր ապավենը ճակատագրի զորությամբ օրհնաբանող ծառաներին մեծ ողորմածությամբ պատվել է իր այցելությամբ, և [խոստացել]. «Ձեզ գթալու ենք Ձեր բերքին հասցված վնասի համար», Նորին Մեծությանը, որի մեծահոգությունը ակնհայտ է, խնդրում ենք որպես գերագույն, օրհնյալ ողորմություն հրամանագիր շնորհել, որպեսզի նախկինի պես մեր բերքը տնօրինենք, և *զաբիթներից, սարքարներից* և այլ ոչ ոք նվաստներիս չխոչընդոտի և բարի օրհնանք հղվի: Մնացյալն [ըստ] Նորին [Մեծության] բարձրագույն հրամանի»:
[Հակառակ կողմում]
Գրանցվեց հակիրճ գրանցումների *սարրեշթեում*:
[Հայերեն]՝
[Աբրահամ կաթողիկոսի կնիքը],
Նատր շահի ռաղամն վասն Սրբոյ Աթոռոյս որ ամենի դիմաց չնեղացնեն և զմահսուլ չչափեն վանքիս, 'ի ՌՃԽԸ:

[136] 1735թ. հուլիսի 10:
[137] Տե'ս վավերագիր 2-ի կնիքը:
[138] Տե'ս վավերագիր 2-ի կնիքը:

ՎԱՎԵՐԱԳԻՐ 7

Նադիր խանի 1735թ. հրովարտակը, որով արգելվում են անօրինականությունները Մայր Աթոռ Ս. Էջմիածնից դեպի նրա Թավրիզում ու Դեհխարղանում գտնվող կալվածքները գնացող-եկող անձանց ու նրանց բեռնակիր կենդանիների նկատմամբ

Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 1գ, վավերագիր 886, պատճեն[139]
գիր՝ շիքասթե, նասթալիղ

Նադիր շահի *ֆերմանը* Ուչքիլիսայի Թավրիզում և Դեհխարղանում գտնվող *մուլքերի* կապակցությամբ
Անուններից լավագույն Ալլահի անունով

Արքայական աշխարհասաստ հրաման եղավ[140], որպեսզի ստորև շարադրված խնդրագրի համաձայն ոչ ոք ոտնձգություն չկատարի խնդրարկուի այգիների նկատմամբ: *Հաքիմները, ամիլները,* սուրհանդակները և *ռահդարները* չպետք է որևէ առնչություն ունենան կաթողիկոսի գրությունը ձեռքներին գնացող-եկող անձանց ուղտերի ու ջորիների հետ և խոչընդոտեն [նրանց]: Այս թող ընդունեն որպես խիստ կարգադրություն, որը չպետք է խախտեն, և այն թող իրենց պարտականությունը համարեն:
Գրվեց 1148 թվականի հաղթական սաֆար ամսին[141]:

Ամենանվաստ օրհնաբանող ծառա Ուչքիլիսայի Աբրահամ կաթողիկոսի
խնդրագիրը

Գերագույն, Ալեքսանդրի փառքին արժանի Նորին վեհապանծ Մեծության երկնահաս գահին հանգրվանածների բարձրությանը խոնարհաբար հասցնում է [հետևյալը]. «[Ձեր] ծառաների կյանքը թող Նրա երիվարների սմբակների տակի հողը դառնա: Քանի որ հին ժամանակներից ի վեր մեր ձեռքին եղած *ղաբալեների* հիման վրա գեղեցիկ քաղաք Թավրիզում ու Դեհխարղանում երկու կտոր այգի ու ստորգետնյա ջրանցքի ջրից բաժին ենք ունեցել, որոնք որպես *վակֆ* գտնվել են օրհնաբանող ծառաներիս տնօրինության տակ: Ամեն տարի մարդ ենք ուղարկել և, նշված այգիների բերքը նվաստներիս վանքերի ապրուստի համար բերելով, ծախսել [վանք] գնացող-եկողների վրա: Այժմ նորից անհրաժեշտ է, որ մեր ուղտերն ու ջորիներն ուղարկենք դեպի գեղեցիկ Թավրիզ քաղաքը: Խնդրում ենք գերագույն օրհնյալ ողորմածությամբ խղճալ և մեծահոգաբար հրամանագիր շնորհել, որ-

[139] Պատճենը զետեղված է Էջմիածնի կալվածքներին վերաբերող վավերագրերի պատճենների գրքում
[140] Հրովարտակի սկիզբը բնորոշ չէ Նադիր շահի հրովարտակներին, որը թերևս սխալ վերծանության հետևանք է:
[141] 1735թ. հունիսի 23 – հուլիսի 22:

պեսզի նվաստներիս այգիների կապակցությամբ օրինաբանողիս գնացող և վերադարձող ուղտերին, ջորիներին ու մարդկանց Թավրիզի *մահալում* ու ճանապարհին ոչ ոք չխոչընդոտի ու չանհանգստացնի և բարի օրհնանք հղվի մեր ապավեն Նորին Մեծության հասցեին: Եվ այդ Ալլահն անտես չի առնի: Ըստ Նորին [Մեծության] բարձրագույն հրամանի»:

ՎԱՎԵՐԱԳԻՐ 8

Նադիր խանի 1735թ. հրովարտակը, որով հաստատվում է Էջմիածնի իրավունքը Վաղարշապատ, Օշական, Մաստարա, Ֆրանկանոց, Քիրաջլու և Հալաբի գյուղերի մալիքանեի նկատմամբ

Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 1գ, վավերագիր 976, պատճեն[142]
գիր՝ շիքասթե, նասթալիղ

Կաթողիկոսի խնդրագրի հիման վրա հրապարակված *ֆիրմանը*
Հանուն ողորմած և գթառատ Ալլահի
Իշխանությունը Բարձրյալ Ալլահինն է:

Արքայական հրաման եղավ հետևյալի մասին[143].

Որովհետև խնդրարկուն ստորև շարադրվածով դիմեց, ուստի պետք է հին կարգին համապատասխան *մալիքանեն* նշված գյուղերից օրինավոր կերպով ստանան ու տնօրինեն: *Ամիլներից* ու *զաբիթներից* ոչ ոք չպետք է ապօրինաբար նեղություն պատճառի և կարգադրությունը խախտի: Այս թող իրենց պարտականությունը համարեն:

Գրվեց 1148 թվականի ռաբի' առաջին ամսի 2-ին[144]:

Ամենանվաստ օրինաբանող ծառա Ուչքիլիսայի Աբրահամ կաթողիկոսի խնդրագիրը

Գերագույն սրբազնագույն երկնահաս գահի ոտքերում կանգնածների կայանին է հասցնում [հետևալը]. «Ծառաների կյանքը թող Նորին Մեծության երիվարների սմբակների տակի հողը դառնա: Քանի որ հին ժամանակներից մինչ այժմ մեր ունեցած *ռաղամներին* ու *ղաբալեներին* համապատասխան հետևյալ՝ Կարբիի Ուչքիլիսա, Օշական, Մաստարա, Ֆրանկանոց, Ապարանի Քիրաջլու (Քիրաշլի), Դիբաքլու, Ղրխբուլաղի Չելեբի[145] գյուղերի բերքերի ու այգիների *մալիքանեն* գտնվել է օրինաբանող ծառաներիդ տնօրինության տակ, որոնք ամեն տարի, թե՛ պարսիկների և թե՛ օսմանցիների օրոք, այն գանձել ու ծախսել են սևագլուխների, քահանաների ու գնացող-եկողների վրա՝ զբաղվելով բարի օրհնանքներով: Խնդրում ենք գերագույն, սրբազնագույն ողորմածությամբ գթալ և հրամանագիր շնորհել, որպեսզի նշված գյուղերի *զաբիթներից* ոչ ոք ծառաներիդ *մալիքանեի* նկատմամբ ոտնձգություն չկատարի և բարի օրհնանքներ կհղվեն, որը Ալլահն անտես չի առնի: Մնացյալն [ըստ] Նորին [Մեծության] բարձրագույն հրամանի»:

Գերագույն արքայական հրովարտակին համապատասխան *ուլամաներն* ու *շեյխ-ուլ-իսլամը* գյուղերի կապակցությամբ *զաբիթներին* հրամանագիր են տվել և հետևյալը նշել.

Հաստատում.[146]
Շեյխ-ուլ-իսլամի ներկայությամբ, *շար'ով* ու *ամիլների* կնիքներով հաստատված քահանայապետ ու հոգևորականներից լավագույն Ուչքիլիսայի կաթողիկոսի փաստաթղթի հիման վրա հաստատվում է [հետևյալ]՝ Կարբիի Ուչքիլիսա, Օշական, Մաստարա, Ֆրանկանոց, Ապարանի Քիրաջլու, Դիբաքլու և Ղրխբուլաղի Չելեբիքենդ գյուղերի վեցական *դանգերի* պատկանելությունը [Մայր Աթոռին]:

Սեփականատիրոջ գրության բովանդակության համաձայն նշված գյուղերի *զաբիթները* պարտավորագիր են գրել ու պարտավորվել, որ եթե հողագործության ընթացքում այդ *մահալները* անմշակ թողնվեն, ապա պետք է *դիվանի մալոջիաթը* վճարեն: Ուստի այդ *մուլքերը* պետք է հանձնվեն վերոհիշյալի տնօրինությանը, որպեսզի իր բաժին *մալիքանեն* նախորդ տարիների պես տնօրինի: Եթե հիշյալ *մահալի ռայաթները* անհամաձայնություն հանդես բերեն կամ թերանան, ապա թող տեղյակ պահեն:

Գրվեց 1148 թվականի պաշտելի ռաջաբ ամսին[147]:

---

[142] Պատճենը նախորդ վավերագրի հետ նույն գրքից է:

[143] Այս հրովարտակի սկիզբը ևս բնորոշ չէ Նադիր շահի հրովարտակներին, որը թերևս նույնպես սխալ վերծանության հետևանք է:

[144] 1735թ. հուլիսի 24:

[145] Պետք է լինի Չելեբիքենդ, որը կոչվել է նաև Քեշիշքենդ ու Այդին Դարվիշ:

[146] Մատենադարանի կաթողիկոսական դիվանի թղթապանակ 1գ-ում պահպանվել է հրովարտակի այս մասի բնագիրը որպես վավերագիր 359: Բնագրի վրա կան երեք կնիքներ, որոնց վրա ընթերցվում են Ալի Ռեզա, Մուհամմադ Հուսեյն և Մուհամմադ Քազեմ անունները:

[147] 1735թ. նոյեմբերի 17 - դեկտեմբերի 17:

Վ Ա Վ Ե Ր Ա Գ Ի Ր 9

Նաղիր խանի 1735թ. Էջմիածնից գանձվող հարկերի ու նրա մուաֆության իրավունքի մասին հրամանագիրը տրված Աբրահամ կաթողիկոսի խնդրագրի ու Միրզա Մուհամմադ Քազիմի զեկուցագրի հիման վրա

Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 1գ, վավերագիր 354, բնագիր,
մեծ. ա) 21,6 x 33,7 սմ, բ) 21 x 14 ,4 սմ, գիր՝ շիքասթե, նասթալիղ

Նա է:
Անուններից լավագույն Ալլահի անունով
Բարձրյալ Ալլահին եմ ապավինում:

Բարձր հրաման եղավ հետևյալի մասին.

Որովհետև, երբ Երևանի տարածքը ծածկվեց փառապանծ վրաններով, քրիստոնյա քահանայապետ և հոգևորականների առաջնորդ Ուչքիլիսայի Աբրահամ կաթողիկոսը բոլոր սևագլուխների ու հայերի հետ *փիշքաշի*, *սուրսաթի* և այլ անձնվեր ծառայությունների մատուցման հարցում անհրաժեշտ ջանասիրություն ու հավատարմություն հանդես բերեցին, ուստի Ուչքիլիսայի, կաթողիկոսի ու սևագլուխների կցված [գրությամբ] հստակեցված *դիվանի մութավաջջեհաթը* թե' գումարով, թե' բնամթերքով կարգադրվեց կրճատել և նախկինի պես *մուաֆ* ճանաչել: Երևանի *վաքիլն* ու *ամիլները* թող կարգադրությանը համապատասխան վարվեն, այդ պատճառով ոչինչ չպահանջեն ու *հավալե* չանեն: Բարձրաստիճան *բեկլարբեկը* պետք է բոլոր հարցերում հոգ տանի նրա մասին: Մեծ *մուսթոֆիները* թող *ռաղամի* բովանդակությունը գրանցեն մատյանում և այն իրենց պարտականությունը համարեն:

Գրվեց 1148 թվականի ռաբի' երկրորդ ամսին[148]:

[Կնիք][149]:

Ամենանվաստ օրհնաբանող ծառա Ուչքիլիսայի Աբրահամ կաթողիկոսի խնդրագիրը

Գերագույն սրբազնագույն երկնային գահին նմանվող գահի ոտքերում կանգնածների կայանին է հասցնում [հետևալը]. «Մեծահոգաբար վճռորոշ *ռաղամ* շնորհեցին նվաստներիս, որ մենք *մուաֆ* ու *մուսալլամ* ենք եղել և որ *ամիլները* մեզանից ոչինչ չպետք է գանձեն: Միրզա Քազիմ *զաբիթը* մեր դեզերը մեզ է թողել, բայց Ուչքիլիսայի այգիների, աղացների, *դինգերի* ու կալերի, կովերի ու ոչխարների մարագների, խանութների, իջևանատների, բաղնիքների, նաև այլ վանքերից ըստ կարգի *մալոջիաթ* է պահանջում: Նախկինում Ուչքիլիսան ամբողջովին, իր այգիներով ու ամեն ինչով *մուաֆ* է եղել և որևէ անվան տակ *մալոջիաթ* չենք վճարել, իսկ Երևանի [*նահանգի*] մեջ մտնող մյուս վանքերից *խարաջի* ու *ջիզյայի* փոխարեն միանվագ 17 *թումանի* 5000 *դինար* գումար է վճարվել կաթողիկոսի ձեռքով *դիվանին* որպես վանքերի *մուլքերի,* այգիների ու աղացների *մալոջիաթ* 10-ից 2-ի չափով: Խնդրում ենք վճռորոշ *ռաղամ* շնորհել, որպեսզի Ուչքիլիսան բոլոր առումներով նախկինի պես *ջիզյա,* հացահատիկի, այգիների, աղացների, բաղնիքների և խանութների *մալ* ու *մանալ* [հարկերից] *մուաֆ* [լինի]: Եվ մյուս վանքերի (Խորվիրապ, Աղջոց, Ամենափրկիչ, Գեղարդ, Սևանի, Հայրավանք, Կեչառիս, Ղփչաղ, Չայկաթարան, Բջնի, Կարենիս, Սաղմոսավանք, Օհանավանք, Մուղնի, Ուշի, Տեղեր, Կոշի, Քասաղի ձորում գտնվող Սաղմոսավանքի ու Օհանավանքի մենաստանները) համար, որոնց մի մասը ավերված է, որպես հարկ նվաստիս ձեռքից միանգամից գանձվի 17 *թումանի* 5000 *դինար* գումար, և *մուլքերի,* այգիների ու այլ [կալվածքների] բերքը նախկին կարգով ստանալով, բարի օրհնանքներ հղվեն: Եվ այդ Ալլահն անտես չի առնի: Ըստ Նորին [Մեծության] բարձրագույն հրամանի»:

Նա է:
Անուններից լավագույն Ալլահի անունով
Բարձրյալ Ալլահին եմ ապավինում:

Բարձր հրաման եղավ, որպեսզի *վաքիլության*, ազնվականության ու վեհության ապաստան, Երևանի *օլքայի մալիյաթի զաբիթի վաքիլ* բարձրաստիճան ազնվական Միրզա Մուհամմադ Քազիմը, պարզելով ներկայացված խնդիրների իրողությունը, հստակեցնի, թե Ուչքիլիսա գյուղի ու մյուս նշված վանքերի *մալոջիաթը, հողդուղ-ե դիվանին* որքան է և մանրամասնորեն ներկայացնի: Այս թող ընդունեն որպես խիստ կարգադրություն և իրենց պարտականությունը համարեն:

Գրվեց 1148 թվականի ռաբի' առաջին ամսին[150]:

[Կնիք][151]:

Կարգադրվեց, որպեսզի իրողությունը հստակեցնի, թե հին ժամանակներից հիշյալ վանքերից որն է *մուաֆ* եղել, որը գումար վճարել *դիվանի սարքարին* և թե ամեն տարի որքան գումար է ստացվել *դիվանի սարքարի* կողմից և բոլորը հանգամանալից շարադրանքով զեկուցի՝ [նշելով], թե յուրաքանչյուրի *մալոջիաթը, դիվանի վջուհաթը* որքան գումար է կազմում: Վերջ:

Ամենանվաստ ծառա Մուհամմադ Քազիմի զեկուցագիրը

Մուհամմադ Քազիմ Հուսեյնին խոնարհաբար զեկուցում է հետևյալը. “Ուչքիլիսայի, Օհանավանքի, մյուս վանքերի ու վանականների *վակֆերի*

[148] 1735թ. օգոստոսի 21 – սեպտեմբերի 19:
[149] Տե'ս վավերագիր 2-ի կնիքը:

[150] 1735թ. հուլիսի 22 – օգոստոսի 21:
[151] Տե'ս վավերագիր 2-ի կնիքը:

մութավաջջեհաթն ու *մալոջհաթը* ստորև երեք պարբերությամբ շարադրանքին համապատասխան է: Քննելով Ուչքիլիսայի, [նրա] միաբանների ու սպասավորների *մուաֆությունը* հետևյալ կերպ է.

կանխիկ գումարով՝ 106910 *դինար*

առանձին գույքի գումարից՝ 47800 թավրիզի *դինար*.

(խանութներից՝ 89 հատ / [յուրաքանչյուրը] 200 [*դինար*] / 17800 *դինար*;

բաղնիքների վարձից, որ ծախսվում է նրանց ծախսերի վրա՝ 3 *թումանի*);

այգիների գումարից՝ 46610 թավրիզի *դինար*.

(10 կտոր այգիների 150 …, [յուրաքանչյուրը]՝ 100 *դինար*, [ընդամենը] 15000 թավրիզի *դինար*;

ջրաղացները, կալերը, *դինգերը*՝ 19 քար / [յուրաքանչյուրը]՝ 1660 *դինար* – [ընդամենը] 31610 թավրիզի *դինար*);

քալանթարի ու *բյադխուդաների իլթիզամը մարա'ի* գումարից ՝

500 գլուխ / [յուրաքանչյուրը] 25 *դինարով* –

[ընդամենը]՝12500 թավրիզի *դինար*

բնամթերքով՝ 165 *խարվար*

ըստ նախկին կարգի, որը 10-ից 2-ն էր հաշվվում, 66 *խարվար* է;

ցանքատարածությունները, որոնք [կազմում են] 500 *թաղար*, և նրանցից գանձվում էր բերքի կեսի քառորդը՝ 165 *խարվար*, որից 60-ը դեզ է և ըստ հրովարտակի կեսն է սպասվում՝ 105 *խարվարի* չափով:

Օհանավանք գյուղում գտնվող վանքի և այնտեղ բնակվող սևագլուխների *մուաֆությունը* [նրանցից] գանձվող *իլթիզամի* համար 1 *թումանի* 330 թավրիզի *դինարի* է.

4 կտոր այգիների 20 … համար / [յուրաքանչյուրը] 100 *դինար* – [ընդամենը] 2000 թավրիզի *դինար*;

Աղացների ու կալերի 5 քարի համար / [յուրաքանչյուրը] 1666 դինար - [ընդամենը]՝ 8330 թավրիզի *դինար*:

Մյուս վանքերի *մութավաջջեհաթը,* որտեղ բնակվող սևագլուխների համայնքը *ջիզյայից* ու այլ պարտականություններից *մուաֆ* լինելով, մշտապես ըստ որոշված կարգի ամեն տարի վճարելիս են եղել և այժմ էլ վճարում են 175000 թավրիզի *դինար*, որպես նրանց այգիների, աղացների ու հողագործության *մալոջհաթ,* որտեղ էլ դրանք լինեն:

Ըստ որոշված կարգի 17 *թումանի* 5000 *դինար* է:

Ինչպես, որ կարգադրեն, այնպես էլ կգործադրվի: Ըստ Նորին [Մեծության] բարձրագույն հրամանի»:

[Հակառակ կողմում]

Գրանցվեց հակիրճ գրառումների *սարրեշթեում*;

[Կնիք]. «Չկա Աստված Ալլահից բացի, նրանն է իշխանությունն ու արդար իրավունքը, Աստծո ծառա Մուհամմադ Քազիմ»;

[Կնիք]. «… Մուհամմադ Քազիմ»;

[Հայերեն]՝

Յոյժ պատուական և օգտակար *ֆերման* է;

Այսք Նատր շահի տուեալ *մաղաֆութեան ռաղամն*, յորում զՍուրբ Աթոռս և զԺԹ վանօրայս գրէ յանունք և *մաղաֆ* առնէ: 'Ի ՌՃԽԸ (1148) տաճկաց, 'ի ժամանակս Աբրահամ կաթուղիկոսին Թրակացւոյ:

ՎԱՎԵՐԱԳԻՐ 10

Նադիր խանի 1735թ. հրամանագիրը, որով արգելվում է Իրանի պետական պաշտոնյաներին նեղել Էջմիածնի կաթողիկոսի նվիրակներին

Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 1գ, վավերագիր 361, պատճեն, մեծ. 23,5 x 42 սմ, 30 x 62 սմ, գիր՝ շիքասթե, նաստալիղ

Նա է:

Անուններից լավագույն Ալլահի անունով

Բարձրյալ Ալլահին եմ ապավինում:

Գերագույն հրաման եղավ, որպեսզի *վիլայեթների հաքիմներն* ու *ամիլները,* ճանապարհներին հանդիպող *ռահդարներն* ու սուրհանդակները, խնդրարկու քահանայապետի մարդկանց ու սևագլուխներին, որոնք բալզամի (մեռոնի) յուղը *վիլայեթներն* են տանում ու ետ վերադառնում, ապօրինաբար չնեղեն, չխուզարկեն ու չխոչընդոտեն: Այս թող ընդունեն որպես խիստ կարգադրություն և այն իրենց պարտականությունը համարեն:

Գրվեց 1148 ռաբի' երկրորդ ամսին:

Գերագույն, սրբազնագույն Նորին Մեծության օրհնյալ կնիքի տեղը:

Ամենանվաստ օրհնաբանող ծառա Ուչքիլիսայի Աբրահամ կաթողիկոսի խնդրագիրը

Գերագույն սրբազնագույն երկնային գահի[ն նման] գահի ոտքերում կանգնածների կայանին է հասցնում [հետևյալը]. «Ամեն տարի մեկ անգամ ինչպես Ազերբայջանի, Իրաքի և Իրանի տարբեր կողմերը, այնպես էլ Վանի մոտով դեպի Քրդստան և Ռումի ու Թուրանի այլ *վիլայեթներ*, հայ համայնքներին ենք ուղարկում մեռոնի յուղ և հին կարգ ու կանոնին համապատասխան հարկեր ու նվիրատվություններ հավաքելով, բերում ենք վանքի համար: Խնդրում ենք Նորին շքեղաշուք, գերագույն, սրբազնագույն Մեծությանը, որի ողորմածությունն ու մեծահոգությունը ակնհայտ են, որպես ամենաբարձր, սրբազան ողորմություն, մի հրամանագիր շնորհել, որպեսզի *ամիլներից, հաքիմներից, զաբիթներից, ռահդարներից* ու

սուրհանդակներից ոչ ոք Ձեր ծառայի մարդկանց ու սևագլուխներին գնալ-գալու ժամանակ, նրանց, [նրանց] սպասավորներին, ձիերին, բեռներին, ավանակներին ու գույքին չխոչընդոտի ու չնեղի: Եվ բարի օրհնանքներ կհղվեն Նորին գերագույն, սրբազնագույն Մեծությանը, թող իմ հոգին նրա համար զոհաբերվի, որը Ալլահն անտես չի առնի: Ըստ Նորին [Մեծության] բարձրագույն հրամանի»:

[Հակառակ կողմում]

Սավադը համապատասխանում է բնագրին, [կնիք]:

[Հայերեն]՝

Շահ Նատրի ռաղամն է, որ գրել է 'ի վերայ ռահդարաց և սուրհանդակից զնաև թուրքաց, որ Սրբոյ Էջմիածնի մարդկանցն, ուր ուրեք որք լինիցին ի նոցանէ զատ չուզէք ամենևին, ոչ ռահդարլըղ, ոչ բաջ և ոչ այլ բեռնակիր չառնուի և այլ շիլթաղ չանէք 'ի թուին տաճկաց, ՌՃԻԸ:

ՎԱՎԵՐԱԳԻՐ 11

Նադիր շահի 1736թ. հրամանագիրը, որով Երևանի նահանգի պաշտոնյաներին կարգադրվում է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի վանքից հարկերի գանձման ժամանակ անօրինականություններ թույլ չտալ

Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 1գ, վավերագիր 358, պատճեն,
մեծ. 22 x 24 սմ, գիր՝ շիքասթե

Բարձրյալ Ալլահին եմ ապավինում:

Բարձր հրաման եղավ, որպեսզի բարձրաստիճան մեծ *ամիր-ալ-ումարա,* Երևանի *օլքայի բեկլարբեկն* ու *ամիլները* վերահասու լինեն ներկայացվող հարցերի իրողությանը, օրենքին համապատասխան գործադրեն՝ այնպես անելով, որպեսզի *դիվանի* ունեցվածքը շատանա և նշված մարդկանց հանդեպ չարաշահումներ ու բռնություն չգործվեն: Թող այս իրենց պարտականությունը համարեն:

Գրվեց 1148 թվականի շավալ ամսին[152]:

Ամենանվաստ օրհնաբանող ծառա Ուչքիլիսայի կաթողիկոսի խնդրագիրը

Երկնային գահին նմանվող ճակատագրի թագավորության գահի ոտքերում կանգնածների կայանին է հասցնում [հետևյալը]. «Ամենանվաստ ծառաները մշտապես զբաղված են Նորին Մեծություն մեր վեհապետին օրհնելով, և Նորին Մեծություն մեր ապավենի մերձավորներին հայտնի է, որ սևագլուխները հին ժամանակներից ի վեր *մուաֆ* են եղել, միայն 17 *թումանի* 5000 թավրիզի *դինարի* գումար է գանձվել հայ հոգևորականներից Երևանի

[152] 1736թ. փետրվարի 14 – մարտի 14:

մահալի վանքերի հետևյալ *մուլքերի* [16 կտոր այգի, 40 աղաց, կալ և *դինգ*] համար: Ուրիշ ոչինչ չի գանձվել, և ամեն առումով *մուաֆ* են եղել: Ի վերջո քանի որ նվաստս անտեղյակ էի, այդ կապակցությամբ դիմում գրեցի բարձրագույն *դիվանին*: Կարգադրվեց 17 *թումանի* 5000 [*դինար*] հանձնել *դիվանի սարքարին*: Բացի այդ այգիների, աղացների, կալերի և *դինգերի* համար առանձին հարկ են ուզում: Նրանց բողոքի նպատակն այն է, որ 17 *թումանի* 5000 [*դինար*]-ը այգիների, աղացների, *դինգերի* ու կալերի համար է, որ թշվառներս պետք է *սարքարին* տանք: Այլապես թշվառներիս հարկը կրկնակի է դառնում: Այս պատճառով նվաստս գալով Նորին Մեծություն մեր ապավենի դուռը՝ խնդրում է, որ այս գումարը տարեցտարի վճարվի *հավալե* ունեցողներին և ոչ ոք հայ *ռայաթներին* չնեղի: Ինչպիսի բերք էլ, որ հավաքեն, *սարքարի* գումարը առանձին վճարեն *հավալեներ* ունեցողներին: Քանի որ անհրաժեշտ էր, դիմեցի: Ըստ Նորին [Մեծության] բարձրագույն հրամանի»:

Ճշմարտությունն ասողը զեկուցում է. «Այս տարի 17 *թումանի* 5000 թավրիզի *դինար* է ստացվել, որպես սևագլուխների *մուղարրարի վազիֆե*: Եվ հայտնի չէր, որ հիշյալ գումարը շուրջ 40 քար աղացի, *դինգի*, կալի ու [նաև] այգիների *մալոջհաթն* է: Նրանց *մալոջհաթն* այս տարի ըստ պարտադիր գործադրության ենթակա հրովարտակի, յուրաքանչյուր քարից 2500 *դինար* պետք է լինի, գանձվել է մոտ 10 թավրիզի *թումանի* չափով, քանի որ այգիները կարգադրվել էր կրճատել և դրանք չեն էլ չափագրվել, որպեսզի հայտնի դառնա, թե դրանց *մալոջհաթը* որքան գումար է կազմում: Նաև ոչինչ չէր տրվել *դիվանի զաբթին*, որպեսզի այդ մասին զեկուցվեր: Ըստ *քալանթարի* ու *մելիքների* կողմից գրված *իլթիզամի,* որի մասին օրհնյալ *ռաղամ* է հրապարակվել, հնում աղացներից, ձիթհաններից ու *դինգերից* յուրաքանչյուր քարի համար ակնկալվել է 1600 *դինար*, որը կազմում էր մոտավորապես 6 *թումանի* 4000 թավրիզի *դինար*: Իսկ այն, թե արդյոք այդ գումարը եղել է աղացների ու մյուս [կալվածք]ների *մալոջհաթը*, հայտնի չէ: Այժմ վերը շարադրված խնդրագրի և *քալանթարի* ու *մելիքների* [տվյալների] համաձայն այդպես է: Ինչպես, որ կարգադրեք հնազանդ ենք: Վերջ»:

[Հակառակ կողմում]

Սավադը համապատասխանում է բնագրին և բնագիրը պալատական ծառայի մոտ է,

[Հայերեն]՝

[Կնիք]. «Ղազար կաթողիկոս, ՌՃՁԶ»;

ԻԶ Շահի տված ռաղամի սաւադն է, որ վանքերն ԺԷ թուման և ԵՌ դիան պիտի տան:

Վ Ա Վ Ե Ր Ա Գ Ի Ր 12

Նաղիր շահի 1736թ. հրամանագիրը, որով Խաչենի Մելիք Գրիգորի խնդրանքով Խաչենի մելիքության մեջ մտնող Դովշանլու և Ղաբարթու գյուղերի պետական հարկերի գանձման իրավունքը հանձնվում է Մելիք Եգանին

Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 2բ, վավերագիր 188[153], պատճեն
մեծ. 3 էջ, գիր՝ նասթալիղ

Իշխանությունն Ալլահինն է:
[Կնիքի պատճեն]. «Ալլահի բարեհաճության մարմնացում Նաղիրն է»
Բարձրյալ Ալլահին եմ ապավինում:

Արքայական հրաման եղավ, որպեսզի Բարդայի *մահալի մալիյյաթի զաբիթը* իմանա, որ քանզի օրերս քրիստոնյաների մեջ լավագույն Խաչենի *մահալի մելիք* Մելիք Գրիգորը օրհնյալ ոտնատեղիին զեկուցեց, որ որովհետև հիշյալ *մահալի մութավաջջեհաթը* կարգադրվել էր ամբողջովին հանձնել պետության բարձրաստիճան հենասյուն, իմ եղբայր, Ազերբայջանի զորահրամանատար Մուհամմադ Իբրահիմի հանձնակատարներին, և այդ *մահալի* գյուղերից ու *մազրայեներից* են Դովշանլու ու Ղաբարթու[154] գյուղերը, որոնց *մալիյյաթը* փոխանցվում էր Բարդայի *զաբիթներին*, ուստի գերագույն հրովարտակի բովանդակությանը ծանոթանալուց հետո դրանք պետք է հանված համարեն իրենց [Բարդայի] *ջամ'ից* և որևէ կերպ չմտնեն այնտեղ՝ այն [համարելով] իմ բարձրաստիճան եղբորը *աբվաբ-ե ջամ'* արված: Խնդրարկու Մելիք Գրիգորը ու իմ եղբոր *ամիլները*, թող խնդրագրին ստորև կցված իրողությանը լավատեղյակ Բարդայի *զաբիթ* Ալի Ղուլի *բեկի* կողմից հիշյալ գյուղերի նապաստակի տարվա հարկագանձումների մասին ներկայացված զեկուցագրին և *դաֆթարում* գրանցվածին խստագույնս հետևելով՝ *մալիյյաթը* գանձեն: Կարգադրվեց, որպեսզի Խաչենի *մելիք* Մելիք Գրիգորը Խաչենի *մահալի մալիյյաթը* հատկացված համարի Մելիք Եգանի *զաբթին*, որը պետք է այն փոխանցի իմ եղբոր *թահվիլդարին*: [Մելիք Գրիգորը] Դովշանլու և Ղաբարթու գյուղերի *մալիյյաթը* Խաչենի *մահալի* մյուս գյուղերի նման հատկացված համարելով Մելիք Եգանի *զաբթին՝* պետք է որոշման համաձայն նրանց *մալիյյաթը* Խաչենի այլ *մահալների մալիյյաթի*

[153] Վավերագրի պատճեն, որ կազմվել է XIX դարում, թերի է և ոչ ճշգրիտ, հատկապես զգալի է հարկագանձումներին վերաբերող հատվածում:
[154] Ղաբարթու (Գաբարտ) բնակավայրը XIX դարում նշվում է Խաչենի մելիքության հյուսիսային սահմանով հոսող նույնանուն գետակի արևելյան ափին (Ղ. Ալիշան, Արցախ, Երևան, 1993, էջ 73, տե'ս Карта Кавказскаго края сь показанием густоты армянскаго населения, Баку, 1908.):

հետ գանձի և փոխանցի Մելիք Եգանին, որպեսզի [վերջինս այն] փոխանցի հիշյալ *թահվիլդարին*: Թող այս իրենց պարտականությունը համարեն:
Գրվեց 1148 թվականի սրբազան զի ղաադե ամսին[155]:

Սրբազնագույնին զեկուցում է. «Նվաստս նապաստակի տարում հետևյալ կերպ *աբվաբ-ե ջամ'* արեցի ու գանձեցի Խաչենի *մահալներից*, և հիշյալ գյուղերից Ձեր ծառայի *ջամ'ը* հետևյալն է.
«1) Կանխիկ դրամով՝ 163815 թավրիզի *դինար*
2) Բնամթերքով՝ 31 *խարվար* 68 *ման*
3) Դովշանլու գյուղը
որի 1 *դանգը խալիսե* է. կանխիկ գումարով՝ 163000 *դինար*, բնամթերք՝ 20 *խարվար* 60 *ման*,
4) Ղաբարթու գյուղը
բնամթերքով՝ 10 *խարվար* և 86 *ման* 4 *դանգից*[156].
20) 4 *խարվար,* 86 *ման* և 6 *խարվար*,

5)ցորեն՝ 8 *խարվար* 20 … /50 *ման*; 6) աշորա – 11 *խարվար* 40 *ման*

7) *մալոջիաթ* ՝ կանխիկ գումարով 25425 *դինար*
8) մարագ - 4625 *դինար*,
9) այգիներ – 7 կտոր՝ միասին 10500 *դինար*,
10) աղաց – 7 քար՝ միասին. 10300 *դինար,*
11) բնամթերքով՝ 20 *խարվար* 61,5 *ման*, որից
12) գարի՝ 13 *թաղար,* 40 *ման* /5 *խարվար,* 20 *ման,*
13) ցորեն՝ 17 *թաղար*, 15 … / 8 *խարվար*, 75 ման,
14) աշորա – 12 *թաղար,* 25 … / 6 *խարվար* 66 *ման*, 4 դանգ.

15)*ջիզյա*՝ 13 *թումանի* 8390 *դինար*
16) … 9060 *դինար*,
17) *չոբանբեկի* – 29*դինար*, 1740 *դինար*,
18) … – 29000, 2 *թումանի* 9000 *դինար*
19) քյաղխուդա - 49000 *դինար*, [ընդամենը] 98000 *դինար*

Ինչպես, որ հայտնի է նվաստիս: Մնացյալն [ըստ] Նորին [Մեծության] բարձրագույն հրամանի»:
Կնիքի տեղ, ռաղամի կնիքի տեղ,Աբու Իսհաղի կնիքի տեղը:

[155] 1736թ. մարտի 14 - ապրիլի 13:
[156] Կարծում ենք 5 և 6 համարների տակ նշված թվերի փոխարեն պետք է լինի համար 20-ի թվերը:

Ամենանվաստ ծառաների խնդրագիրը

Փառքի հանգրվանը ետ ստացողների բարձրությանը հասցնում է [հետևյալը]. «Հին ժամանակներից ի վեր հիշյալ *մահալը աբվաք-ե ջամ'* է եղել Գանձակին և հանդիսացել Խաչեն *մահալի մելիք* Մելիք Գրիգորի գյուղերից: Հիշյալ *մահալի* իրական *ջամ'ի* վերաբերյալ Բարդայի *օլքայի զաբիթը* կարող է զեկուցել, որ նշված *մահալի* Դովշանլու և Ղաբարթու գյուղերը գտնվել են Բարդայի *օլքայի* [ենթակայության] տակ: Նապաստակի տարում Բարդայի *զաբիթ* Ալի Ղուլի *բեկը* պարտադիր գործադրության ենթակա *ռաղամի* հիման վրա հիշյալ գյուղերը *զաբթ* ու *աբվաք-ե ջամ'* է արել Բարդայի *զաբթին*: Այժմ գերագույն հրամանով հայոց *մահալների* 5 մելիքները դրվել են Թավրիզի [ենթակայության տակ]: Խնդրանքը սրբազնագույն շեմքից այն է, որպեսզի շնորհ արվի և նշված գյուղերը Բարդայի *օլքայից* անջատվեն ու մտցվեն Խաչենի *մահալի* մեջ և այլևս ոչ ոք նրանց [եկամուտները] տնօրինելու նպատակով ապօրինաբար նվաստներիս նեղություն չպատճառի, և որպեսզի երբևէ այս ծառաները չհուսահատվեն: Մնացյալն [ըստ] Նորին [Մեծության] բարձրագույն հրամանի»:

Ֆերմանի հակառակ կողմի կնիքները

Հասանի կնիքը; գրեց, Ալիի կնիքը; քննվեց, Իսմայիլի կնիքը; *ավարեջեի սարքարի* կողմից արձանագրվեց, Մուհամմադ Ալիի կնիքը; բովանդակությունը գրանցվեց, Մուհամմադ Իսհաղի կնիքը; գրանցվեց *սարխաթի սարքարի* կողմից; կնիքի տեղ; խնդրանքը քննվեց և գրանցվեց *դիվանի* կողմից, Աբու Իսհաղի կնիքի տեղը:

ՎԱՎԵՐԱԳԻՐ 13

Նադիր շահի 1738թ. հրամանագիրը տրված ի հաստատումն Երևանի նահանգի մելիքներ Հակոբջանի ու Սկրտումի մուաֆության իրավունքների

Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 1գ, վավերագիր 1032, բնագիր
մեծ. 31.5 x 53.5սմ, գիր՝ շիքասթե, նաստաալիղ

Հանուն գթառատ և ողորմած Ալլահի
[Կնիք]. «Ալլահի բարեհաճության մարմնացում Նադիրն է, 1148»
Բարձրյալ Ալլահին եմ ապավինում:

Արքայական հրաման հրապարակվեց հետևյալի մասին.

Նմանների մեջ լավագույն խնդրարկուների բարի ծառայության համար այնպես, ինչպես նախկինում արքայական հրամանագրով հաստատվել էր նրանց մելիքության *մուաֆությունն* ու մյուս [իրավունքները], ըստ կարգի, նրանց անունով հաստատեցինք, որպեսզի բարձրագույն *դիվանի մուսթոֆիներն* ու Երևանի *օլքայի ամիլները* գրությանը համապատասխան որոշված [համարեն] և ամեն առումով վարվեն այնպես, ինչպես, որ սրանից առաջ ազնվագույն *ռաղամով* կարգադրվել էր՝ առանց նրա օրենքներում փոփոխություններ կատարելու: Եվ թող կարգադրությանը չհակառակվեն ու այն իրենց պարտականությունը համարեն:

Գրվեց 1151 թվականի մեծ շա'բան ամսին[157]:

Թող հստակեցնեն թե հիշյալ *մահալը* ինչպես և ինչ պայմաններով է շնորհված եղել խնդրարկուներին, և թե *մումայիզների* ինչպես են անցկացրել հաշվառումը և ինչպես վարվել [դրանից հետո]:

Ամենանվաստ ծառաներ Երևանի *մելիքներ* Հակոբջանի և Սկրտումի խնդրագիրը

Վեհապանծ Տիրոջ շեմքը երկրպագելուց հետո … որ զարդանշանն է, գերագույն արքայական դրախտավայրի ընկերակցությունը վերագտածների բարձրությանը հասցնում են [հետևյալը]. «Նվաստներս հին ժամանակներից ի վեր *մուաֆ* ենք եղել և այդ իրողությունների մասին զեկուցված լինելով սրբազնագույն ոտնատեղիին, արքայական ողորմածությամբ ընդունված կարգին համապատասխան արժանացել ենք Երևանի *օլքայում* գտնվող փոքրաթիվ *մուլքերի մուաֆության* հաստատմանը, որը մի քանի հարազատների ու ընտանիքի անդամների հետ ծախսելով ապրուստի վրա՝ զբաղվում [ենք] հավիտենական պետության հարատևման համար աղոթելով: Բարձրաստիճան *մումայիզները* գալով նվաստներիս *մուլքերը*՝ ստուգում անցկացրեցին և բոլոր կողմերից այգիների, ցանքատարածությունների, կալերի, աղացների, *մարա'ի*, *մավաշի* ու … համար 15 թավրիզի *թման աբվաք-ե ջամ'* արեցին, և *ամիլները հավալե* են անում ու պահանջում: Այս հանգամանքը նվաստներիս հուսահատության ու շփոթության պատճառն է դարձել: Խնդրում ենք որպես սրբազնագույն արքայական ողորմություն բարձրագույն *ռաղամով* կարգադրել, որպեսզի *ամիլները* նվաստներիս փոքրաթիվ *մուլքերի* հետ, որոնց *հողդուղ-ե դիվանին* 15 *թման* է, գործ չունենան, նվաստներս ու նրանց մարդիկ, որոնք [հարկերից] ազատված են եղել այս պալատի կողմից, նախկինի պես *մուաֆ* ճանաչվեն, որպեսզի հանգիստ ու ապահով աղոթենք հավերժական պետության հարատևման համար: [Ըստ] Նորին [Մեծության] բարձրագույն հրամանի»:

[157] 1738թ. նոյեմբերի 14 - դեկտեմբերի 13:

Վ Ա Վ Ե Ր Ա Գ Ի Ր 14

Ռեզա Ղուլի Միրզայի[158] 1740թ. հրամանագիրը, որով արգելվում է խոչընդոտել հայերին իրենց եկեղեցիների վերանորոգման ու նորերը կառուցելու, նաև եկեղեցական զանգերը հնչեցնելու ու ծիսական արարողությունները անցկացնելու հարցում

Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 1գ, վավերագիր 367, պատճեն,
մեծ. 19,7 x 45,7 սմ, գիր՝ շիքասթե, նասթալիղ

Բարձր հրաման եղավ հետևյալի մասին.

Որովհետև քահանայապետ, հոգևորականների առաջնորդ խնդրարկուն ստորև շարադրված խնդրագրով դիմեց, ուստի հայաբնակ տարածքներից որտեղ էլ, որ ավերակ եկեղեցի լինի, որը կցանկանան վերանորոգել կամ նորը կառուցել, նաև [եկեղեցական] զանգերը հնչեցնել, ժամերգություն կատարել, ոչ ոք չպետք է խոչընդոտի: Եվ թող բարձրագույն *ռաղամի* բովանդակությունից չշեղվեն և այն իրենց պարտականությունը համարեն:

Գրվեց 1152 թվականի մեծ շավալ ամսին[159]:

Աշխարհի պահապան բարեբախտ Նորին Մեծության օրհնյալ կնիքի տեղն է:

Ամենանվաստ ծառա Ձեզ համար աղոթող Երևանի Ուչքիլիսայի Ղազար կաթողիկոսի խնդրագիրը

Վերին երկնային դրախտի հանդեսում կանգնածների բարձրությանն է հասցնում [հետևյալը]. «Յուրաքանչյուր քաղաքում, ավանում, գյուղում կամ *մազրայեում*, որտեղ ավերված եկեղեցի կլինի կամ գոյություն չի ունենա, եթե այնտեղի բնակչությունը եկեղեցի կառուցելու ուժ և կարողություն ունենա, նմանապես, եթե որևէ քաղաքում ու գյուղում, ուր ծառաներիդ սովորության համաձայն [եկեղեցու] զանգերը խփում են, բայց զանգ չունեն և ի վիճակի են զանգ պատրաստելու, կոչնակ հնչեցնելու ու ժամերգություն կատարելու, խնդրում ենք մահկանացուներիս հովանավորի, թող իմ հոգին նրա համար զոհաբերվի, գերագույն, սրբազնագույն օրհնյալ ամենաբարձր ողորմածությամբ գթալ և բարձր արքայական հպատակեցնող *ռաղամ* շնորհել, որպեսզի եկեղեցիների վերանորոգման ու նորերի կառուցման, զանգերը հնչեցնելու, կոչնակ խփելու ու կամ, որ նույնն է ժամերգություն կատարելու կապակցությամբ *հաքիմներից* ու *ամիլներից* ոչ ոք նրանց չխոչընդոտի ու չնեղի, որից հայերը սրտապնդված կլինեն: Մնացյալն [ըստ] Նորին [Մեծության] հպատակեցնող, փառահեղ, բարձրագույն հրամանի»:

[Հակառակ կողմում]

[158] Նադիր շահի որդին է, որը տվյալ ժամանակահատվածում (1738թ. նոյ. 7 – 1740թ. մայիսի 19) Իրանի փոխարքան էր:

[159] 1740թ. հունվարի 1 – 30:

Համապատասխանում է հպատակեցնող, գերագույն, ամենաբարձր, արքայական բնագրին, [կնիք];

Սավադը համապատասխանում է բնագրին, որը գտնվում է պալատական ծառայի *զաբթում*,

[Հայերեն]՝

[Կնիք]. «Ղազար կաթողիկոս, ՌԵՁԶ»;

Միրզայի տուած ըռաղամի սավատն է որ յիւրեանց իշխանութեան միջումն զնոր եկեղեցին շինին և զհինն նորոգեն 'ի ՌԵԾ և Բ թուին:

Վ Ա Վ Ե Ր Ա Գ Ի Ր 15

Ռեզա Ղուլի Միրզայի 1740թ. հրամանագիրը, որով արգելվում է հայ եկեղեցու նվիրակներից ռահդարի գանձելը, նաև հրահանգվում է բարձրաստիճան պաշտոնյաներին փիշքաշի գանձման հարցում չարաշահումներ թույլ չտալ և կաթողիկոսից ապօրինաբար ձի ու այլ կենդանիներ չպահանջել

Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 1դ, վավերագիր 482, բնագիր,
մեծ. 27,5 x 40 սմ, գիր՝ շիքասթե, նասթալիղ

Նա է:

Բարձր հրաման եղավ, որպեսզի Իրանի պաշտպանության տակ գտնվող երկրների *բեկլարբեկները, հաքիմները, ամիլները* ու *ռահդարները* խնդրագրում նշված քահանաների ու հոգևորականների շրջագայության կապակցությամբ ինչպես, որ վճռական *ֆերմանով* որոշվել է, նրա հստակ բովանդակությամբ առաջնորդվեն, նրան համապատասխան վարվեն ու չհակառակվեն: *Փիշքաշի* գումարի հարցում Երևանի *բեկլարբեկն* ու *հաքիմը* որքան, որ *դաֆթարում* ու *դիվանում աբվաբ-ե ջամ'* արված խնդրարկուին, այնքան գանձեն և իրենց օգտին չարաշահումներով չնեղեն: Եթե ձիերի ու ջորիների կապակցությամբ արդար *դիվանից* կարգադրություն է արվել, և խնդրարկուն ու նրա հպատակները ձիեր ու ջորիներ ունեն, ապա թող նրանց հոժար կամքով և իրական գնով գնեն, իսկ եթե պահանջված ձին ու ջորին չունենան, ապա թող չնեղեն և այլ որևէ կերպ նեղություն չպատճառեն: Խնդրարկու քահանայապետին պատվելու համար մեկ ձեռք *խալաթ* շնորհեցինք, որպեսզի նրա վստահության ուսերի զարդարանքը լինի:

Գրվեց 1152 թվականի շավալ ամսի 7-ին[160]:

[Կնիք]. «… Ռեզա Ղուլի»:

[160] 1740թ. հունվարի 8:

Ամենանվաստ ծառա Երևանի Ուչքիլիսայի Ձեզ համար աղոթող Ղազար կաթողիկոսի խնդրագիրը

Գերագույն դրախտային հանդեսում կանգնածների բարձրությանն է հասցնում [հետևյալը]. «Մահկանացուներին հովանավորողի, թող իմ հոգին նրա համար զոհաբերվի, պետության կյանքը թող հարատև լինի, օրհնյալ հրամանագիր են շնորհել, որպեսզի հիշյալ Ուչքիլիսայի սնագլուխներին ու քահանաներին, որոնք շրջում են Իրանի, Վանի, Քրդստանի ու Ռումի տարբեր կողմերում՝ հայ համայնքներից *խումս, զաքյաթ, նազր* ու այլ [տուրքեր] հավաքելու նպատակով, գնալ-գալու հարցում *ռահդարներից,* ճանապարհների մաքսային ու պահակային ծառայողներից ոչ մեկը որևէ *ռահդարի* չպահանջի, իսկ ճանապարհին նրանց միացող սուրհանդակները չխոչընդոտեն Ձեր ծառայի մարդկանց ձիերի ու ջորիների պահանջով: Խնդրում ենք գերագույն արքայական սրբազնագույն ազնվագույն օրհնյալ ողորմածությամբ խղճալ և մի օրհնյալ հրամանագիր շնորհել, որպեսզի Ձեր ծառայի մարդկանց տարբեր շրջաններում անցուդարձի ժամանակ *ռահդարներից,* ճանապարհների մաքսային ու պահակային ծառայողներից ու սուրհանդակներից ոչ ոք չխոչընդոտի և բարի օրհնանքներ հղվեն, որոնք Ալլահն անտես չի առնի: Մնացյալն [ըստ] Նորին [Մեծության] գերագույն ու սրբազնագույն հրամանի:

Երկրորդ խնդրանքն այն մասին է, որ բարձրաստիճան գլխավոր զորահրամանատարը (սիփահսալար), *խանը, նայեբն* ու *ամիլները,* որ մտնում են Երևանի նահանգը, հավելյալ *փիշքաշի* [պահանջով] *շիլթաղ* են անում: Խնդրում ենք մահկանացուներին հովանավորողի, թող իմ հոգին նրա համար զոհաբերվի, օրհնյալ ողորմածությամբ խղճալ և մի օրհնյալ հրամանագիր շնորհել, որպեսզի թե' բարձրաստիճան գլխավոր զորահրամանատարը, թե' *խանը,* թե' *հաքիմը,* թե' *նայեբն* ու *ամիլները* որ մտնում են Երևանի *օլքան, փիշքաշի* հարցում *շիլթաղ* չանեն և բարի օրհնանքն անպակաս լինի: Մնացյալն [ըստ] Նորին [Մեծության] գերագույն ու սրբազնագույն հրամանի:

Երրորդ խնդրանքն այն է, որ երբեմն բարձրագույն *դիվանից* Երևանի բարձրաստիճան գլխավոր զորահրամանատարին, Նորին Գերազանցություն *խանին, նայեբին* ու *ամիլներին* ուղտ, ձի, ջորի և այլն է *հավալե* արվում, որ գալիս խեղճ աղոթող ծառայից են պահանջում, թե՝ Դուք գտեք: Ձեր ծառան հոգևորական մարդ է, որ նման գործերից գլուխ չի հանում: Խնդրում եմ Ձեր օրհնյալ ողորմածությամբ խղճալ Ձեզ համար աղոթողին և օրհնյալ հրամանագիր շնորհել, որպեսզի այս կապակցությամբ բարձրաստիճան պաշտոնյաներից, *խաներից, նայեբներից* ու *ամիլներից* ոչ մեկը [Ձեր] ծառային նեղություն չպատճառի, հանգիստ թողնեն աղոթքներով ու [Աստծու] փառաբանմամբ զբաղվել և բարի օրհնանքներ կհղվեն, որոնք Ալլահն անտես չի առնի: Մնացյալն [ըստ] Նորին [Մեծության] գերագույն ու սրբազնագույն հրամանի:

Որովհետև վանքի նվաստ կաթողիկոսը, որի պատիվը մշտապես Ֆարանգի [երկրներում] ու հայերի շրջանում կախված է եղել այս երկնային գահի փայլն ունեցող օջախի ողորմածությունից, օրերս արժանացավ [Նորին Մեծությանը] ներկայանալու պատվին և վերադառնում է, թող այնպես լինի, որպեսզի մեծագույն ողորմածության աննշան մասնիկը նվաստի վիճակի վրա անդրադառնա և հիշյալ ժողովրդի շրջանում մեծարվի գթառատ շեմքի հողը համբուրած լինելու համար: Մնացյալն [ըստ] Նորին [Մեծության] հրամանի»:

[Հակառակ կողմում]

Գրանցվեց *ռաղամների սարրեշթեում;*
Առաջին. ինչպես, որ նախկինում *ռաղամ* էր տրվել, այժմ էլ թող տան;
Երկրորդ. *բեկլարբեկերը* թող *շիլթաղ* չանեն;
Երրորդ կետը. եթե ձի, ուղտ, ջորի նշանակած լինեն, ապա թող իրական գնին համապատասխան գանձեն ու բռնության չդիմեն;
Չորրորդ կետը. թող *խալաթ* տրվի:
[Հայերեն]՝
[Կնիք]. «Ղազար կաթողիկոս, ՌՃՁԶ»:
Միրզայի *ռաղամն* է *ռախտարի* համար. և *խաներն* աւելի ընծա չառնէն թէ ձի, թէ ջորի, թէ ուղտ, թագաւորն *խաներէն* պահանջէ մեզանից չառնեն. ՌՃՁԹ (1740):

ՎԱՎԵՐԱԳԻՐ 16

Ռեզա Ղուլի Միրզայի 1740թ. հրամանագիրը, որով արգելվում են Երևանի նահանգից արտագաղթած քոչվոր ցեղերի կողմից հայերի մոտ թողնված գույքը, որ զավթել էին թուրքական զորքերը, ետ պահանջելը, նաև իրենց ազգականների ունեցվածքը ժառանգելու համար նոր մահմեդականացած հայերի վեճերը

Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 1դ, վավերագիր 483[161], բնագիր, մեծ. 26,7 x 40 սմ, գիր՝ շիքասթե, նասթալիղ

Նա է՝ Բարձրյալ Ալլահը

Բարձր հրաման եղավ հետևյալի մասին.

Որովհետև խնդրարկուն գրի առնված խնդրագրով դիմեց, ուստի նշված ունեցվածքներից ու գույքերից որոնք, որ տերերը կապացուցեն, որ հայերի մոտ են մնացել, ինչպես, որ նախկինում որոշվել էր, [դրանց] տերերին պետք է վերադարձվեն և ոչ թե պահվեն: Իսկ եթե տեղյակ անձանց ներկայությամբ հայտնի դառնա, որ Օսմանցիների նվաճման ժամանակ տարվել են, ապա

[161] Նույն վավերագրի պատճեն տես ՄՄ, կաթողիկոսական դիվանում, թղթ. 1գ, վավերագիր 369ա:

այս կապակցությամբ հիշյալ կաթողիկոսի խնդրագրի համաձայն հրապարակված սրբազնագույն, պարտադիր հպատակություն պահանջող, արեգակի բարձրությանը հասնող, գերագույն, օրհնյալ հրովարտակի արդար բովանդակությանը համապատասխան, թող վիճաբանությամբ չնեղեն և լուսաշող աշխարհասաստ հրամանագրի բովանդակությունից չչեղվեն: Եթե հայերից որևէ մեկն արժանանում է իսլամն ընդունելու պատվին, ապա թող նա իր ազգականների հետ ժառանգության վեճ չսկսի և հրամանին ու կարգին հակառակ *շիլթաղ* չանի: *Բեկլարբեկերը, ամիլները, դիվանի* գործերի *մուբաշիրները, մուհասիլներն* ու այլ [պաշտոնյաները] թող ոտնձգություններով ու բռնություններով նեղություն չպատճառեն նրանց, այլ այնպես անեն, որպեսզի հանգիստ ու ապահով իրենց գործերով զբաղվեն և ամեն հարցում թող [սույն] գրվածին համապատասխան գործադրեն: Այս թող ընդունեն որպես խիստ կարգադրություն և այն իրենց պարտականությունը համարեն:

Գրվեց 1152 թվականի շավալ ամսի 7-ին:

[Կնիք]. «… Ռեզա Ղուլի»:

Ամենանվաստ ծառա Երևանի Ուչքիլիսայի Ձեզ համար աղոթող Ղազար կաթողիկոսի խնդրագիրը

Գերագույն դրախտային հանդեսում կանգնածների բարձրությանն է հասցնում [հետևյալը]. «Երբ սրանից առաջ Օսմանցիների օրոք հանգուցյալ Թահմասպ Միրզան մտավ Երևան, այնտեղի բոլոր ցեղերին գաղթեցրեց Իրաքի կողմերը: Ցեղերի մարդկանցից յուրաքանչյուրը իր ունեցվածքն ու գույքը որպես վարձակալության, թողեց գյուղերում՝ հայերի տներում: Օսմանցիները այդ ամենը որպես *իլթիզամ* բոլոր տեղերից հավաքեցին ու զավթեցին՝ տանտերերին նույնպես վնաս հասցնելով: Այն բանից հետո, երբ մահկանացուների ողորմած հովանավորը, թող իմ հոգին նրա համար զոհաբերվի, փառքով ու հաջողությամբ Երևան ժամանեց, վերը նշվածի մասին զեկուցվեց և օրհնյալ հրամանագիր շնորհվեց ու կարգադրվեց, որպեսզի Օսմանցիների տարած ունեցվածքի ու գույքի համար դրանց տերերը չվիճեն ու պահանջներ չներկայացնեն: Այժմ երկնաբնակ տիրակալի ծառաներիդ զեկուցած լինելով՝ *մուհասիլներ* են նշանակվել: Այս ընթացքում ցեղերի մահմեդականներից նրանք, ովքեր մնացել էին, Օսմանցիների վախից լեռներն են փախել: Մահմեդականներից վկա չկա, նաև Օսմանցի չկա, որպեսզի վկայություն տա, իսկ հայերի վկայությունը չեն ընդունում: Եթե կարգադրվի, որ թշվառ *ռայաթները* պետք է փոխհատուցեն նշված գույքի ու ունեցվածքի համար, ի վիճակի չլինելով, կցրվեն, որի պատճառով *օլքան* կամայանա: Խնդրում ենք մահկանացուներիս հովանավորողի, թող իմ հոգին նրա համար զոհաբերվի, օրհնյալ ողորմածությամբ գթալ թշվառներիս *ռայաթներին*, քննություն անցկացնել և վերջ դնել անօրինականությանը: Եվ

Ալլահն այդ անտես չի առնի: Մնացյալն [ըստ] Նորին [Մեծության] գերագույն, փառահեղ ու սրբազնագույն հրամանի:

Երկրորդ խնդրանքը հետևյալն է. երբ հայերի համայնքից որևէ մեկը արժանանում է իսլամն ընդունելու պատվին ու մահմեդական դառնում, իր ազգականների հետ ժառանգության ու գույքի համար վեճ է սկսում: Այս *ռայաթների* ու խեղճերի ցաքուցրիվ լինելու պատճառ է դառնում: Թող մահկանացուներին հովանավորողի պետության կյանքը հարատև լինի. այս կապակցությամբ օրհնյալ հրամանագիր է շնորհվել: Խնդրում ենք Բարձրյալի ծառաներին գթալ և օրհնյալ հրամանագիր շնորհել, որ եթե հայերից որևէ մեկը մահմեդական դառնա, իր ազգականների հետ ժառանգության վեճի մեջ չմտնի, որի համար բարի օրհնանքներ կհղվեն, որոնք Ալլահն անտես չի առնի: Մնացյալն [ըստ] Նորին [Մեծության] գերագույն, փառահեղ ու սրբազնագույն հրամանի»:

[Հակառակ կողմում]

Գրանցվեց *ռաղամներին սարրեշթեում*:

Թող *ռաղամ* տրվի, որ վեճի մեջ չմտնեն:

Առաջինը պետք է … *հաքիմներին* համապատասխան հանձնարարություն տրվի:

[Հայերեն]՝

Միրզայի տուած ռաղամի սաւատն է, որ յայսմ հետէ ղրզըլպաշք վասն ’ի պահեստի եղեալ ապրանաց դաւի չառնեն ’ի հայոց նաև ոչ տաճկացեալք յազգականաց իւրեանց դաւի արասցեն թվին ՌՃԷԹ:

ՎԱՎԵՐԱԳԻՐ 17

Նաղիր շահի 1741թ. հրամանագիրը, որով արգելվում է հայերին բռնի մահմեդականացնելը

Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 1գ, վավերագիր 370, պատճեն, մեծ. 13,3 x 31,3 սմ, գիր՝ շիքասթե, նասթալիղ

Նա է:

Հանուն Ալլահի

Գերագույն, սրբազան օրհնյալ կնիքի տեղը

Բարձրյալ Ալլահին եմ ապավինում:

Արքայական հրաման եղավ, որպեսզի պաշտպանության տակ գտնվող երկրների *հաքիմներից* ու *ամիլներից* յուրաքանչյուրն իրեն ենթակա *մահալում* պարզելով իրողությունը՝ թույլ չտա, որպեսզի որևէ մեկը հայերի կանանց, տղաներին ու աղջիկներին բռնի պարտադրի մահմեդականանալ: Կարգադրությանը հակառակ արարքները կպատժվեն: Թող այս իրենց պարտականությունը համարեն:

Գրվեց 1154 ջումադի առաջին ամսին[162]:

Ամենանվաստ ծառա Երևանի Ուչքիլիսայի Ձեզ համար աղոթող Ղազար կաթողիկոսի խնդրագիրը

Սատուրնի ուղեծրին հասնող պալատում բնակվողների բարձրությանն է հասցնում [հետևյալը]. «Վերջին ժամանակներս հայ կանանց իրենց հոժար կամքով կամ բռնի կնության առնելով՝ մահմեդականացնում են նրանց նախկինում ունեցած երեխաներին: Բացի այդ, որոշ մարդիկ որտեղ, որ հանդիպում են գեղեցկադեմ ու հաճելի աղջկա կամ տղայի, գերեվարում ու բռնի մահմեդականացնում են: Այս պատճառով բռնություն է տեղի ունենում *զիմմի* խեղճերիս հանդեպ: Իմ երկրպագելի տերն ու հովանավորը փառահեղ ու մեծահոգի է, հիշյալ խնդրի կապակցությամբ ինչպես, որ նպատակահարմար կգտնի ու կկարգադրի, թող ըստ նրա գործադրվի: Քանի որ անհրաժեշտ էր, այս երկու բառով համարձակվեցի դիմել: Մնացյալը թող լինի ըստ գերագույն *ֆերմանի* և փառավոր ու մեծահոգի հարատև բարեհաճության»:

[Հակառակ կողմում]

Սավադը համապատասխանում է բնագրին, [կնիք]. «Չկա Աստված բացի Ալլահից, նրանն է իշխանությունն ու արդար օրենքը, Աստծո ծառա Ռեզվան»;

Սավադը համապատասխանում է բնագրին, իսկ բնագիրը պալատի ծառայի *զաբթում* է, [կնիք]. «Ղազար կաթողիկոս, ՌԵՁԶ»:

ՎԱՎԵՐԱԳԻՐ 18

Նադիր շահի 1741թ. հրամանագիրը, որով հրահանգվում է Իրանի տեղական իշխանություններին չմիջամտել հայերի դավանանքին վերաբերող գործերին և, մասնավորապես, չնպաստել հայերի կաթոլիկացմանը

Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 1գ, վավերագիր 375ա, բնագիր, մեծ. 25,5 x 37 սմ, գիր՝ շիքասթե, նասթաալիղ

Հանուն Ալլահի

[Կնիք][163]

Բարձրյալ Ալլահին եմ ապավինում:

Արքայական հրաման հրապարակվեց, որպեսզի թագավորանիստ Սպահանի, Թիֆլիսի, Թավրիզի, Համադանի, Նախիջևանի և այլ [վայրերի] *հաքիմները* ներկայացված խնդիրների առնչությամբ ոչ մի դեպքում չմիջամտեն հայերի հավատին ու դավանանքին: Այդ ժողովրդից նրանք, որ *ֆարանգի* դավանանքին են անցել, եթե քրիստոնյաների առաջնորդ խնդրարկուի հորդորներին ու արգելքներին չենթարկվեն, թող [*հաքիմներից*] յուրաքանչյուրն իրեն ենթակա *մահալում* պատժի ու թույլ չտա, որպեսզի *ֆարանգիները* այդ ժողովրդին խաբելով հայոց հավատից ու ժողովրդից հեռացնեն, որի համար պատասխանատվության են կանչվելու: Այս հարցում թող գրվածին համապատասխան կարգադրված համարեն: Եվ թող այս իրենց պարտականությունը համարեն:

Գրվեց 1154 թվականի ջումադի առաջին ամսին:

Ամենանվաստ ծառա Երևանի Ուչքիլիսայի Ձեզ համար աղոթող Ղազար կաթողիկոսի խնդրագիրը

Գերագույն օրհնյալ դրախտային հանդեսում կանգնածների բարձրությանն է հասցնում [հետևյալը]. «Քանի որ հայերի ընտրյալ կաթողիկոսի ու հովվապետի դիրքը այս ծեր օրհնաբանող ծառային են շնորհել ու պատվել, ուստի անհրաժեշտ եմ համարում հավերժական պետության դեմ տեղի ունեցող բոլոր իրողությունների մասին զեկուցել գերագույն գահի ոտքերում կանգնածներին, հակառակ դեպքում ինձ ապերախտ կհամարեմ: Ձեր օրհնյալ ոտնատեղի հողը թող դառնամ, որովհետև Ձեր ծառայի գտնվելու վայրը մոտ է գտնվում Ռումին ու Ֆարանգին, ինքս տեղյակ եմ նրանց ձևերին. Ֆարանգի թագավորների մոտ ընդունված է յուրաքանչյուր *վիլայեթ* նպատակային կերպով *պատրիկ* ուղարկել, որպեսզի նա գնա, այնտեղի բնակիչներին և հայ ժողովրդին մոլորեցնի ու հույսեր տալով նենգորեն *ֆարանգի* դարձնի: Եվ բացի այդ օրեցօր այս կերպ *վիլայեթներում* լրտեսություն են անում և բոլոր դեպքերի մասին, որ որևէ վայրում տեղի են ունենում, գրում-ուղարկում են իրենց թագավորին: Սպահանի Ջուղայում ու Թիֆլիսում մոտավորապես կեսը *ֆարանգի* է դարձել: Նույն կերպ նշված *պատրիկները* որոշակիորեն ակտիվ են Համադան, Թավրիզ քաղաքներում, Նախիջևանում, Գանձակում ու Դերբենդում: [Նորին Մեծության համար] թող զոհաբերվեմ, Ձեր ծառայի խնդրանքը միայն հայերի հավատի պաշտպանությունը չի, այլև այն, որ *վիլայեթին* և *դիվանի* ունեցվածքին վնաս չհասնի: Գնացողների *մութավաջջեհաթը* մնում է մնացող հայերի վրա, որոնք չեն դիմանում, աղքատանում ու ոչնչանում են: Եթե հայերի դրության կապակցությամբ որևէ բան չձեռնարկվի, աստիճանաբար կթուլանան և կոչնչանան, որը այս ծառայի թերացումն ու ապերախտությունը կհամարվի, ուստի խնդրում ենք աշխարհի ու մահկանացուների ապավենին որպես գերագույն, արքայական, բարձր, սրբազնագույն օրհնյալ առանձնահատուկ ողորմություն վճռական *ռաղամ* շնորհել Ձեր ծառային, որպեսզի *հաքիմները* հայերի հավատի գործերին չմիջամտեն, հայերից ով էլ, որ *ֆարանգի* դարձած լինի, և այս ծառան նրան արգելի, բայց նրա հորդորները չլսի, եթե բարձրագույն *ռաղամի սավադը* ուղարկի այն *մահալի հաքիմի* ու *զա-*

[162] 1741թ. հուլիսի 15 – օգոստոսի 14:

[163] Տես վավերագիր 13-ի կնիքը:

բիթի մոտ, որտեղ մոլորեցնում և *ֆարանգի* են դարձնում, որպեսզի նա որևէ բան որպես կաշառք չվերցնի, այն հայի տունն ու ունեցվածքը բռնագրավի հօգուտ բարձրագույն *դիվանի* և իրեն քաղաքից վտարի, որից բարձրագույն *դիվանի* ունեցվածքը կավելանա: Մնացյալն [ըստ] Նորին [Մեծության] բարձրագույն հրամանի»:

[Հակառակ կողմում]

Արքայական *ռաղամը* գրանցվեց; [կնիք];

ՎԱՎԵՐԱԳԻՐ 19

Նաղիր շահի 1741թ. հրամանագիրը Օսմանյան Թուրքիայից կաթողիկոսի ջանքերով Երևանի Վաղարշապատ, Օշական, Մաստարա, Ֆրանկանոց և Նախիջևանի Ջահուկ գյուղերը գաղթեցված հայերին չանհանգստացնելու վերաբերյալ

Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 1գ, վավերագիր 376, բնագիր, մեծ. 17,3 x 27,3 սմ, գիր՝ շիքասթե, նասթալիղ

Հանուն Ալլահի

[Կնիք][164]

Բարձրյալ Ալլահին եմ ապավինում:

Արքայական հրաման հրապարակվեց հետևյալի մասին.

Ուչքիլիսայի, Ջահրիկի (Ջահուկ) ու նշված այլ *մահալներից* նրանց, ում խնդրարկուն թե' հնում թե' ներկայումս Ռումի *վիլայեթներից* հորդորելով բերած լինի, որպեսզի այլ *մահալի ռայաթները* չդառնան, ոչ ոք նրանց չպետք է նեղի: Պետք է թողնեն, որպեսզի *ռայաթների* գործերով զբաղվեն և հիշյալ *մահալը* շենացնեն: Եվ թող այս իրենց պարտականությունը համարեն:

Գրվեց 1154 թվականի ջումադի առաջին ամսին:

Ամենանվաստ ծառա Երևանի Ուչքիլիսայի Ձեզ համար աղոթող Ղազար կաթողիկոսի խնդրագիրը

Սատուրնի ուղեծրին հասնող պալատում կանգնածների բարձրությանն է հասցնում [հետևյալը]. «Քանզի Փառաբանյալի ողորմածությամբ գերագույն սրբազնագույն ծառաների հավերժական պետությունում կարգուկանոն, կայունություն ու արդարություն է հաստատվել, գիշեր ու զօր աղոթում եմ հաղթական պետության հարատևման համար: Մշտապես Ալլահի ստվեր շահանշահի արդարության ու կարգուկանոնի մասին գրելով՝ [մարդիկ] եմ ուղարկում Օսմանցիների և Քուրդիստանի *վիլայեթը*, իմ ապավենի պետությամբ հուսադրում ու սիրաշահում և հորդորելով գաղթեցնում, բերում եմ Երևանի Ուչքիլիսա, Օշական, Ֆրանկանոց, Մաստարա և Նախիջևանի Ջահրիկ գյուղերում բնակեցնում, որպեսզի այդ *մահալները*, որ քիչ են բնակեցված, իմ ապավենի մեծահոգության շնորհիվ վերականգնվեն և *դիվանի* ունեցվածքը շատանա: Որոշ մարդիկ եկել, հիշյալ *ռայաթներին* բռնությամբ գյուղերից դուրս են անում և փոխադրում այլ գյուղեր: Այս պատճառով հիշյալ *ռայաթները,* հուսահատված, նորից փախչում, վերադառնում են իրենց նախկին բնակավայրերը: Նվաստիս հեղինակությունը ընկնում է, և վնաս է հասցվում *դիվանի* հարստությանը: Խնդրում ենք գերագույն մեծահոգի Նորին Մեծության բարձր սրբազնագույն ողորմածությամբ երկու խոսքով հրամանագիր շնորհել, որպեսզի այն *ռայաթներին*, որոնց նվաստս հորդորելով բերել եմ, ոչ ոք նեղություն չպատճառի, և նրանք հանգիստ հիշյալ գյուղերում բնակվեն: Մնացյալն [ըստ] Նորին [Մեծության] բարձրագույն հրամանի»:

[Հակառակ կողմում]

[Կնիք];

[Հայերեն]՝

[Կնիք]. «Ղազար կաթողիկոս, ՌՃՁԶ»;

Շահի տված ռաղամն է՝ որ թէ ես յայլ տեղեաց ռահաթ բերել տամ 'ի սուրբ Էջմիածնի գեօղս՝ և կամ 'ի Ճահուկ՝ ոչ ոք չխօսի:

ՎԱՎԵՐԱԳԻՐ 20

Նաղիր շահի 1741թ. հրամանագիրը, որով արգելվում են պետական պաշտոնյաների ու հոգևորականների միջամտությունը հայերի հավատին վերաբերող խնդիրներին և նրանց կրոնական օրենքների խախտումը

Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 1գ, վավերագիր 377, պատճեն[165], մեծ. 23 x 43սմ, գիր՝ շիքասթե, նասթա'լիղ

Հանուն Ալլահի

Հպատակեցնող գերագույն, սրբազնագույն, արքայական օրհնյալ կնիքի տեղը

Ապավինում եմ Բարձրյալին:

Արքայական հրաման եղավ հետևյալի մասին.

[164] Տե'ս վավերագիր 13-ի շահական կնիքը:

[165] Պահպանվել է սույն վավերագրի նաև մեկ այլ պատճեն, հաստատված Ղազար կաթողիկոսի կնիքով, որը ամբողջովին կրկնելով այս հրովարտակի տեքստը տարբերվում է միայն թվականով. այնտեղ նշվում է հիջրայի 1157 թվականի ջումադի I-ը (ՄՄ, կաթողիկոսական դիվան, թղթ. 1գ, վավ. 391): Մեր կարծիքով ավելի հավանական է այս պատճենի նշած թվականը, քանզի նույն ամսաթվով (1154հ.թ. ջումադի I) հրապարակված են նաև մի քանի այլ հրովարտակներ:

Ամենալուսավոր *շար'ի* անդամները, *զաբիթները, դիվանի ամիլները* և գեղջավագները … ոչ մի դեպքում չպետք է միջամտեն հայերի ու [նրանց] հոգևորականների հավատի գործերին: [Նրանք] պետք է թույլ տան, որպեսզի իրենց կրոնի սովորություններին ու օրենքներին համապատասխան վարվեն: Կարգադրվեց, որպեսզի *քալանթարը, մելիքը* և բոլոր հայերը, [սույն] գրությանը համապատասխան որոշված համարեն: Հրամանին թող չհակառակվեն, հիշյալ գործերին չմիջամտեն և այս իրենց պարտականությունը համարեն:

Գրվեց 1154 թվականի ջումադի առաջին ամսին:

Ամենանվաստ ծառա Երևանի Ուչքիլիսայի Ղազար կաթողիկոսի
խնդրագիրը

Սատուրնի ուղեծրին հասնող գերագույն արքայական պալատում կանգնածների բարձրությանը զեկուցում է [հետևյալը] «Հայերի հին օրենքով ազգականի հետ ամուսնությանը, կնոջն ապահարզան տալն ու այլ կնոջ հետ ամուսնությունը, երկու կին ունենալը ծառաներիդ [Սուրբ] գիրքը չի թույլատրում: Նվաստս լիազորված եմ, որպեսզի բոլոր նրանց, ովքեր իրենց հավատից ու ուղուց դուրս են գալիս, արգելեմ ու կարգի հրավիրեմ: Մինչ այժմ ոչ ոք մեր հավատի սովորություններին չի միջամտել ու [նրանց հետ] առնչություն չի ունեցել: Այժմ որոշ մահմեդական, *զիմմի*, հայ պաշտոնյաներ, *ամիլներ* ու գեղջավագներ այսպիսի անօրինականություններ են գործում. ազգականների հետ ամուսնանում են, կանանց ապահարզան են տալիս, նաև այլ անհարկի արարքներ են անում: Որոշ սևագլուխների իրենց կողմը գրավելով՝ նման անօրինականությունների պաշտպանն են դարձնում և օրինաբանողներիս ունեցվածքը ոչնչացնում, թույլ չեն տալիս նրանց տեղեկացնենք ու որևէ բան ձեռնարկենք: Եվ իսլամի որոշ իրավագետներ հայերի հետ ամուսնանալով՝ [մյուսներին ևս] թույլատրում են՝ այս առումով մեծ վնաս ու նեղություն պատճառելով խեղճերիս: Խնդրում ենք ծառաներիդ հանդեպ անսահման ողորմածությամբ երկու խոսք շնորհ անել, որպեսզի հին կարգի համաձայն որևէ մեկը մեր հավատին չմիջամտի ու նեղություն չպատճառի, որպեսզի ամեն պահ օրհնանքներ հղվեն: Ըստ Նորին [Մեծության] բարձրագույն հրամանի»:

[Հակառակ կողմում]

1) *Սավադը* համապատասխանում է գերագույն բնագրին. Հաջի Ռեզվանի կնիքի տեղը;

2) Հպատակեցնող օրհնյալ *ռաղամի սավադը* համապատասխանում է *սավադին*, որը համեմատվել է Նորին Գերազանցություն Հաջի Ռեզվանի կողմից ու [հաստատվել նրա] կնիքով. գրող՝ [կնիք]. «…1154»:

[Հայերեն]՝

Նատր շահի *ռաղամի սաւադն* է, որ *օմմալ, հաքիմ* կամ *ախունդ* և այլք թուրք սևագլխաց չընխօսին և ոչ ի յօրէնս հայոց խառնվեն: 'Ի թուին տաճկաց ՌԵՃԴ (1154):

ՎԱՎԵՐԱԳԻՐ 21

Նաղիր շահի 1741թ. հրամանագիրը, որով Երևանի նահանգի բարձրաստիճան պաշտոնյաներին կարգադրվում է արգելել ռահդարների նստավայրը Վաղարշապատ գյուղում

Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 1գ, վավերագիր 378ա, բնագիր, մեծ. 17,5 x 27սմ, գիր՝ շիքասթե, նասթալիղ

Հանուն Ալլահի
[Կնիք][166]
Բարձրյալին եմ ապավինում:

Արքայական հրաման հրապարակվեց, որպեսզի Երևանի *մահալի* բարձրաստիճան *բեկլարբեկն* ու *ամիլները*, հաշվի առնելով ներկայացված խնդիրները, եթե բարձրագույն հրամանագրով կարգադրված չի եղել, որպեսզի այդ *մահալում ռահդար* բնակվի, ապա թող նա այն վայրում բնակվի, որտեղ ընդունված է եղել, որպեսզի *ռահդարները* մշտապես բնակվեն և ապօրինաբար այն *մահալի ռայաթներին* չնեղեն, նրանց նկատմամբ չարաշահումներ ու անօրինականություններ չգործեն: Թող այս իրենց պարտականությունը համարեն:

Գրվեց 1154 թվականի ջումադի առաջին ամսին:

Ամենանվաստ ծառա, Երևանի Ուչքիլիսայի Ձեզ համար աղոթող Ղազար
կաթողիկոսի խնդրագիրը

Սատուրնի ուղեծրին հասնող պալատում կանգնածների բարձրությանը զեկուցում է [հետևյալը]. «Հին ժամանակներում Ուչքիլիսա գյուղում *ռահդար* չի նստել. նրանք այլ վայրերում են նստել: Այժմ *ռահդարը* գալիս, նստում է հիշյալ գյուղում, Ուչքիլիսա գնացող եկողին, գյուղի մյուս *ռայաթներին* նեղում: Քանի որ հիշյալ գյուղի *ռայաթները* հայեր են, ամեն կարգի անօրինական պահանջներ են ներկայացնում խեղճերին ու բռնությունների դիմում թշվառների նկատմամբ: Խնդրում ենք Նորին գթառատ Մեծությանը որպես գերագույն ազնվագույն օրհնյալ ողորմություն երկու բառով հրամանագիր շնորհել, որպեսզի նախկինի պես, որտեղ, որ *ռահդարները* նստել են, այնտեղ շարունակեն նստել, և իրենց գործերով ու պարտականություններով զբաղվեն, որպեսզի ամեն պահ բարի օրհնանք հղվի սրբազան էությանը: Ըստ Նորին [Մեծության] բարձրագույն հրամանի»:

[166] Տե'ս վավերագիր 13-ի շահական կնիքը:

[Հակառակ կողմում]
Գրանցվեց որպես պարտադիր հպատակություն պահանջող *ռաղամ*:
[Կնիք];
[Հայերեն]՝
[Ղազար կաթողիկոսի կնիքը]. «Ղազար կաթողիկոս, ՌՃՁԶ»:
Նատր շահի տված *ռաղամն* է, որ 'ի սուրբ Էջմիածնի գեօղումս *ռահդար* չնստի: ՌՃԾԴ (1154):

ՎԱՎԵՐԱԳԻՐ 22
Նադիր շահի 1741թ. հրամանագիրը, որով արգելվում է զինվորականներին առանց օրինական փաստաթղթի գումար պահանջել Երևանի Ուչքիլիսա, Օշական, Ֆրանկանոց ու Մաստարա, Նախիջևանի Ջահրիկ գյուղերից

Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 1գ, վավերագիր 379, բնագիր,
մեծ. 18 x 27սմ, գիր՝ շիքասթե, նասթալիղ

Հանուն Ալլահի
[Կնիք][167]
Բարձրյալ Ալլահին եմ ապավինում:

Արքայական հրաման եղավ հետևյալի մասին.

Ներկայացված իրողությունները հաշվի առնելով՝ հավատի բարեբախտ զինվորներից և այլ ոչ ոք ոչ մի դեպքում չպետք է առանց հպատակեցնող հրամանագրի, օրինական ու գրանցված փաստաթղթի նեղի Ուչքիլիսայի գյուղերի ու խնդրարկուին պատկանող *մահալների ռայաթներին*: Կարգադրությանը հակառակվելու դեպքում ծառան պատասխանատվության կկանչվի: Թող այս իրենց պարտականությունը համարեն:

Գրվեց 1154 թվականի ջումադի առաջին ամսին:

Ամենանվաստ ծառա Երևանի Ուչքիլիսայի Ձեզ համար աղոթող Ղազար կաթողիկոսի խնդրագիրը

Սատուրնի ուղեծրին հասնող պալատում բնակվողների բարձրությանն է հասցնում հետևյալը. «Քանի որ գիշեր ու զօր աղոթում եմ ծառաներիդ հավիտենական պետության հարատևման համար, ուստի խնդրում եմ որպես օրինյալ ու վսեմ ողորմություն երկու խոսքով գերագույն արքայական, սրբազնագույն ու ազնվագույն *ռաղամ* շնորհել, որպեսզի առանց *դիվանի* հպատակեցնող օրինյալ *ռաղամի* ու օրինական փաստաթուղթի, *դիվանի* կամ *վիլայեթի* [իշխանությունների] կողմից հրապարակված *բարաթ* չունեցող որևէ մեկը Երևանի Ուչքիլիսա, Օշական, Ֆրանկանոց ու

[167] Տե՛ս վավերագիր 13-ի շահական կնիքը:

Մաստարա և նվաստիս ծննդավայրը հանդիսացող Նախիջևանի Ջահրի գյուղերի *ռայաթներից* կանխիկ գումարով կամ բնամթերքով. ցախ, ծղոտ կամ այլ որևէ բան ապօրինաբար չպահանջի և խեղճերի նկատմամբ բռնություն չգործի: Պետք է նրանց թողնեն հանգիստ ու ապահով իրենց գործերով զբաղվել և բարի օրինանք հղել սրբազնագույն էությանը, որը Ալլահն ու մարգարեն անտես չեն առնի: Ըստ Նորին [Մեծության] բարձրագույն հրամանի»:

[Հակառակ կողմում]
Գրանցվեց որպես պարտադիր հպատակություն պահանջող *ռաղամ*;
[կնիք];
[Հայերեն]՝
Նատր շահի տված *ռաղամն* է, որ թէ շահէն *ռաղամ* չլինի և կամ 'ի *դիւանէն բարաթ* չլինի, ամենևին զատ չտամք, ոչ մեք և ոչ մեր գեօղքն. 'ի ՌՃԾԴ տաճկաց:

ՎԱՎԵՐԱԳԻՐ 23
Նադիր շահի 1741թ. հրամանագիրը, որով Իրանի պետական պաշտոնյաներին կարգադրվում է սահմանափակել կաթոլիկ միսիոներների գործունեությունը հայերի շրջանում

Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 1գ, վավերագիր 380, բնագիր,
մեծ. 25,8 x 45,5 սմ, գիր՝ շիքասթե, նասթալիղ

Հանուն Բարձրյալ Ալլահի
[Կնիք]. «Պետության ու հավատի գոհարը կորել էր, երբ նրա փոխարեն
Աստված Իրանը հաստատեց ընտրյալի [իշխանության][168] տակ»
Բարձրյալին եմ ապավինում:

Արքայական հրաման եղավ, որպեսզի *վիլայեթների հաքիմներն* ու *ամիլները* քրիստոնյա քահանայապետ կաթողիկոսի դիմումում նշված *ֆարանգիների* կապակցությամբ, որոնք հայերին *ֆարանգի* դավանանքին են դարձնում և *ֆարանգի վիլայեթը* ուղարկում, վերոհիշյալ քահանայապետի ծանուցմանն ու ցուցակին համապատասխան, յուրաքանչյուրը իրեն ենթակա *մահալում* թող նրանցից գրություն վերցնի, որ այլևս չեն նեղելու հայերին ու չեն խոչընդոտելու նրանց սովորույթներին: Եվ այս թող ընդունեն որպես խիստ կարգադրություն, կաթողիկոսի գրությանն ու ծանուցմանը այս հարցում վստահեն ու հաստատելով՝ անհրաժեշտ օգնություն ցուցաբերեն: Թող ոչ մեկին հակառակվելու ու ըմբոստանալու հնարավորություն չտան և այս իրենց պարտականությունը համարեն:

Գրվեց 1154 թվականի մեծ շա'բան ամսին[169]:

[168] Բառախաղ Նադիր անվան և նրա պարսկերեն նշանակության հետ:

Ամենանվաստ ծեր ծառա Երևանի Ուչքիլիսայի Ձեզ համար աղոթող
Ղազար կաթողիկոսի խնդրագիրը

Գերագույն, սրբազնագույն, երկնային գահին նմանվող գահի ոտքերում կանգնածների կայանին է հասցնում [հետևյալը]. «Թող Ձեզ համար զոհաբերվեմ, քանի որ Իրանի պաշտպանության տակ գտնվող շրջանների գթառատ շեմքի ծառաներից ու ստրուկներից յուրաքանչյուրի հնազանդությունը պարտադրում է, որպեսզի յուրաքանչյուր գործում հոգա դարավոր պետության բարօրության մասին և այն երկրի ու նրա խեղճ բնակիչների, որոնք Արարչի ստեղծած էակներն են, իրական դրության մասին հասցնի փառքի հանգրվանը վերագտնողներին: Նաև բոլորին հայտնի է, որ *ֆարանգի պատրիկները* թե' Ռումի *վիլայեթում,* թե' Ուռուսի (Ռուսիայի) երկրում ու այլ *վիլայեթներում* լրտեսության պատճառով, որը դավաճանություն է համարվում, թույլ չեն տալիս մուտք գործել, և [նրանք] վախից այն կողմերում չեն հայտնվում… Այժմ Իրանի *վիլայեթում* գլուխ են բարձրացրել և անվախ ու ինքնագլուխ կերպով ամենուր շրջում են, այնպես, որ նրանց՝ *պատրիկների* մոտ մարդիկ են գնում-գալիս, եկել են նաև սրբազնագույնի ծառաների մոտ, ծանոթություն են հաստատում ու խառնակություն գցելով՝ հայերին *ֆարանգի* դարձնում: Թող Ձեզ համար զոհաբերվեմ, նշված պատրիկները բոլոր *վիլայեթներում* ու քաղաքներում, ուր բնակվում են, բոլորը հարուստ են և տեղի *հաքիմներին* ոսկի տալով՝ իրենց են ենթարկում ու վերջիններս նրանց խոսքին հակառակ չեն գնում: Հայ մարդկանց մոլորեցնելով ու նենգորեն *ֆարանգի* են դարձնում և աստիճանաբար խեղճերիս ժողովուրդը մասնատվելով թուլանում է: Եվ բազմիցս մարդիկ, որոնք *ֆարանգի* են դառնում, *ֆարանգի վիլայեթն* են գնում, այնտեղ բնակություն հաստատում, և *դիվանի* հարստությանը վնաս է հասնում: *Վիլայեթների հաքիմների* թուլության հետևանքով օրեցօր [ավելի շատ են] *ֆարանգի* դառնում: Թող Ձեզ համար զոհաբերվեմ, նշված իրողությունների կապակցությամբ բարձրագույն *ռաղամ* է շնորհվել: [Բայց] յուրաքանչյուր *վիլայեթի հաքիմ* կողմնապահություն է անում, և աշխարհասաստ հրամանագիրը չի գործադրվում: Վերևում՝ Աստված, ներքևում՝ բացի գերագույն սրբազնագույն գթասրտությունը այլ հույս ու ապավեն չկա: Ամեն ոք իր հավատի ծառան է: Խնդրում ենք աշխարհականների հովանավորին, որի արդարադատությունն ու ողորմածությունը արևից էլ պարզ է, խեղճերիս գթալ և *զաբիթների* ծառաներին *վիլայեթներում* կարգադրել, որպեսզի Ուչքիլիսայում այս կապակցությամբ ինչ, որ Ձեզ համար աղոթող ծեր ծառան հանգամանալից կերպով գրի և ուղարկի յուրաքանչյուր *վիլայեթի հաքիմի* մոտ, և որտեղ էլ, որ հայերը *ֆարանգի* դարձած լինեն, փնտրեն ու գտնեն, նրանց ունեցվածքն ու հարստությունը Մեր ապավենի, թող մեր հոգիները նրա համար զոհաբերվեն, *սարքարը* բռնագրավի ու նրանց պատժի, որպես-

[169] 1741թ. հոկտեմբերի 12 – նոյեմբերի 10:

զի աշխարհականների հովանավորի հրամանագիրը գործադրվի և մյուսների համար դաս լինի, որի համար բարի օրինանք կհղվի: Մնացյալն [ըստ] Նորին [Մեծության] բարձրագույն հրամանի»:

[Հակառակ կողմում]

[Կնիք];
[Հայերեն]՝
[Կնիք]. «Ղազար կաթողիկոս, ՌՃՁԶ»;
Շահի ռաղամն է որ հայք չֆռանգանան:

ՎԱՎԵՐԱԳԻՐ 24

Նաղիր շահի 1743թ. հրամանագիրը, որով Երևանի նահանգի բարձրաստիճան պաշտոնյաներին կարգադրվում է արգելել ռահդարների նստավայրը Վաղարշապատ գյուղում

Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 1գ, վավերագիր 378բ, պատճեն, մեծ. 14,5 x 24սմ, գիր՝ շիքասթե, նասթալիղ

Հանուն Ալլահի
Գերագույն, սրբազնագույն օրինյալ կնիքի տեղը
Բարձրյալին եմ ապավինում:

Արքայական հրաման եղավ, որպեսզի Երևանի *մահալի* բարձրաստիճան *բեկլարբեկը* և *ամիրները* ամեն առումով վարվեն այնպես, ինչպես հին կարգն է. *ռահդարի* նստավայրի հարցում նորամուծություններ չանեն: Կարգադրությանը թող չհակառակվեն և այն իրենց պարտականությունը համարեն:

Գրվեց 1156 թվականի հաղթական սաֆար ամսին[170]:

Ամենանվաստ ծեր ծառա Երևանի Ուչքիլիսայի Ձեզ համար աղոթող
Ղազար կաթողիկոսի խնդրագիրը

Սատուրնի ուղեծրին հասնող գերագույն արքայական պալատում կանգնածների կայանին հասցնում է [հետևյալը]. «Երևանի *օլքայի ռահդարները* գալով և Ուչքիլիսա գյուղում բնակություն հաստատելով՝ գիշեր-ցերեկ հարբեցողությամբ են զբաղվում, հարբում, գնում են *ռայաթների* տները, զանազան անկարգություններ են անում՝ անհանգստացնելով խեղճերիս տնեցիներին: *Ռայաթների* պատիվը նրանց ձեռքին է մնացել: Հին ժամանակներից այդպիսի կարգ ու սովորություն չի եղել, որպեսզի *ռահդարը* հիշյալ գյուղում բնակվի: *Ռահդարները* հնուց ի վեր և այժմ էլ Աղջաղալե գյուղում ու Թալիշի քրդերի մոտ են բնակվել ու այժմ էլ այնտեղ են բնակվում և, չորս կողմերը մարդ ուղարկելով, բեռներով անցուդարձ անողներից *ռահդա-*

[170] 1743թ. մարտի 27 - ապրիլի 25:

ռի գանձում: Ուչքիլիսա գյուղում չկա որևէ բան բացի բամբակից, որից *ռահդարի* է գանձվում և ով, որ բամբակ է գնում, ինչպես էլ, որ տանի սովորական *ռահդարի* է վճարում ճանապարհների պահակակետերին: *Ռահդարները,* որ հիշյալ գյուղում բնակվում են, խեղճ *ռայաթներին* նեղություն պատճառելուց բացի այլ գործ չունեն: Սրանից առաջ Ձեր ամենանվաստ օրհնաբանող ծառան այս իրողության մասին օրհնյալ հովանավորի դռանը զեկուցել է, և դրա հիման վրա արգելվել էր այնտեղ *ռահդարների* բնակությունը: Սակայն բարձրագույն օրհնյալ *ռաղամի* բովանդակությանը համապատասխան չեն վարվում և նրան չեն հնազանդվում: Խնդրում ենք վերստին արեգակնափայլ բարձրագույն օրհնյալ *ռաղամ* շնորհել, որպեսզի հիշյալ *օլքայի ռահդարը* նստի այնտեղ, որտեղ որ հին ժամանակներից ի վեր բնակվել է, Ուչքիլիսա գյուղի խեղճ ու աղքատ *ռայաթներին* նեղություն չպատճառի, և որպեսզի ամեն պահ բարի օրհնանքներ հղվեն: Ըստ Նորին [Մեծության] բարձրագույն հրամանի»:

[Հակառակ կողմում]

Սավաղը համապատասխանում է բնագրին, որը գտնվում է պալատական ծառայի մոտ:

Գրանցվեց որպես պարտադիր հպատակություն պահանջող *ռաղամ*:

ՎԱՎԵՐԱԳԻՐ 25

Նաղիր շահի 1745թ. հրամանագիրը, որով արգելվում է Շիրվանի իշխանություններին անհանգստացել իր հայրենի Դիզակ վերադարձած նախկին մելիքին

Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 2բ, վավերագիր 223, բնագիր,
մեծ. 21,5 x 32 սմ, գիր՝ շիքասթե, նասթալիղ

Հանուն Ալլահի
[Կնիք][171]
Ապավինում եմ Բարձրյալին:

Արքայական հրաման եղավ հետևյալի մասին.

Եթե խնդրարկուն հին ժամանակներից եղել է Դիզակի *մահալի ռայաթը*, և 30-40 տարի առաջ այնտեղ բնակվելով *մումայիզների* հաշվառմանը համապատասխան *մութավաջեհաթ* և *հողդուղ-ե դիվանի* է *աբվաբ-ե ջամ'* արվել նրան այնտեղ, Շիրվանի մարդկանցից ոչ ոք չպետք է հրամանին ու կարգին հակառակ նրա նկատմամբ ոտնձգություն ու չարաշահում թույլ տա: Եվ թող այս իրենց պարտականությունը համարեն:

Գրվեց 1158 թվականի սրբազան մուհարրամ ամսին[172]:

[171] Տե'ս վավերագիր 23-ի շահական կնիքը

Ամենանվաստ ծառա Դիզակի բնակիչ հայ *մելիքի* ու զորահրամանատարի խնդրագիրը

Գերագույն, սրբազնագույն երկնային գահին նմանվող ճակատագրի կայսրության գահի հիմքը վերագտածների բարձրությանը հասցնում է [հետևյալը]. «Թող Նորին Մեծության օրհնյալ ոտնատեղիին զոհաբերվեմ, նվաստիս հայրերի ու պապերի հայրենիքը Դիզակն է եղել: Ռումի [տիրապետության] շրջանում նվաստս գնացի, որոշ ժամանակ Շիրվանում բնակվեցի: Բայց երբ գերագույն արքայական շքախումբը պատիվ արեց ժամանելու Գանձակ, նվաստներս վերադարձանք Դիզակ և մեր *ռայաթական* գործերին անցանք՝ վճարելով *դիվանի մութավաջեհաթը*: Այժմ Շիրվանի համայնքից եկել, ցանկանում են բռնի կերպով նվաստիս տանել: Թող Ձերդ Մեծության համար զոհաբերվեմ, նվաստս ծագումով Դիզակից եմ: Խնդրում եմ արեգակնափայլ օրհնյալ *ռաղամ* շնորհել, որպեսզի այլևս Շիրվանի մարդիկ [ինձ հետ] որևէ գործ չունենան և թողնեն հանգիստ զբաղվել օրհնանքներով: Ըստ Նորին [Մեծության] հպատակեցնող բարձրագույն հրամանի»:

[Հակառակ կողմում]

Գրանցվեց հպատակեցնող *ռաղամների* հետ, [կնիք]:

ՎԱՎԵՐԱԳԻՐ 26

Նաղիր շահի 1745թ. հրամանագիրը, որով Դիզակի զաբիթին կարգադրվում է քննել խնդրարկուի բողոքը իր ձին ապօրինաբար խլելու վերաբերյալ և հաստատվելու դեպքում այն ետ վերադարձնել

Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 2բ, վավերագիր 218, բնագիր,
մեծ. 19,8 x 32,5 սմ, գիր՝ շիքասթե, նասթալիղ

Նա է:
Հանուն Ալլահի
[Կնիք][173]
Բարձրյալին եմ ապավինում:

Արքայական հրաման եղավ, որպեսզի հիշյալ *մահալի զաբիթը* պարզելով իրողությունը, խնդրարկուի ձին ըստ կարգի վերցնի ու հանձնի [նրան], վերականգնի ոտնահարված իրավունքները և վերջ դնի բռնությանը: Եվ թող այս իր պարտականությունը համարի:

Գրվեց 1158 թվականի մոհարրամ ամսին:

[172] 1745թ. փետրվարի 3 – մարտի 5:
[173] Տե'ս վավերագիր 23-ի շահական կնիքը

Ամենանվաստ ծառա Դիզակի քրիստոնյա Ծատուրի խնդրագիրը Գերագույն, սրբազնագույն երկնային գահին նմանվող գահի ոտքերում կանգնածների հանգրվանին է հասցնում [հետևյալը]. «Գանձապետի *վաքիլ* Աբրահամ անունով քրիստոնյան նվաստիս մեկ ձին, որի գինը իր գնահատմամբ 6 *թումանից* ավելի է, իր անունից տվել է սուրհանդակին: Գնացի [ետ] պահանջեցի: Նա ձիու գնի վճարման փոխարեն մի ձի տվեց: Այնուհետև զղջալով, եկավ ուժով ու բռնությամբ ձին տարավ, որը կատարյալ անօրինականություն է թշվառիս հանդեպ: Խնդրում եմ սրբազնագույնի ծառաների անսահման ողորմածությունից, թող իմ հոգին նրա համար զոհաբերվի, շնորհ անել՝ հանձնարարելով Ասլան Ալի *բեկ նասաղչի դահբաշիին*, որը հրամանով Խամսայի *մահալում* է գտնվում, պարզել խնդրի իրողությունը, վերականգնել ոտնահարված իրավունքները և վերջ դնել բռնությանն ու չարաշահումներին: Ըստ Նորին [Մեծության] հպատակեցնող բարձր հրամանի»:

[Հակառակ կողմում]

[Կնիք]:

ՎԱՎԵՐԱԳԻՐ 27

Նադիր շահի 1746թ. հրամանագիրը, որով հաստատվում է Մակվի Ս. Թադեի վանքի ու նրա կալվածքների մուաֆությունը, նաև կարգադրվում Իրանի տեղական իշխանություններին չնեղել վանքի հոգևորականներին, իսկ ավազակային հարձակումների դեպքում նրանց անհրաժեշտ օգնություն ցուցաբերել

Կաթողիկոսական դիվան, թղթ. 4, վավերագիր 41ա, պատճեն,
մեծ. 21.8 x 35սմ, գիր՝ շիքասթ

Օրինյալ կնիքի տեղը
Բարձրյալին եմ ապավինում:

Արքայական հրաման եղավ [հետևյալի մասին].

Քահանաներից ու ճգնավորներից լավագույն Ղարաքիլիսայի Մինաս *խալիֆայի*[174] հանդեպ ունեցած շահական անսահման բարեհաճությամբ ու ողորմածությամբ և հաշվի առնելով նրա բարի ծառայությունները նաև Իրանի ու Ռումի դրախտաբնակ տիրակալների պարտադիր գործադրման ենթակա *ռաղամների* բովանդակությունները, հաստատվում է հիշյալ Ղարաքիլիսա գյուղի [համանուն] վանքի *վակֆ* լինելը և այն, որ հիշյալ գյուղի բնակիչները լինելով վանքի սպասավորները, *դիվանի մութավաջջեհաթից մուաֆ* են եղել, Մեր արքայական Մեծությունը ևս նույն կարգով *դիվանի* պարտավորություններից, *ջիզյայից*, այլ *մութավաջջեհաթից, սադերաթից, ավարիզաթից, չոբանբեկիից* ու այլ [հարկերից] *մուաֆ* ու *մուսալլամ* ճանաչեցինք, որպեսզի իրենց ու հիշյալ *մուլքերի մութավաջջեհաթը* ծախսեն հիշյալ վանքի ու նրա բնակիչների համար: Նշված վանքը բացի հիշյալ գյուղից որտեղ էլ, որ *վակֆային մուլքեր* ունենա, դրանք այս կարգով *մուաֆ* ճանաչեցինք: Երևանի *ամիլները* այս գյուղի և հիշյալ վանքի մյուս *վակֆային մուլքերի մութավաջջեհաթը* թող հանված համարելով իրենց *աբվաբ-ե ջամից*՝ ոչինչ չպահանջեն և կարգադրությանը չհակառակվեն:

Կարգադրեցինք, որպեսզի հիշյալ վանքի որոշ գործերով տարբեր կողմերում շրջող սևագլուխներին սուրհանդակներն ու *ռահդարները* ճանապարհին ու *վիլայեթներում* չնեղեն: Քանի որ գյուղը սահմանի վրա է, հաճախ Ռումի կողմերից կողոպտիչներն ու ավազակները նրանց անհանգստացնում են: Երևանի ու Խոյի *վիլայեթների*, Դունբուլի *հաքիմները* թող զգոն լինեն և նրանց մտնելու դեպքում անհրաժեշտ օգնություն ցուցաբերեն, նաև պետք է թույլ տան նրանց միմյանց հետ վարվել իրենց սովորույթներին համապատասխան և այս հարցում նրանց չնեղեն: Կարգադրեցինք, որպեսզի անցուդարձ անողներին առանց *դիվանի* պատճառի հացահատիկի կամ դրամի պահանջով չնեղեն: Հիշյալ գյուղի *ռայաթները* որտեղ էլ, որ բնակվելիս լինեն, [թող] իրենց նախկին բնակավայրը վերադարձնեն, որպեսզի հանգիստ ու ապահով զբաղվեն հավերժ բարեբախտ պետության հարատևման համար աղոթելով: Եվ թող այս իրենց պարտականությունը համարեն:

Գրվեց 1159 թվականի ողորմած շավալ ամսին[175]:

[Հակառակ կողմում]

1) Կնիքի տեղը;
2) Գրվեց, կնիքի տեղը;
3) Գրանցվեց Ազերբայջանի *սարքարի* կողմից, կնիքի տեղը;
4) Գրանցվեց … *սարքարի* կողմից, կնիքի տեղը;
5) Գրանցվեց զինվորական *սարքարի կողմից*, կնիքի տեղը;
6) Ճիշտ է, կնիքի տեղը;
7) Գրանցվեց Իրաքի *սարքարի* կողմից, կնիքի տեղը:
8) Համապատասխանում է ամենաբարձր, հպատակեցնող, սրբազնագույն բնագրին. [կնիք]:

[174] Մինաս վարդապետը Արտազի վանքի եպիսկոպոս էր օրհնվել Էջմիածնում 1741թ. ապրիլին (Ժամանակագրություն, ՄՄ, ձեռ. 8233, էջ 78բ): Ամենայն հավանականությամբ այս Մինաս վարդապետին է վերաբերում Ս. Թադեի տապանաքարերից հետևյալի գրությունը. «Տապանս սա է եղկելի Մինաս անուն վարդապետի , որ յաջորդեաց տանս Մեծին Ներզբաղմանց ժամանակի, ծառայ էր սա տեառն Մեծի Զաքարիա վարդապետի ՌՄ» (1751) (Das Armenishe Thaddäuskloster in Der Provinz West Azerbaidjan in Iran, p. 198)):

[175] 1746թ. հոկտեմբերի 17 – նոյեմբերի 15:

ՎԱՎԵՐԱԳԻՐ 28

Իբրահիմ Միրզայի[176] 1748թ. հրամանագիրը, որով արգելվում են մահմեդականացած հայերի պահանջները իրենց հայ ազգականների ժառանգության նկատմամբ

Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 1գ, վավերագիր 396, բնագիր,
մեծ. 21 x 30,3 սմ, գիր՝ շիքասթե, նասթալիղ

Նա է՝ Բարձրյալ Ալլահը
[Կնիք]. «… Իբրահիմ»
Չկա Աստված Ալլահից բացի:
Ալլահինն են իշխանությունն ու զորությունը:

Բարձր հրաման եղավ հետևյալի մասին.

Որովհետև օրերս քրիստոնյա մեծամեծների առաջնորդ Երևանի Ուչքիլիսայի Ղազար կաթողիկոսը զեկուցեց սրբազնագույնին, որ հնուց կարգ է եղել, ըստ որի *ջաղիդ-օլ-իսլամներից* ոչ ոք չպետք է իր հայ ազգականների հետ վեճեր ունենար: Ուստի կարգադրեցինք, որպեսզի հին կարգին համապատասխան *ջաղիդ-օլ-իսլամներից* ոչ ոք իր հայ ազգականներին վիճաբանություններով չնեղի: Երևանի բարձրաստիճան *բեկլարբեկը, զաբիթը, ամիլները, քալանթարն* ու *քյադխուդաները* ամեն առումով թող կարգադրությանը համապատասխան վարվեն, ոչ մեկին ըմբոստանալու ու հակառակվելու հնարավորություն չտան: Թող այս ընդունեն որպես խիստ կարգադրություն և իրենց պարտականությունը համարեն:

Գրվեց 1161 թվականի սրբազան զի հաջջե ամսի 12-ին[177]:

[Հակառակ կողմում]

1) [Կնիք]. «Չկա Աստված բացի Ալլահից, նրանն է իշխանությունը և արդար օրենքը…»;
2) [Կնիք];
3) Գրվեց, [կնիք]. «…Աստծո ծառա Ալի Ռեզա»;
4) Գրանցվեց Իրաքի *սարքարի* կողմից, [կնիք];
5) Ճիշտ է, [կնիք];
6) Գրանցվեց Ֆարսի *սարքարի* կողմից [կնիք];
7) Գրանցվեց Խորասանի *սարքարի* կողմից, [կնիք];
8) [Կնիք];

[Հայերեն]՝ Իպրահիմ շահի ռաղամն է որ տաճկացեալն յիւր ազգականաց քրիստոնէից դաւի չանէ: ՌԵԿԱ թուին տաճկաց:

[176] Իբրահիմ Միրզան իրեն շահ է հայտարարել 1748թ. դեկտեմբերի 8-ին, որից հետո փոխվել է նրա հրովարտակների կնիքն ու թողրան (տես վավերագրեր 34-37):
[177] 1748թ. դեկտեմբերի 4:

ՎԱՎԵՐԱԳԻՐ 29

Իբրահիմ Միրզայի 1748թ. հրամանագիրը, որով արգելվում են Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կալվածքներից հարկագանձումներ անելու ընթացքում արվող չարաշահումները

Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 1գ, վավերագիր 398ա, բնագիր,
մեծ. 21,3 x 30 սմ, գիր՝ շիքասթե, նասթալիղ

Հանուն Բարձրյալ Ալլահի
[Կնիք]. «… Իբրահիմ»
Չկա Աստված Ալլահից բացի:
Ալլահինն են իշխանությունն ու զորությունը:

Բարձր հրաման եղավ, որպեսզի Երևանի բարձրաստիճան *բեկլարբեկը, ամիլները, քալանթարները* ու *քյադխուդաները* շահական ողորմածությամբ մեծարված իմանան, որ օրերս քրիստոնյա մեծամեծների առաջնորդ Երևանի Ուչքիլիսայի Ղազար կաթողիկոսը սրբազնագույնին զեկուցեց, որ ստորև նշվող (Ուչքիլիսա (Վաղարշապատ), Օշական, Ֆրանկ[անոց], Մաստարա) գյուղերը պատկանում են Ուչքիլիսայի սևագլուխներին և նրանց հատկացված *հավալեներում* չարաշահումներ ու դրամաշորթություն են կատարվում: Քանզի սրբազնագույն միտքը հոգ է տանում վերոհիշյալ կաթողիկոսի ու նշված համայնքի դրության մասին, ուստի անհրաժեշտ է, որպեսզի հիշյալ գյուղերին բաժին ընկնող օրինական *մութավաջջեհաթն* ու *հոդդուղ-ե դիվանին* նրանցից գանձեն և այլոց հատկացված հարկերի պահանջներով ու անօրինականություններով նրանց չնեղեն: Բարձրագույն *դիվանից* արքայական *ռաղամով* այդ գյուղերին նշանակված *սաղերիի* գանձումը անհրաժեշտ է հիշյալ կաթողիկոսին տեղեկացմամբ ու նրա կարծիքին համապատասխան *հավալե* արվեն ու գանձվեն՝ առանց չարաշահումների ու դրամաշորթության: Եվ թող այս ընդունեն որպես խիստ կարգադրություն և իրենց պարտականությունը համարեն:

Գրվեց 1161 թվականի սրբազան զի հաջջե ամսի 12-ին:

[Հակառակ կողմում]

1) [Կնիք]. «Չկա Աստված բացի Ալլահից, նրանն է իշխանությունը և արդար օրենքը…»;
2) [Կնիք];
3) Գրվեց, [կնիք]. «Աստծո ծառա Ալի Ռեզա»;
4) Գրանցվեց Իրաքի *սարքարի* կողմից, [կնիք]. «Աստծո ծառա Հեյդար»;
5) Ճիշտ է, [կնիք]. «…Իմամ Ղուլիի որդի Ալի Ռեզա»;
6) Գրանցվեց Ֆարսի *սարքարի* կողմից, [կնիք];
7) Գրանցվեց Խորասանի *սարքարի* կողմից, [կնիք]. «Աստծո ծառա Մուհամմադ Ղուլի»;
8) [Կնիք];

[Հայերեն]՝
Շահի ռաղամն է, որ Սրբոյ Աթոռոյն Ղ գիւղի ռաղամն է Իպրահիմ շահին է:
Վասն չորից գիւղիցն Սրբոյ Աթոռոյս Էջմիածնայ, Յօշականայ, Ֆրանկանոցին և Մաստարայու: Ղազար կաթողիկոսն արզ առնէ շահին, թէ առանց մերոյ գիտութեան զաւելի խարճս առնուն և նեղացուցանեն, և Շահն զայս ռաղամս տայ, զի մի այնպէս առնիցեն: և զոր ինչ 'ի նոցանէ առնուցեն գիտութեամբ հոգևոր տերին լիցի: 'Ի թուին տաճկաց ՌՃԿԱ:

ՎԱՎԵՐԱԳԻՐ 30
Իբրահիմ Միրզայի 1748թ. հրամանագիրը, որով արգելվում է հայերի բռնի մահմեդականացումը

Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 1գ, վավերագիր 399, բնագիր,
մեծ. 21 x 30,5 սմ, գիր՝ շիքասթե, նասթալիղ

Հանուն Բարձրյալ Ալլահի
[Կնիք]. «… Իբրահիմ»
Չկա Աստված Ալլահից բացի:
Ալլահինն են իշխանությունն ու զորությունը:

Բարձր հրաման եղավ հետևյալի մասին.

Որովհետև օրերս քահանայապետ, Երևանի Ուչքիլիսայի Ղազար կաթողիկոսը սրբազնագույնին զեկուցեց, որ որտեղ, որ հայերից լավ աղջիկ կամ տղա է լինում, մահմեդականները բռնի կերպով տանում մահմեդականացնում են: Ուստի կարգադրեցինք, որպեսզի մահմեդական համայնքից ոչ ոք հայ աղջիկ կամ տղա չտանի ու [նրանց վրա] չբռնանա: Երևանի բարձրաստիճան *բեկլարբեկը*, *ամիլները*, *քալանթարները* ու *քյադխուդաները* թող ամեն առումով կարգադրությանը համապատասխան գործադրեն և նրան հակառակվելը պատժի համար հիմք համարեն: Այս ամեն առումով թող ընդունեն որպես խիստ կարգադրություն և իրենց պարտականությունը համարեն:

Գրվեց 1161 թվականի սրբազան զի հաջջե ամսի 12-ին:

[Հակառակ կողմում]

1) [Կնիք]. «Չկա Աստված բացի Ալլահից, նրանն է իշխանությունը և արդար օրենքը…»;
2) [Կնիք];
3) Գրվեց, [կնիք]. «… Աստծո ծառա Ալի Ռեզա»;
4) Գրանցվեց Իրաքի *սարքարի* կողմից, [կնիք]. «Աստծո ծառ Հեյդար»;
5) Ճիշտ է, [կնիք];
6) Գրանցվեց Ֆարսի *սարքարի* կողմից [կնիք];

7) Գրանցվեց Խորասանի *սարքարի* կողմից, [կնիք]. «Աստծո ծառա Մուհամմադ Ղուլի»;
8) [Կնիք];

[Հայերեն]՝
ՂԲ Իբրահիմ շահի ռաղամն է, որ տաճիկներն մեր գեղեցիկ աղչկունք և տղայք բռնութեամբ չքաշեն տաճկացնեն: 'Ի ՌՃԿԱ թուին տաճկաց:

ՎԱՎԵՐԱԳԻՐ 31
Իբրահիմ Միրզայի 1748թ. հրամանագիրը, որով արգելվում է մահմեդական հոգևորականների միջամտությունը հայերի հավատի խնդիրներին ու նրանց կրոնական օրենքների խախտումը

Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 1գ, վավերագիր 400, բնագիր,
մեծ. 20,5 x 29,7 սմ, գիր՝ շիքասթե, նասթալիղ

Հանուն Բարձրյալ Ալլահի
[Կնիք]. «… Իբրահիմ»
Չկա Աստված Ալլահից բացի:
Ալլահինն են իշխանությունն ու զորությունը:

Բարձր հրաման եղավ հետևյալի մասին.

Որովհետև օրերս քրիստոնյա մեծամեծներից լավագույն ու պատվավոր անձանց առաջնորդ Երևանի Ուչքիլիսայի Ղազար կաթողիկոսը սրբազնագույնին հասցրեց, որ հնուց այդպիսի կարգ չի եղել, որպեսզի մահմեդական *ուլամաները* միջամտեն իրենց հավատի խնդիրներին, հայերի հետ ամուսնություններ կնքեն կամ ապահարզան տան: Ուստի կարգադրեցինք, որպեսզի Երևանի *շեյխ-ուլ-իսլամը* և *ղազին* հայ ժողովրդի դատական խնդիրների հետ գործ չունենան, այլ թույլ տան նրանց իրենց [Սուրբ] գրքին ու հավատի օրենքներին համապատասխան հիշյալ կաթողիկոսը զբաղվի դրանցով: Երևանի *օլքայի* բարձրաստիճան *բեկլարբեկը*, *ամիլները*, *շեյխ-ուլ-իսլամն* ու *ղազին* ամեն առումով թող կարգադրությանը համապատասխան գործադրեն և հայ ժողովրդի դատական խնդիրների լուծումը թողնեն վերոհիշյալ կաթողիկոսին ու կարգադրությանը չհակառակվեն: Այս թող ընդունեն որպես խիստ կարգադրություն և իրենց պարտականությունը համարեն:

Գրվեց 1161 թվականի սրբազան զի հաջջե ամսի 12-ին:

[Հակառակ կողմում]

1) [Կնիք]. «Չկա Աստված բացի Ալլահից, նրանն է իշխանությունը և արդար օրենքը…»;
2) [Կնիք];
3) Գրվեց, [կնիք]. «…Աստծո ծառա Ալի Ռեզա»;
4) Գրանցվեց Իրաքի *սարքարի* կողմից, [կնիք]. «Աստծո ծառա Հեյդար»;

5) Ճիշտ է, [կնիք];
6) Գրանցվեց Ֆարսի *սարքարի* կողմից [կնիք];
7) Գրանցվեց Խորասանի *սարքարի* կողմից, [կնիք]. «Աստծո ծառա Մուհամմադ Ղուլի»;
8) [Կնիք];

[Հայերեն]՝ Իբրահիմ շահի ռաղամն է որ մեր օրինաց բանին և պսակին շխըլսլամն չխառնուի, ՌՃԿԱ թուին տաճկաց:

ՎԱՎԵՐԱԳԻՐ 32

Իբրահիմ Միրզայի 1748թ. հրամանագիրը, որով արգելվում է ռահդարի և սուրհանդակի ձի պահանջելը հայոց կաթողիկոսի Իրանի տարածքում մեռոն բաժանելու նպատակով շրջող նվիրակներից

Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 1գ, վավերագիր 402, բնագիր,
մեծ. 20,5 x 30 սմ, գիր՝ շիքասթե, նասթալիղ

Հանուն Բարձրյալ Ալլահի
[Կնիք]. «… Իբրահիմ»
Չկա Աստված Ալլահից բացի:
Ալլահինն են իշխանությունն ու զորությունը:

Բարձր հրաման եղավ հետևյալի մասին.

Որովհետև օրերս քրիստոնյա մեծամեծների գլխավոր ու պատվավոր անձանց առաջնորդ Երևանի Ուչքիլիսայի Ղազար կաթողիկոսը սրբազնագույնին զեկուցեց, որ հնուց սովորություն է եղել, որ ամեն տարի Ուչքիլիսայի սպասավորները, բալզամի յուղը (մեռոնը) տարբեր կողմերը տանելով, *զաքյաթ* հավաքեին, և ոչ ոք նրանցից *ռահդարի* չի պահանջել: Ուստի կարգադրեցինք, որպեսզի ըստ նախկին կարգի Ուչքիլիսայի սպասավորներից ով, որ հիշյալ կաթողիկոսի հանձնարարականը ձեռքին մեռոնը տանելու նպատակով տարբեր կողմեր կգնա, ոչ ոք նրանից *ռահդարի* կամ սուրհանդակի ձի չպահանջի: Երևանի բարձրաստիճան *բեկլարբեկը, վիլայեթների հաքիմները, զաբիթներն* ու *ամիլները* թող [սույն] գրությանը համապատասխան որոշված համարեն, *ռահդարիի* կամ սուրհանդակի ձիու պահանջներով Ուչքիլիսայի սպասավորներին, որ շրջում են տարբեր կողմերում, չանհանգստացնեն և կարգադրությանը չհակառակվեն: Այս թող ընդունեն որպես խիստ կարգադրություն ու իրենց պարտականությունը համարեն:

Գրվեց 1161 թվականի սրբազան զի հաջջե ամսի 12-ին:

[Հակառակ կողմում]

1) [Կնիք]. «Չկա Աստված բացի Ալլահից, նրանն է իշխանությունը և արդար օրենքը…»;

2) [Կնիք];
3) Գրվեց, [կնիք]. «… Աստծո ծառա Ալի Ռեզա»;
4) Գրանցվեց Իրաքի *սարքարի* կողմից, [կնիք]. «Աստծո ծառա Հեյդարը»;
5) Ճիշտ է, [կնիք];
6) Գրանցվեց Ֆարսի *սարքարի* կողմից [կնիք];
7) Գրանցվեց Խորասանի *սարքարի* կողմից, [կնիք]. «Աստծո ծառա Մուհամմադ Ղուլի»;
8) [Կնիք]:

[Հայերեն]՝

Իբրահիմ Շահի ռաղամն է որ սուրհանդակ և ռախտար մեր միաբանին հետ բան չունենան 'ի ՌՃՂԸ թվին Ղազար կաթողիկոսն է զայս հանեալ 'ի ՌՃԿԱ թուին տաճկաց:

Վասն ռախտարաց ոչ պահանջելոյն 'ի միաբանից Էջմիածնի զտուրս:

ՎԱՎԵՐԱԳԻՐ 33

Իբրահիմ շահի 1748թ. հրամանագիրը, որով տարեկան 50 թուման գումարի ռոճիկ է նշանակվում Վարանդայի Մելիք Շահնազարին, որը պետք է գանձվեր նրան տրամադրված այդ շրջանի դիվանի մալիյյաթ հարկից

Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 2բ, վավերագիր 203, պատճեն
մեծ. 22,2 x 35,5 սմ, գիր՝ խառը

[Կնիքի պատճեն]. «Հանուն Ալլահի, թող խաղաղություն լինի Իբրահիմին»
Օրինյալ կնիքի տեղը

Աշխարհասաստ հրաման եղավ[178] հետևյալի մասին.

Քրիստոնյաներից լավագույն, Վարանդայի *մելիք,* Մելիք Շահնազարի հանդեպ ունեցած շահական ողորմածությամբ վիշապի տարվա երրորդ ամսվանից տարեկան 50 *թուման* գումարի ռոճիկը նրան է շնորհվում, և ըստ կարգի նրան է հանձնվում այդ *մահալը,* որպեսզի ամեն տարի իր ռոճիկի գումարը այնտեղի *դիվանի մալիյյաթի* գումարից ստանալով ու ծախսելով իր ապրուստի վրա, արդարացի կերպով ու ճշտորեն կատարի իր գործի պարտականությունները, ջանք թափի *վիլայեթը* շենացնելու, *ռայաթներին* հավաքելու, *մալիյյաթը* գանձելու, *դիվանին* անհրաժեշտ ծառայություններ մատուցելու խնդրում և ի ցույց հանի իր նվիրվածությունը աշխարհակալին: Վարանդա *մահալի ռայաթները* թող վերոհիշյալին այդ *մահալի մելիք* ճանաչեն և այդ դիրքի պարտականությունները նրան վերապահեն:

[178] Հրովարտակի սկիզբը բնորոշ չէ Իբրահիմ շահի հրովարտակներին, որը թերևս սխալ վերծանության հետևանք է:

Բարձրագույն *դիվանի* գործերի գբասիրտ, մեծ *մուսթովֆիները* արքայական *ռաղամի* բովանդակությունը թող գրանցեն *դաֆթարում*: Եվ այս թող իրենց պարտականությունը համարեն:

[Գրվեց] 1161 թվականի սրբազան զի հաջջե ամսին[179]:

[Հակառակ կողմում]

Копія грамоты Ибрагимъ Шаха Персидскаго 1161.

ՎԱՎԵՐԱԳԻՐ 34

Իբրահիմ շահի 1748թ. հրամանագիրը, որով հաստատվում են Էջմիածնի Ղազար կաթողիկոսի կաթողիկոսական իրավունքները

Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 1գ, վավերագիր 397ա, բնագիր,
մեծ. 28,7 x 44,5 սմ, գիր՝ շիքասթե, նասթալիղ

Հանուն ողորմած և գթառատ Ալլահի
[Կնիք]. «Հանուն Ալլահի, խաղաղություն Իբրահիմին, 1161»
Չկա Աստված Ալլահից բացի:
Ալլահինն են իշխանությունն ու զորությունը:

Արքայական հրաման եղավ հետևյալի մասին.

Որովհետև այն օրից, ինչ հավիտենական ու անգերազանցելի Դատավորը աշխարհի տաճարի իշխանությունը հանձնեց այս պատվարժան ընտանիքին, մենք էլ այս անչափ բարիքի դիմաց մեր արդարադատության համար անհրաժեշտ ենք համարում անկեղծորեն նվիրված հավատարիմ ճգնավորներից ու նվիրյալներից յուրաքանչյուրի հանդեպ, ով զբաղվում է հավիտենական պետության համար աղոթելով ու [նրան] գովաբանելով, Աբրահամի բարձր ավանդույթների [վրա հիմնված] օրենքներին համապատասխան, անսահման բարեհաճությամբ ամրացնել նրանց անձնվիրությունը ու գոտեպնդել՝ նրանց հնազանդ հոգու տաճարը լուսավորելով անծայր ողորմածության լուսատուի ճառագայթներով: Այս խոսքերը քրիստոնյա մեծամեծների առաջնորդի ու Հիսուսի փառաբանյալ անձանցից լավագույն Ղազար կաթողիկոսի մասին են: Այսպիսով, Երևանի Ուչքիլիսայի կաթողիկոսությունը նախկին կարգով ու ընդունված ձևին համապատասխան վերոհիշյալին շնորհեցինք, որպեսզի ինչպես հարկն է, ստանձնի այդ գործի պարտականությունները՝ շենացնելով այն ու կարգավորելով [վանքի գործերը]՝ փայլ հաղորդի նրան, տնօրինի նրա *վակֆերը*, և *նոգուրաթը* բերել տա Ռումի, Ֆարանգի ու Իրանի ընդարձակ երկրներից, հին կարգին համապատասխան ծախսի հիշյալ վանքի

[179] 1748թ. նոյեմբերի 22 - դեկտեմբերի 22:

սպասավորների վրա: Հմտորեն վարելով այդ գործերը՝ թող նա աղոթի հավիտենական պետության հարատևման համար: Քահանաներն ու սևագլուխները, ամբողջ քրիստոնյա [հայ] ժողովուրդն ու մեծամեծները, Ուչքիլիսայի ողջ հոգևորականությունը թող հիշյալ քահանայապետին միակը ճանաչեն հիշյալ վանքի կաթողիկոսության գահին և այդ դիրքի պարտականությունները բացառապես նրան վերապահեն, նրա օրինական խոսքին ու կամքին, որն ողղված կլինի հիշյալ վանքի բարգավաճմանն ու բարօրությանը, չհակառակվեն: Բարձրագույն *դիվանի* ողորմած մեծ *մուսթովֆիները* թող արքայական *ռաղամի* բովանդակությունը *դաֆթարում* գրանցեն և այն իրենց պարտականությունը համարեն:

Գրվեց 1161 թվականի սրբազան զի հաջջե ամսի 18-ին[180]:

ՎԱՎԵՐԱԳԻՐ 35

Իբրահիմ շահի 1748թ. հրամանագիրը, որով հաստատվում է Էջմիածնի վանքի ու նրա կալվածքների մուաֆության իրավունքը

Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 1գ, վավերագիր 401, բնագիր,
մեծ. 26,5 x 42 սմ, գիր՝ շիքասթե, նասթալիղ

Հանուն Բարձրյալ Ալլահի
[Կնիք][181]
Չկա Աստված բացի Ալլահից:
Ալլահինն են իշխանությունն ու զորությունը:

Արքայական հրաման եղավ, որպեսզի Երևանի բարձրաստիճան *բեկլարբեկը, զաբիթները, ամիլները, քալանթարները* և *քյադխուդաները* շահական ողորմածությամբ մեծարված իմանան, որ օրերս քահանայապետ Երևանի Ուչքիլիսայի Ղազար կաթողիկոսը սրբազնագույնին զեկուցեց, որ սրանից առաջ Ուչքիլիսային պատկանող *մութավաջջեհաթը* նախկին թագավորների *ռաղամներով* հատկացված է եղել հիշյալ սպասավորների ծախսերը հոգալուն: Ուստի կարգադրեցինք, որպեսզի ըստ նախկին կարգի, նախորդ միապետների, նաև իմ հանգուցյալ մեծ հորեղբայր Նորին Մեծություն Նադիր շահի, թող հողը նրա վրա թեթև լինի, *ռաղամներին* համապատասխան, այգիների *մալուջհաթից, ջիզյայից,* նաև ջրաղացների, *դինգերի, քրքրանների,* խանութների, ձիթհանքերի, բաղնիքների, *մավաշի* ու *մարա'ի* կանխիկ գումարով ու բնամթերքով [վճարվող] հարկերից *մուաֆ* են եղել, նորից *մուաֆ* ու *մուսալլամ* լինեն: *Մումայիզները* թող վարձակալությունը ևս դրանց հաշվի մեջ չներառեն և ամեն առումով հրամանին համապատաս-

[180] 1748թ. դեկտեմբերի 10:
[181] Տե՛ս վավերագիր 34-ի վերին մասի կնիքը:

խան գործադրեն և այս օրենքում որևէ փոփոխություն չմտցնեն: Բարձրագույն *դիվանի* մեծ գբառատ *մուսթոֆիները* թող այս արքայական *ռաղամը դաֆթարում* գրանցեն և այն իրենց պարտականությունը համարեն:

Գրվեց 1161 թվականի սրբազան զի հաջջ ամսի 18-ին:

[Հակառակ կողմում]

1) [Կնիք]. «Չկա Աստված բացի Ալլահից, նրանն է իշխանությունը և արդար օրենքը…»;
2) [Կնիք];
3) Գրվեց, [կնիք]. «… Աստծո ծառա Ալի Ռեզա»;
4) Գրանցվեց Իրաքի *սարքարի* կողմից;
5) Ճիշտ է;
6) Գրանցվեց Ֆարսի *սարքարի* կողմից, [կնիք]. «…Իբրահիմ»;
7) Գրանցվեց Խորասանի *սարքարի* կողմից;
8) [Կնիք];

[Հայերեն]՝

Շահի ռաղամն է սրբոյ Աթոռոյն մաղաֆութեան որ է Իբրահիմ Շահն: Վասն սորա Ղազար կաթողիկոսն է արզ արարեալ նմա տուեալ Շահն զայս ռաղամս ’ի ՌԵԿԱ թուին տաճկաց: Որով բաղաթ, ջազիայ, ջրաղաց, դինկ, գրգրայ, դուքաններ, ձիթահանք, համամ, տավար եթէ նաղտ և եթէ ջինս՝ որպես Նատիրն ազատ է արարեալ, և մեք ազատ եմք արարեալ ասէ:

Վ Ա Վ Ե Ր Ա Գ Ի Ր 36

Իբրահիմ շահի 1748թ. հրամանագիրը, որը հաստատում է Ս. Թադեի վանքի ու նրա կալվածքների մուաֆությունը, կարգադրում Իրանի տեղական իշխանություններին չնեղել վանքի հոգևորականներին, իսկ ավազակային հարձակումների դեպքում անհրաժեշտ օգնություն ցուցաբերել

Կաթողիկոսական դիվան, թղթ. 4, վավերագիր 131, բնագիր,
մեծ. 27.7 x 44սմ, գիր՝ նասթալիղ, շիքասթե

[Կնիք][182]
Չկա Աստված բացի Ալլահից:
Նրանն է իշխանությունն ու զորությունը:

Արքայական հրաման եղավ հետևյալի մասին.

Քրիստոնյա քահանաներից ու վանականներից լավագույն Ղարաքիլիսայի Սինաս *խալիֆայի* հանդեպ ունեցած շահական ողորմածությամբ ու անսահման գթասրտությամբ [հաշվի առնելով] նրա նվիրվածությունն ու

[182] Տե՛ս վավերագիր 34-ի վերին մասի կնիքը:

ծառայությունները, նաև այն, որ ըստ հանգուցյալ մեծ հորեղբոր[183], թող հողը նրա վրա թեթև լինի, Ռումի և Իրանի դրախտաբնակ միապետների *ռաղամների* բովանդակության, Ղարաքիլիսա գյուղը եղել է հիշյալ վանքի *վակֆը*, իսկ գյուղի բնակիչները, լինելով նրա սպասավորները, *մուաֆ* են եղել *դիվանի մութավաջջեհաթից*, Մեր արքայական Մեծությունը ըստ կարգի նրանց *դիվանի* պարտավորություններից, ինչպիսիք են *ջիզյան*, այլ *մութավաջջեհաթն* ու *սադերաթը, ավարիզաթը, չոբանբեկին* և այլն, *մուաֆ* ու *մուսալլամ* ճանաչեցինք, որպեսզի իրենց *մութավաջջեհաթը* հիշյալ *մուլքերի* եկամուտների հետ ծախսեն նշված վանքի ու նրա բնակիչների վրա: Բացի հիշյալ գյուղից, որտեղ էլ, որ այդ վանքի *վակֆային մուլքերը* գտնվելիս լինեն, նույն կարգով *մուաֆ* ու *մուսալլամ* հայտարարեցինք: Երևանի *ամիկները* թող հիշյալ գյուղի ու նշված վանքի այլ *վակֆային մուլքերի մութավաջջեհաթը* իրենց *աբվաբ-ե ջամ՚ից* հանված համարեն և ոչ մի *դինար* չպահանջեն: Սուրհանդակները, ճանապարհների հսկողներն ու *ռահդարները* թող վանքի առևտրական կամ այլ գործերով տարբեր կողմերը գնացող-եկող սևագլուխներին ճանապարհին ու *վիլայեթներում* չնեղեն: Քանի որ հիշյալ գյուղը գտնվում է Ռումի ու Քրդստանի սահմանագծի վրա, և հաճախ ավազակներն ու ավարառուները ոտնձգություններով նեղում են նրան, ուստի Երևանի, Խոյի ու Դումբուլի *հաքիմները* թող նրանց [ավազակների] ներխուժման ժամանակ [վանքին] անհրաժեշտ օգնություն ցուցաբերեն: *Վիլայեթների հաքիմները* պետք է թույլ տան, որպեսզի նրանք միմյանց հետ ըստ իրենց սովորության ու կարգի վարվեն և այս կապակցությամբ նրանց չնեղեն: Գնացող-եկողներից թող առանց *դիվանի* պատճառի *դինար* ու հացահատիկ չպահանջեն ու չանհանգստացնեն: Որտեղ էլ, որ այդ գյուղից ցրվածները լինեն, ոչ ոք չպետք է նրանց ետ բերելուն խոչընդոտի, այլ պետք է գաղթեցնի նրանց հին բնակավայրը, որպեսզի [այնտեղ] բնակվեն և հանգիստ զբաղվեն հավիտենական պետության հարատևման համար աղոթելով: Այս թող ընդունեն որպես խիստ կարգադրություն և իրենց պարտականությունը համարեն:

Գրվեց 1162 թվականի սրբազան մոհարրամ ամսին[184]:

[Հակառակ կողմում]

1) Միապետի մերձավոր բարձրաստիճան պալատական Մուհամմադ Ռահիմի ամենաբարձր *շար’ի* փաստաթղթերից;
2) [Կնիք];
3) Գրվեց, ճիշտ է, [կնիք]. «Բարեգութ Ալլահ, Աստծո ծառա Ռեզա»;
4) Գրանցվեց … *սարքարի* կողմից, [կնիք]. «…Աստծո ծառա Հեյդար»;
5) [Կնիք]. «…Աստծո ծառա Մուհամմադ Մոհսեն»;
6) Ճիշտ է, [կնիք];

[183] Նկատի ունի Նադիր շահին:
[184] 1748թ. դեկտեմբերի 22 – 1749թ. հունվարի 21:

7) Գրանցվեց Ֆարսի *սարքարի* կողմից, [կնիք]. «…Մուհամմադ Նա'իմ»;
8) Գրանցվեց Խորասանի *սարքարի* կողմից, [կնիք];

[Հայերեն]՝

Իբրահիմ շահի ֆարմանն է վասն ազատութեան վանից Թադոս Առաքելոյ. թիւ է:

ՎԱՎԵՐԱԳԻՐ 37

Իբրահիմ շահի 1749թ. հրամանագիրը, որով Ղազար կաթողիկոսին ծանուցվում է, որ Էջմիածնի վանքին պատկանող չորս գյուղերի կապակցությամբ Երևանի տեղական իշխանություններին կարգադրվել է նրան նեղություն չպատճառել

Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 1գ, վավերագիր 405, բնագիր,
մեծ. 24 x 40,5 սմ, գիր՝ շիքասթե, նասթալիղ

Հանուն Բարձրյալ Ալլահի
[Կնիք][185]
Չկա Աստված բացի Ալլահից:
Ալլահինն են իշխանությունն ու զորությունը:

Արքայական հրաման եղավ, որպեսզի քրիստոնյա մեծամեծների գլխավոր ու պատվարժան անձանցից լավագույն Երևանի Ուչքիլիսայի Ղազար կաթողիկոսը [իրեն] շահական մեծագույն ողորմածության աստիճանակարգերով մեծարված [համարելով] իմանա, որ [նրա] խնդրագիրը՝ գրված Ուչքիլիսային պատկանող չորս գյուղերի, այդ գյուղերից *դիվանի հավալեների* ու այլ խնդիրների կապակցությամբ և ուղարկված սրբազնագույն լուսատուին, արժանացել է արեգակնային հայացքին և նրա բովանդակության մասին զեկուցվել է: Նշված գյուղերի կապակցությամբ առանձին *ռաղամով* կարգադրել ենք, որպեսզի բարձրաստիճան *բեկլարբեկն* ու *ամիլները* մեծամեծների այն առաջնորդին չնեղեն: Նա պետք է, ամեն առումով արքայական ողորմածությամբ գոտեպնդված, օրինանքներ հղի և իր խնդիրքներն ու պահանջները ամեն օր հուսով հասցնելով [Նորին Մեծությանը]՝ լուծում պահանջի: Եվ թող այս իր պարտականությունը համարեն:

Գրվեց 1162 թվականի հաղթական սաֆար ամսի 25-ին[186]:

[Հակառակ կողմում]

1) [Կնիք]. «Չկա Աստված բացի Ալլահից, նրանն է իշխանությունը և արդար օրենքը, Աստծո ծառա Մուհամմադ Հուսեյն»;
2) [Կնիք];
3) Գրվեց, [կնիք]. «… Աստծո ծառա Ալի Ռեզա»;

[185] Տե՛ս վավերագիր 34-ի վերին մասի կնիքը:
[186] 1749թ. փետրվարի 15:

4) Գրանցվեց Իրաքի *սարքարի* կողմից, [կնիք];
5) Ճիշտ է, [կնիք];
6) Գրանցվեց Ֆարսի *սարքարի* կողմից [կնիք];
7) Գրանցվեց Խորասանի *սարքարի* կողմից, [կնիք]. «… Աստծո ծառա Մուհամմադ Ղուլի»;
8) [Կնիք]:

[Հայերեն]՝

Իբրահիմ շահի ռաղամն է Դ գիւղին համար:

Իբրահիմ շահին Ղազար կաթողիկոսն արզ առնէ վասն Դ գիւղիցն Սրբոյ Աթոռոյս այս, Էջմիածնայ, Յօշականայ, Ֆրանկանոցին, և Մաստարայու թե աւելի խարճ առնուն առանց մեր գիտութեան և նեղացուցանէն: Եւ շահն զայս ռաղամս տայ, զի հոգևոր տերի գիտութեամբն և կամ աւելորդով զխարճ ինչ մի՛ առցեն 'ի նոցանէ և մի՛ նեղացուսցեն, 'ի թուին տաճկաց ՌՃԿԲ:

ՎԱՎԵՐԱԳԻՐ 38

Ազատ խանի 1751թ. հրամանագիրը, որով հաստատվում է Էջմիածնի վանքի կալվածքների ազատված լինելը պետական հարկերից

Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 1գ, վավերագիր 407, բնագիր,
մեծ. 27,6 x 39,7 սմ, գիր՝ շիքասթե, նասթալիղ

Նա է Բարձրյալ Տերը:

Բարձր հրաման եղավ հետևյալի մասին.

Որովհետև քրիստոնյա ժողովրդի ճակատագրի կողմից հիմնված վանքի շենքը վերագտնողների և քրիստոնյաների աղոթատեղին հանդիսացող այն բարձր հանգրվանի բնակիչների դրության մասին հոգ տանելը մեր բարերար հայացքի ու մեծահոգի մտքի նպատակն է, այս բարեբախտ օրերին, երբ նախորդ դրախտաբնակ միապետների *ռաղամների սավառները* գերագույն հայացքին արժանացան, ինչպես, որ նախկինում ընդունված է եղել, Ուչքիլիսայի *մուլքերի հողդուղ-ե դիվանին* և մյուս *մութավաջջեհաթը* անցյալի միապետների *հոքմերի* ու *ռաղամների* արդար օրենքների վրա հիմնված բովանդակությունը մեր ստորագրությամբ վերահաստատեցինք, որպեսզի նույն կերպ ծախսեն այնտեղի սպասավորների, սևագլուխների, քահանաների ու բնակիչների վրա և [նրանք] հանգիստ ու ապահով զբաղվեն Բարձրյալ Տիրոջ երկրպագությամբ: Պատվարժան *հաքիմներն* ու արդար *ամիլները, քալանթարները,* գեղջավագները, *դիվանի* գործերի *մութաշիրները* և բարեբախտ *սարքարի* գործերի *մութասադդիները* բոլոր հարցերում թող դրախտաբնակ հզոր տիրակալների *ռաղամները* հաստատված և ուժի մեջ

համարեն ու դրանք չխախտեն: Ամեն առումով թող այս կերպ գործադրեն և իրենց պարտականությունը համարեն:

Գրվեց 1164թ. ջումադի II ամսի 20-ին[187]:

[Կնիք]. «…Ազատ»:

[Հակառակ կողմում]

1) Գրի առնվեց, [կնիք]. «Ապավինում եմ Ալլահին, Աստծո ծառա Մուհամմադ Հուսեյն»;
2) Աչքի անցկացվեց, [կնիք];
3) Գրանցվեց *ավարեջեի սարրեշթեի* կողմից, [կնիք]. «Մուհամմադ Սադեղ»;
4) [Կնիք];

[Հայերեն]՝

ՀԹ Աղուան Ազատ խանի տուած Սրբոյ Աթոռոյս համար մաղաֆութեան ռաղամն է, որ մարդ բան չունենայ մեզ հետ լաւ է թէ միտ անեն, ’ի թուին տաճկաց ՌՃԿԴ:

ՎԱՎԵՐԱԳԻՐ 39

Վրաց Հերակլ Բ թագավորի 1751թ. հրամանագիրը, որ հաստատում է Էջմիածնի վանքի հոգևորականների մուաֆության իրավունքը

Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 1գ, վավերագիր 406, բնագիր,
մեծ. 15,5 x 24,5 սմ, գիր՝ շիքասթե, նասթալիղ

Բարձր հրաման եղավ, որպեսզի բարձրաստիճան *բեկլարբեկի* հանձնակատարը, *ամիլները*, մյուս պարոնայք և *դիվանի մուբաշիրները* գիտենան, որ քանզի Ուչքիլիսայի վանքը Հիսուսի հավատի երկրպագության վայրն է, իսկ այդ վանքի վանականները աղոթողներ են, որոնց պատիվը շահերը հին ժամանակներից մշտապես բարձր են պահել, և [նրանք] *մուաֆ* ու *մուսալլամ* են եղել: Ուստի բարձր հրամանագրի բովանդակությանը ծանոթանալով, ինչպես, որ հին ժամանակներում *մուաֆ* են եղել, ոչ ոք թող հիշյալ վանքի, [նրա] քահանաների ու [այլ] սպասավորների հետ որևէ գործ չունենա, և առանց բարձր *վաքիլների թա’լիղեի* որևէ *դինար* ու հացահատիկ չպահանջի, ոչ մի դեպքում հիշյալ վանականներին և նրա [կաթողիկոսի] հպատակներին չնեղի ու չանհանգստացնի, որպեսզի [նրանք] հանգիստ ու ապահով զբաղվեն աղոթքներով: Այս թող ընդունեն որպես խիստ կարգադրություն և իրենց պարտականությունը համարեն:

Գրվեց 1164 թվականի ռամազան ամսի 18-ին[188]:

[Կնիք]. «Ապավինում եմ Ալլահին, Աստծո ծառա Հերակլ»:

[187] 1751թ. մայիսի 17:

[188] 1751թ. օգոստոսի 11:

[Եզրից]

Կարգադրվեց, որպեսզի առանց իմ բարձրաստիճան որդու և պալատական ծառայի *թա’լիղեի* ոչ ոք վանականներից ու *վակֆային* գյուղերի *ռայաթներից դինար* կամ հացահատիկ չպահանջի, [նրանց] չնեղի ու չանհանգստացնի: Թող այս իրենց պարտականությունը համարեն:

[Կնիք]. Ապավինում եմ Ալլահին, Աստծո ծառա Հերակլ:

[Հակառակ կողմում]

[Հայերեն]՝

Հերակլի խանի տված Սրբոյ Աթոռոյս մաղաֆութեան ռաղամն է: Ի կողմանէ մեր գեղին ևս է:

Հերակլ արքայն վրաց հրաման գրէ զոչինչ պահանջողութիւն ունել կամ վիշտ հասուցանել Էջմիածնի հոգևորականաց:

ՎԱՎԵՐԱԳԻՐ 40

Ազատ խանի 1752թ. հրամանագիրը, որ հաստատում է ավարիզաթ, սադերաթ ու մալիյյաթ հարկերից Վաղարշապատ գյուղի ազատված լինելու իրավունքը

Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 1գ, վավերագիր 408, բնագիր,
մեծ. 20,7 x 32,8 սմ, գիր՝ շիքասթե, նասթալիղ

Բարձր հրաման եղավ հետևյալի մասին.

Որովհետև [Աստծո] *վաքիլների* արդար մտքի նպատակը Աստծո ծառաների հանգստության ապահովումն է, ուստի ողորմածաբար կարգադրեցինք այսուհետև հին կարգին համապատասխան Ուչքիլիսա գյուղի բնակիչներին *ավարիզաթից, սադերաթից* ու *մալիյյաթից մուաֆ* ու *մուսալլամ* ճանաչել, որևէ կերպ կամ որևէ անվան տակ *ռայաթներից դինար* կամ հացահատիկ չպահանջել, որպեսզի նրանք իրենց դպրությամբ ու աղոթքներով զբաղվեն: Երևանի *հաքիմը, ամիլները* ու *մելիքը* թող [սույն] գրությանը համապատասխան գործադրեն և կարգադրությանը չհակառակվեն:

Գրվեց 1165 թվականի սրբազան զի հաջջե ամսին[189]:

[Կնիք]. «…Ազատ»:

[Հակառակ կողմում]

[Հայերեն]՝

… Ազատ խանին տուած վասն մաղաֆութեան Սրբոյ Աթոռոյս ռաղամն է ’ի թուին տաճկած ռճկե:

Ճ ցուցանի ’ի սմին թե գիւղն ևս բնաւ արքունի հարկ չունիցի տալ:

[189] 1752թ. հոկտեմբերի 10 – նոյեմբերի 8:

ՎԱՎԵՐԱԳԻՐ 41

Ազատ խանի 1753թ. հրամանագիրը, որով կաթողիկոսի տեղապահին ու Էջմիածնի հոգևորականությանը ծանուցվում է, որ նրանց ավերված մահալները ազատվում են հարկերից և արգելվում նրանցից հավալեների գանձման ժամանակ արվող չարաշահումները

Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 1գ, վավերագիր 413, բնագիր,
մեծ. 22,7 x 41,5 սմ, գիր՝ շիքասթե

Հանուն Բարձրյալ Ալլահի

Բարձր հրաման եղավ, որպեսզի Ուչքիլիսայի վանքի քրիստոնյա մեծամեծների առաջնորդ պատվարժան կաթողիկոսի տեղապահը և սնագլուխները սրբազնագույն աստծո մեծ ողորմածությամբ և գերագույն *վաքիլների* խորին ուշադրությամբ մեծարված ու հպարտ, իմանան, որ օրերս պատվարժան Իվանե *բեկ դիվանբեկին* ու Դալալ *բեկը* գերագույնին զեկուցեցին նրանց հուսալիության ու նվիրվածության մասին: Բարձրագույն *վաքիլները* մեծ ուշադրության [են արժանացրել] նրանց, և առանձին հրամանագրով Երևանի բարձրաստիճան *բեկլարբեկին* ու *ամիլներին* կարգադրել ենք, որպեսզի ամեն հարցում և ամեն առումով հոգ տանեն նրանց և նրանց ավերված *մահալների* մասին՝ դրանք [հարկադրումից] հանելով ու դրանց համար նրանցից ոչինչ չպահանջելով: *Հավալեները* պետք է *մումայիզների* ստուգմանը համապատասխան *իթլաղ* արվեն, այնպես, որ դրամաշորթություն տեղի չունենա, և նրանք հանգիստ ու ապահով իրենց գործերով [զբաղվեն]: Աստծուն ապավինելով՝ թող իրենց վիճակը ամեն առումով համարեն գերագույն *վաքիլների* ուշադրության կենտրոնում, ամեն օր իրենց խնդիրների մասին զեկուցեն ու լուծում պահանջեն: Այս թող համարեն իրենց պարտականությունը:

Գրվեց 1167 թվականի սրբազան մոհարրամ ամսին[190]:

[Կնիք]. «…Ազատ»:

[Հակառակ կողմում]

[Հայերեն]՝
Ազատ խանի ռաղամն է, որ գրեալ է 'ի վերայ Սրբոյ Աթոռոյս միաբանիցն, թէ 'ի խարաբայ վանորեիցն նաև 'ի ձեր խարաբայ մլքերիցն դիվան մալի չառնուն է սա յաւուրս Աղէքսանդր կաթողիկոսին 'ի ՌՄԳ (1754) թվին, 'ի թուին տաճկաց ՌՃԿԷ (1167):
(ՃԲ)

[190] 1753թ. հոկտեմբերի 29 – նոյեմբերի 28:

ՎԱՎԵՐԱԳԻՐ 42

Ազատ խանի 1754թ. հրամանագիրը, որով Երևանի բեկլարբեկ Խալիլ խանին կարգադրվում է հոգ տանել Էջմիածնի վանքի, նրա կաթողիկոսի ու հոգևորականների մասին և հաստատում նրանց տրված նախորդ շահերի հրամանագրերը

Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 1գ, վավերագիր 412, բնագիր,
մեծ. 22,7 x 40 սմ, գիր՝ շիքասթե, նասքալիղ

Իշխանությունն Ալլահինն է:

Բարձր հրաման եղավ, որպեսզի բարձրաստիճան, փառահեղ ու մեծաշուք, իմ քաջարի եղբայր Երևանի Չուխուր Սաադի *բեկլարբեկ* Խալիլ խանը Արարչի անսահման բարեհաճությամբ ու գերագույն մտքի խորին ուշադրությամբ գոտեպնդված գիտենա, որ քանզի բարձր, լրջախոհ միտքը զբաղված է Ուչքիլիսայի վանքի բարեկարգման ու փառքի մասին հոգածությամբ, ուստի անհրաժեշտ է, որ այն բարձրաստիճան եղբայրս ամեն առումով հոգ տանի քրիստոնյա մեծամեծների գլխավոր հիշյալ վանքի Ալեքսանդր կաթողիկոսի ու այնտեղի սնագլուխների դրության մասին, նրանց ունեցած նախկին թագավորների տարբեր հարցերին վերաբերող *ռաղամները* հաստատված համարի և նրանց նկատմամբ անհրաժեշտ հոգածություն ցուցաբերի: Այս թող ընդունի որպես խիստ կարգադրություն, այն չխախտի և իր պարտականությունը համարի:

Գրվեց 1167 թվականի օրհնյալ ռամազան ամսի 6-ին[191]:

[Կնիք]. «…Ազատ»:

[Հակառակ կողմում]

[Կնիք]. «Փառաբանյալի ծառա Օսման»;
Գրանցվեց հավաքագրման *սարդեշթում*:

[Հայերեն]՝
Ազատ խանն ՌՄԳ թվի յունիս ամսին Խալիլ խանին վերայ գրած ռաղամն է, որ գրած է թէ Սուրբ Էջմիածնին ինչ որ հին շահերիցն ըռաղամ ունեն դապուլ անէք: 'Ի թուին տաճկաց ՌՃԿԷ:
(ՃԳ)

[191] 1754թ. հունիսի 28:

Վ Ա Վ Ե Ր Ա Գ Ի Ր 43

Ազատ խանի 1755թ. հրամանագիրը, որով արգելվում է Էջմիածնի նվիրակներից և ուխտավորներից ռահդարի գանձելը

Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 1գ, վավերագիր 415, բնագիր,
մեծ. 21,7 x 43 սմ, գիր՝ շիքասթե, նասթալիղ

Նա է:

Բարձր հրաման եղավ, որպեսզի Ազերբայջանի, Իրաքի ու պաշտպանության տակ գտնվող մյուս *վիլայեթների* մեծ *բեկլարբեկերը*, գթասիրտ *հաքիմները, զաբիթները, ամիլները, քալանթարները, քյադխուդաներն* ու ճանապարհների հսկողությունն իրականացնող պաշտոնյաները սրբազնագույն աստծո առատ ողորմածությամբ ու գերագույն ծառաների լրջախոհ մտքի անսահման մեծահոգությամբ գոտեպնդված գիտենան, որ քանզի Երևանի Ուչքիլիսայի վանքի սնագլուխներն ու սպասավորները *զաքյաթը* հավաքելու ու նվերներ տանելու նպատակով տարբեր կողմերն են գնում, նաև հեռավոր *վիլայեթներից* մարդիկ են գալիս հիշյալ վանքը ուխտագնացության, ուստի Ուչքիլիսայի սնագլուխներից ու սպասավորներից, նաև անձանցից, որոնք Ռումի, Իրանի ու մնացած հեռավոր *վիլայեթներից* ուխտագնացության անվան տակ այդ վանքն են գնում-գալիս՝ չունենալով իրենց հետ առևտրի ու վաճառքի ապրանք, ոչ մի դեպքում չպետք է *ռահդարի* պահանջեն ու անհանգստացնեն: Թող ոչ մի *ռահդարի* նրանցից չպահանջեն և հոգալով նրանց մասին, կարգադրությանը չհակառակվեն: Այս թող տարբեր կողմերում ընդունեն որպես խիստ կարգադրություն ու իրենց պարտականությունը համարեն:

Գրվեց 1168 թվականի մեծ շա՚բան ամսի 4-ին[192]:

[Կնիք]. «…Ազատ»:

Վ Ա Վ Ե Ր Ա Գ Ի Ր 44

Ազատ խանի 1755թ. հրամանագիրը, որով արգելվում է Երևանի նահանգի ավերված վանքերի համար հարկեր պահանջելը

Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 1գ, վավերագիր 416, բնագիր,
մեծ. 22,2 x 43 սմ, գիր՝ շիքասթե, նասթալիղ

Նա է:

Բարձր հրաման եղավ, որպեսզի քրիստոնյա քահայապետ, հոգևորականներից լավագույն Ուչքիլիսայի Ալեքսանդր կաթողիկոսը սրբազնագույն աստծո առատ ողորմածությամբ ու գերագույն ծառաների լրջախոհ մտքի

[192] 1755թ. մայիսի 17:

անսահման մեծահոգությամբ գոտեպնդված գիտենա, որ արեգակնային հայացքին արժանացավ և աշխարհակալ մտքի կողմից ընդունվեց օրերս իր կողմից գրված և գերագույն պալատ ուղարկված խնդրագիրը, ուր զեկուցել էր, որ որպես եկեղեցիներ հայտնի 10-15 վանքերի համար, որոնք այժմ ավերված են և որտեղ սնագլուխներից ու սպասավորներից մի քանիսը հողագործությամբ են զբաղվում, Երևանի *ամիլները* նրան (կաթողիկոսին) նեղում են: Քրիստոնյաների այն գլխավորի խնդրանքով կարգադրեցինք, որպեսզի հիշյալ վանքի *սարքարի* սնագլուխներն ու ծառաները հետամուտ լինեն նրանց բարգավաճմանն ու հողագործությանը: Երևանի *ամիլները* ոչ մի դեպքում չպետք է նեղեն նրանց, նրանցից *հավալեներ* ու այլ պահանջներ ունենան: Քանի որ Ուչքիլիսայի հիշյալ կաթողիկոսի, սնագլուխների ու *ամիլների* մասին հոգ տանելը գերագույն ծառաների նպատակն է, ուստի Երևանի պատվարժան *բեկլարբեկը* և *ամիլները* պետք է անհրաժեշտ հոգածություն հանդես բերեն նրանց նկատմամբ, հիշյալ ավերված վանքերի հողագործության համար *հավալեներ* ու պահանջներ չներկայացնեն: Թող կարգադրությանը չհակառակվեն, այն ընդունեն որպես խիստ կարգադրություն և իրենց պարտականությունը համարեն:

Գրվեց 1168 թվականի մեծ շա՚բան ամսի 24-ին[193]:

[Կնիք]. «…Ազատ»:

[Հակառակ կողմում]

1) [Կնիք];
2) Գրվեց, [կնիք]. «Չկա Աստված բացի Ալլահից, նրանն է իշխանությունն ու արդար օրենքը, Աստծո ծառա Սադեղ»;
3) Գրանցվեց … *սարքարի* մոտ, [կնիք]. «Չկա Աստված բացի Ալլահից, նրանն է իշխանությունն ու արդար օրենքը, Աստծո ծառա Իսմայիլ»;
4) Գրանցվեց զորքերի *սարդեշթեում,* [կնիք]. «Ապավինում եմ Ալլահին…»:

Վ Ա Վ Ե Ր Ա Գ Ի Ր 45

Ազատ խանի 1755թ. հրամանագիրը, որով Երևանի պաշտոնյաներին կարգադրվում է Էջմիածնի վանքից հարկերի գանձման հարցում վարվել Նադիր շահի օրոք սահմանված կարգին համապատասխան և հավելագանձումներ չանել

Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 1գ, վավերագիր 418, բնագիր,
մեծ. 21,6 x 43 սմ, գիր՝ շիքասթե, նասթալիղ

Բարձր հրաման եղավ, որպեսզի քրիստոնյա քահանայապետ ու հոգևորականներից լավագույն Ուչքիլիսայի Ալեքսանդր կաթողիկոսը սրբազնագույն Աստծո առատ ողորմածությամբ ու գերագույն ծառաների լրջախոհ

[193] 1755թ. հունիսի 6:

մտքի անսահման ուշադրությամբ մեծարված ու հպարտ գիտենա, որ արեգակնային հայացքին և աշխարհակալի մտքի ըմբռնմանը արժանացավ նրա գրած ու բարձրագույն պալատ ուղարկած խնդրագիրն այն մասին, որ դրախտաբնակ Նադիր շահի օրոք Ուչքիլիսայի *վակֆերին աբվաբ-ե ջամ'* է արվել 10 *թուման* 7000 *դինարի* կանխիկ գումար և 66 *խարվար* հացահատիկ, և որը վերոհիշյալ դրախտաբնակ միապետը *մուաֆ* է ճանաչել, իսկ օրերս Երևանի *ամիլները* Ուչքիլիսայի *վակֆերի* բերքը չափագրել և *մուաֆությունից* զատ 10 *թավրիզի թումանի* կանխիկ գումար ու 41 *թավրիզի խարվարի* հացահատիկ ավելացրել են *աբվաբ-ե ջամ'ին*: Որովհետև հիշյալ վանքի վերոհիշյալ քրիստոնյաների գլխավորի, նրա ենթակաների ու սպասավորների դրության մասին հոգածությունը գերագույն ծառաների նպատակն է, ուստի վերոհիշյալ քահանաներից լավագույնի խնդրանքով կարգադրեցինք, որպեսզի կանխիկ գումարն ու բնամթերքը, որ ավելացվել է դրախտաբնակ միապետ Նադիր շահի *աբվաբ-ե ջամ'ին* ու որոշմանը, այժմ Երևանի *ամիլները* դադարեցնեն գանձել և հանեն ու այդ պատճառով նրան չանհանգստացնեն ու չնեղեն: Ամեն առումով թող ըստ նրանց ունեցած վերոհիշյալ դրախտաբնակ միապետի *ռաղամի* բովանդակության *մուաֆությունը* գործադրեն: Որոշվեց, որպեսզի Երևանի բարձրաստիճան *բեկլարբեկը, վաքիլն* ու *ամիլները* գրությանը համապատասխան կարգադրված համարեն և այն, ինչ անցկացված քննությունից ու ստուգումից հետո կանխիկ գումարով ու բնամթերքով ավելացվել է վերը նշված մեծանուն շահի օրոք Ուչքիլիսային արված *աբվաբ-ե ջամ'ին*, կրճատված համարեն, և դրա համար վերոհիշյալ կաթողիկոսին չնեղեն ու չանհանգստացնեն: Իսկ նշված *վակֆերի մուաֆության* կապակցությամբ թող նրանց ունեցած նշված շահի *ռաղամի* բովանդակությանը համապատասխան գործադրեն և նրա օրենքներում ու կարգում փոփոխություն թույլ չտան, կարգադրությանը չհակառակվեն: Թող այս ընդունեն որպես խիստ կարգադրություն և իրենց պարտականությունը համարեն:

Գրվեց 1168 թվականի մեծ շա'բան ամսի 24-ին:

[Կնիք]. «…Ազատ»:

[Հակառակ կողմում]

1) [Կնիք]. «…Մոխլես»;
2) [Կնիք];
3) Գրվեց, [կնիք]. «Չկա Աստված բացի Ալլահից, նրանն է իշխանությունն ու արդար օրենքը, Աստծո ծառա Սադեղ»;
4) Գրանցվեց Իրաքի *սարքարի* կողմից, [կնիք]. «Չկա Աստված բացի Ալլահից, նրանն է իշխանությունն ու արդար օրենքը, Աստծո ծառա Իսմայիլ»;
5) Գրանցվեց *սարրեշթեի* կողմից, [կնիք]. «Չկա Աստված բացի Ալլահից, նրանն է իշխանությունն ու արդար օրենքը, Աստծո ծառա Հեյդար»;

6) Գրանցվեց զորքերի *սարրեշթեի* կողմից, [կնիք]. «Ապավինում եմ Ալլահին, Աստծո ծառա Աբդալլահ»:

[Հայերեն]՝

Սուրբ Աթոռոյս մախաֆութեան ռախամն է … Ազատ խանին է թվին ՌՄԴ 'ի ժամանակս Աղեքսանդր կաթողիկոսին և նաև վանքիս արտորայքն ոչ չափեսցեն մումայէզք

Յառաջագոյն ԺԶ ԷՌ նաղտ և ԿԶ խալվար ջինս թագաւորական տալական իլեք են եղեալ և զմաղաֆ լեալ զկնի վերակացուք թագաւորական հարկացն *թահմիլ* են արարեալ, որ ԺԶ նաղտ և ԽԱ խալվար ջինս ևս աւելի է եղել թագաւորական հարկաց տալականիլեքն և այնպէս են յանեալ Նատր շահին և մեծագույն բարեպաշտութեամբ մաղաֆ է արարեալ որ է ԻԶ ԵՌ նաղտ և ՃԷ խալվար ճինս զայսոսիկ յիշելով զսոյն ևս ինք բարեյիշատակ Ազատ խանն է շնորհեալ զի ամենայն եղիցի մաղաֆ: Ազատի խանի ռաղամն է, զոր տուեալ է ըստ արզայի բիւզանդացի Աղեքսանդր կաթողիկոսին վասն մաղաֆութեան Սրբոյ Աթոռոյս: Եւ 'ի ժամանակս Նատր շահին զոր ինչ լեալ է Սրբոյ Աթոռոյս մաղաֆ, որ է Ժ *թումանի* և ԷՌ դեան նաղտ և ԿԶ խալվար ջինս, զայնս վերստին մաղաֆ առնէ: Եվ 'ի ժամանակի Աղէքսանտր կաթողիկոսիս Ժ *թումանի* նաղտ և ԽՌ խալվար ջինս քան զառաջինն աւելի է լեալ, զայն ևս բաշխէ և մաղաֆ առնէ: 'Ի թուին տաճկաց ՌՃԿԸ:

Վ Ա Վ Ե Ր Ա Գ Ի Ր 46

Ազատ խանի 1755թ. հրամանագիրը, որն արգելում է չարաշահումները Կարբի գետից դեպի Էջմիածին բերված ջրանցքի ջրի բաշխման հարցում ի վնաս վանքապատկան գյուղերի

Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 1գ, վավերագիր 420, բնագիր, միմյանց կցված են վավերագրեր, որոնցից ա) մեծ. 22 x 42,5 սմ; բ) և գ) միասին՝ 23,5 x 29 սմ, գիր՝ շիքասթ, նաստաալիղ

ա) Բարձր հրաման եղավ, որպեսզի Երևանի *օլքայի* բարձրաստիճան *բեկլարբեկն* ու *ամիլները* գիտենան, որ այդ ժամանակ քահանայապետ, հոգևորականների ընտրյալ Ուչքիլիսայի Ալեքսանդր կաթողիկոսը ամենաբարձր լուսատուի շեմքին խնդրագիր էր ներկայացրել, [նշելով] որ, քանի որ Կարպի *մահալի* ջուրը քիչ էր, դրախտաբնակ միապետ շահ Աբաս Բ-ի օրոք այն ժամանակվա կաթողիկոսը որոշ գումարի ծախսեր անելով, գնացել Քարձախի (Քասաղի) մոտակայքում առու է փորել [տվել], մեծ քանակությամբ ջուր բերել, որի շնորհիվ մի քանի գյուղ ու *մազրայե* շենացել են: Այն ժամանակվա *բեկլարբեկը* այս իրողության մասին շահին զեկուցելով, վերոհիշյալ դրախտաբնակ [շահ]ի *ռաղամով* կարգադրվել էր, որպեսզի հիշյալ ջրի կեսը Ուչքիլիսային հասնի, կեսն էլ՝ մյուս գյուղերին: Այս կապակցությամբ [կաթողիկոսը] նաև համախոսական ունի: Այժմ այն գյուղերի *ռայաթները* հիշյալ ջրի կապակցությամբ անօրինականություն են

գործում նրա հանդեպ: Քանի որ գերագույն ծառաների միտքը հոգ է տանում հիշյալ վանքի կաթողիկոսի ու սպասավորների մասին, ուստի կարգադրեցինք ջրի բաշխման հարցում նրա ունեցած վերոհիշյալ դրախտաբնակ միապետի *ռաղամին* համապատասխան գործադրել: Կարբիի գյուղերի *ռայաթները* թող ջրի իրենց բաժնին համապատասխան այն օգտագործեն իրենց հողագործության համար և Ուչքիլիսային պատկանող գյուղերի նկատմամբ չարաշահումներ թույլ չտան: Անհրաժեշտ է, որ նրանք որոշմանը համապատասխան գործադրեն և խստորեն արգելեն *ռայաթներին* նրանց բաժինը տանել, և թույլ տան [կաթողիկոսի ենթականերին] օգտագործել իրենց բաժին ջուրը իրենց հողերը ջրելու համար: Ոչ մի դեպքում թող չարաշահումներ թույլ չտան և կարգադրությանը չհակառակվեն: Այս թող ընդունեն որպես խիստ կարգադրություն և իրենց պարտականությունը համարեն:

Գրվեց 1168 թվականի մեծ շա'բան ամսի 24-ին:

[Կնիք]. «…Ազատ»:

[Հակառակ կողմում]

1) [Կնիք];
2) [Կնիք];
3) [Կնիք];
4) Գրանցվեց Իրաքի *սարքարի* կողմից, [կնիք]. «Չկա Աստված բացի Ալլահից, նրանն է իշխանությունն ու արդար օրենքը, Աստծո ծառա Իսմայիլ»;
5) Գրանցվեց … *սարրեշթեի* կողմից, [կնիք]. «Չկա Աստված բացի Ալլահից, նրանն է իշխանությունն ու արդար օրենքը, Աստծո ծառա…»
6) Գրանցվեց զորքերի *սարրեշթեի* կողմից, [կնիք];

[Հայերեն]՝

Այս թուղթ լաւ պահելի է, զի վկայութիւն է վասն մեր գետոյս ջրոյն թէ՝ կեսն Սրբոյ Աթոռոյս և մեր գեօղիս է և կեսն այլոց գեօղօրէից: Գ թուղթքն միմեանց կցեալք որք վկայեն թէ՝ 'ի բնէ այսպես լեալ է ռաղամոք թագաւորաց:
Ինձ ընդեայց յաղագս զսոյն առուց ոչ գրեցեալ է ջրոյ երկու մասն Աթոռոյն լիցի և մինն գեղղորէիցն:

բ) Որովհետև օրերս խնդրարկուն գրավոր շարադրանքով դիմեց ու խնդրեց, և նախկին *շահրիար-ալ-մուլքն* ու *միրաբները* կցված շարադրանքով հաստատեցին, ուստի այս Խոզի տարվա Կարբի *մահալի միրաբը* թող այդ գյուղի *զաբիթի* հետ գնա գետի ամբարտակի մոտ և ջրի կեսը, որ հիշյալ գյուղի բաժինն է, նախորդ տարիների կարգին համապատասխան յուրաքանչյուրի բաժինը առանձնացնի ու հոսեցնի հիշյալ գյուղի ու մյուս գյուղերի *ռայաթների* բերքերի համար ու բաշխի, այնպես, որ այդ *մահալների ռայաթներից* որևէ մեկի նկատմամբ անօրինականություն տեղի չունենա և խստորեն արգելի այդ: Եթե պարզվի, որ որևէ մեկն անօրինականություն է

գործել, ապա պետք է պատժվի: Թող այս իրենց պարտականությունը համարեն:

Գրվեց 1131 թվականի օրհնյալ ռամազան ամսին[194]:

[Կնիք]. «Չկա Աստված բացի Ալլահից, նրանն է իշխանությունն ու հստակ իրավունքը, Աստծո ծառա Մեհր Ալի, 1128»:

Ամենանվաստ ծառաներ Ուչքիլիսա գյուղի *քյաղխուդաների* ու *ռայաթների* խնդրագիրը

Խոնարհաբար զեկուցում են գերագույնին [հետևյալը]. «Հնուց՝ հենց ամբարտակի կառուցման ժամանակներից ի վեր նվաստներիս ջուրը գետի վերին մասից երկու մասի էր բաժանվում, կեսը՝ նվաստներիս, կեսը՝ մյուս գյուղերին: Մինչ այժմ հոսող ջուրը հեղեղի պես առատ էր: Այժմ ջրաբաժանման *սարքարը* խեղճերիս նկատմամբ անօրինականություն ու բռնություն է գործում. նվաստներիս *հակկաբեն* չի տալիս, և մյուսները իրենց բաժնից ավելին են տանում: Խնդրում ենք գերագույն ողորմածությամբ գթալ և նախորդ տարիներին [ջուրը] բաշխող *շահրիար-ալ-մուլքից* ու *միրաբներից* ճշմարտությունը պարզելով՝ մեծահոգաբար հրամանագիր շնորհել ու իրականությանը վերահասու լինել, որպեսզի անօրինականությանը վերջ տրվի, որը Ալլահն անտես չի առնի: Ըստ Ձերդ Գերազանցության հրամանի»:

Թող հիշյալ *մահալի շահրիար-ալ-մուլքը, մելիքն* ու *միրաբները* զեկուցեն:

[Հակառակ կողմում]

1) *Ամիր սարքար* Մուհամմադ Սաղեղը զեկուցում է. «Ըստ մշտապես գործող կարգի Ուչքիլիսայի առվի կեսը հոսում էր այն կողմերի գյուղերի [ոռոգման] համար և առվի կեսն էլ՝ Ուչքիլիսայի համար, կարիքի ու անհրաժեշտության դեպքում, առատ ջուր ունեցող գյուղերն օգնության էին հասնում: [Այսպես] գիտեմ: Ինչպես, որ կհրամայեք, իրավունքը Ձերն է»: [Կնիք]. «…Սաղեղ»:

2) Մուհամմադ Սաղեղը զեկուցում է [հետևյալը]. «Ընդունված կարգի համաձայն Կարբի *մահալի միրաբը* հիշյալ *մահալի սարքարի* հետ գնալով գետի ամբարտակի մոտ՝ [ջուրը] ըստ հին կարգի բաժանում է այդ գյուղի ու մյուս գյուղերի միջև, յուրաքանչյուրի բաժինն առանձնացնելով, հոսեցնում դեպի նրանց բերքերը: Եթե գյուղերից որևէ մեկի *ռայաթները*, բնակիչներն ու հողագործները անօրինականություն գործեն խնդրարկուի հանդեպ, այդ *մահալի միրաբը* պետք է պատժի ու արգելի նրանց անօրինականությունը: Իշխանությունը ամենաբարձր, պատվարժան *վաքիլներինն* է: Ինչպես, որ կհրամայեք, իրավունքը Ձերն է»:

[Կնիք]. «Ապավինում եմ Ալլահին, Աստծո ծառա Մուհամմադ Սաղեղ»:

[194] 1719թ. հուլիսի 18 – օգոստոսի 17:

3) Հասան Ղաղիմին զեկուցում է. «Ըստ ընդունված կարգի ջրաբաժանից, առուն բաժանվում է. ջրի կեսը հոսում է դեպի Ուչքիլիսա, մյուս կեսը՝ այլ գյուղեր: Եթե ջուրը չի բավականացնում, ամբարտակի վերևի ջրից են տրամադրում: [Այսքանը] գիտեմ: Ինչպես, որ կհրամայեք, իրավունքը Ձերն է»: [Կնիք];

4) Աղա Հասան անունով հայտնի Սեֆի Ղուլին զեկուցում է. «Ըստ կարգի գետի ջրի կեսը Ուչքիլիսա է հոսում, կեսն էլ՝ բոլոր մյուս մահմեդականների և Կարբի *մահալի ռայաթների* գյուղերը: Նվաստս յոթ անգամ եղել եմ այդ *մահալի միրաբը*, առվի ջրի [բաշխման] հնուց գործող կարգն այսպիսին է: [Այսքանը] գիտեմ: Ինչպես, որ կհրամայեք, իրավունքը Ձերն է»: [Կնիք];

5) Կարբիի *մահալի մելիք* Մելիք Աֆթանդիլը զեկուցում է. «Ըստ մշտապես ընդունված կարգի ջրաբաժանից ջուրը կիսվում է երկու մասի. մի կեսը պետք է հոսի դեպի Ուչքիլիսա գյուղը, մյուս կեսը՝ դեպի այլ գյուղեր: Ընդունված կարգն այսպիսին է: [Այսքանը] գիտեմ: Ինչպես, որ [Նորին Գերազանցությունը] կհրամայի, իրավունքը նրանն է»:
[Կնիք]. «Աստծո ծառա Աֆթանդիլ»:
Ճիշտ է: Գրանցվեց հաշվառման *սարդեշթում*:

գ) Բարձր հրաման եղավ հետևյալի մասին.

Որովհետև խնդրարկուն գրավոր շարադրանքով դիմեց, և կցված *թա'լիղեից*, ուր նախկին *միրաբների* մի խումբ մի քանի խոսքով գրել են, հայտնի դառնում, որ հիշյալ *ռայաթները* իրավացի են, ուստի կարգադրեցինք, որպեսզի իշխանության, վեհության ու ազնվականության հանգրվան Միր Աբդ-ալ-Ղադեր Ղաղիմին բարձր հրամանի բովանդակությանը ծանոթանալով, ինչպես, որ նախկին *միրաբները* այդ իրողության ճշմարտացիությունը ներկայացրել են, հին ժամանակներին ու կարգին համապատասխան թող գործադրեն, այնպես, որ հիշյալ *ռայաթների* բերքին վնաս չհասնի:

Գրվեց 1134 թվականի ողորմած շավալ ամսին[195]:

[Կնիք]. «Ապավինում եմ Ալլահին, Աստծո ծառա Ալլահ Ղուլի»:

Ամենանվաստ ծառաներ Կարբիի *նահիեի* Ուչքիլիսա գյուղի *ռայաթների* խնդրագիրը

Խոնարհաբար տեղեկացնում են [հետևյալի մասին]. «Քանզի Ուչքիլիսայի գետի ջրի վերին ու ստորին [հատվածներում] Օշական, Մուղնի ու Կարբի գյուղերի *ռայաթները* գետից օգտվում են, նրա աննշան մասն է մեզ օգնության հասել: Նրանք իրենց այգիներն ու դաշտերն են ջրում, իսկ մենք այն օգտագործում ենք մեր բերքերի ու բամբակի զտման և այլնի վրա՝ ամեն

[195] 1722թ. հուլիսի 15 – օգոստոսի 13:

տարի մեծ գումարի օգուտ տալով *դիվանին*: Թեև *մուհասիլ* ու մարդ ենք ուղարկել, որպեսզի ջուրը հոսեցնի, դարձյալ կտրում են՝ մեծ վնաս հասցնելով *դիվանի* ունեցվածքին ու անօրինականություն գործելով թշվառներիս հանդեպ: Թշվառներիս զտվելու ենթակա բերքը չորանալով՝ փչացել է ու կրկնակի վնաս պատճառել խեղճերիս: Հոսող ջուրը չի բավականացնում ու թշվառներիս օգնության չի հասել ու չի հասնում: Մշտապես երեք անգամ [ենք ջրել], ամեն անգամ ամեն օր հասել է ներքև: Այժմ չեն թողնում, որպեսզի թշվառներիս *մահալները* ջրից հագեցնեն: Նորին Գերազանցությունը մեծահոգի է: Խնդրում ենք գերագույն օրհնյալ ողորմածությամբ խղճալ և թշվառներիս մասին մտածելով՝ օգնել, որը Ալլահն ու Մարգարեն անտես չեն առնի: Ըստ Նորին [Մեծության] բարձրագույն հրամանի»:

Թող ներկայիս *շահրիար-ալ-մուլք քալանթարը* գործադրի:

[Հակառակ կողմում]

Հաջի Հուսեյնը զեկուցում է. «Ջրաբաժանից ամբողջ ջրի կեսն ըստ ընդունված կարգի հոսում է դեպի Ուչքիլիսա գյուղը, մյուս կեսը՝ դեպի մյուս գյուղերը: Առվից, որ ամբարտակից վեր է գետից բաժանվում, ամեն տարի երկուերեք անգամ լրացուցիչ ջուր են բաց թողնում, որպեսզի ամեն անգամ մի քանի օրով գետի ջուրն ավելացնեն և ներքևի գյուղերը իրենց բերքի համար ջուր վերցնեն: Երբ վերևի գյուղերը ապօրինաբար իրենց ջրաբաժնից ավելի ջուր են վերցնում և թույլ չեն տալիս, որպեսզի ջուրը ներքև հոսի, անօրինականություն են գործում, որը մեծ վնաս կարող է պատճառել խնդրարկուին: Խնդրարկուն այս կապակցությամբ *միրաբների, քալանթարի, մելիքի* [գրությունն] ու նախկին *բեկլարբեկի* հրամանագիրն ունի: [Այսքանը] գիտեմ: Ինչպես, որ կհրամայեք, իրավունքը Ձերն է: Վերջ»:
[Կնիք]. «… Հուսեյն»:
[Հայերեն]՝
ջուրին համար է որ ամէն գեղի ջուրն պէշլու անէ յայս ինքն յՕշականայ գետի ջրոյ կէսն՝ Սրբոյ Էջմիածնայ է՝ և կէսն՝ միւս գիւղորէիցն, ի թիւս ՌՃԻԱ (1121) ՌՃԼԴ (1134) տաճկաց լինին այսք անցք և գրին:

ՎԱՎԵՐԱԳԻՐ 47

Ազատ խանի 1755թ. հրամանագիրն՝ ուղղված Երևանի տեղական իշխանություններին, որով կարգադրվում է նախորդ շահերի հրամանագրերին համապատասխան ճանաչել Էջմիածնի մուսֆության իրավունքը

Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 1գ, վավերագիր 419, բնագիր, մեծ. 22,3 x 36 սմ, գիր՝ շիքասթե, նասթալիղ

Բարձր հրաման եղավ, որպեսզի Երևանի Չուխուր Սաադի մեծ *ամիրալ-ումարա* բարձրաստիճան *բեկլարբեկը, մալիյյաթի վաքիլը,* մնացած *ամիլները, քալանթարն* ու *քյադխուդաները* գիտենան, որ օրերս քահա-

նայապետ Ուչքիլիսայի վանքի Ալեքսանդր կաթողիկոսը զեկուցել էր, որ Մայր Աթոռի սնագլուխներն ու սպասավորները, որ, օրհնանքներ հղելով ու Աստծուն փառաբանելով, ճգնավորություն են անում, հին ժամանակներից ի վեր *մուաֆ* են եղել, նրանց ջրաղացների, *դինգերի* (բրնձի մշակման արհեստանոցներ), *քրքրանների*, ձիթհանների, այգիների ու խանութների, իջևանատների ու բաղնիքների *մալուջիաթը* կրճատվել էր: Նաև *չորանբեկի, մարա'ի* ու *մավաշի* [հարկերի] գումարներ չեն գանձվել նրանցից, և նրանց *թիուլային վակֆերի* հողերի մշակության համար *մալուջիաթ* չի պահանջվել: Որովհետև գերագույն բարեհաճության լրջախոհ միտքը հոգ է տանում հին կարգի անփոփոխ լինելու մասին, ուստի կարգադրեցինք ամեն հարցում նրանց հետ նախորդ շահերի *ռաղամներին*, *հաքիմների* ու իշխանավորների *հոքմերին* համապատասխան վարվել, գումարները, որ սրանից առաջ կրճատվել էին, այժմ ևս թող կրճատված համարեն և այն, ինչ ընդունված չի եղել նրանցից գանձել, այժմ նույնպես թող չպահանջեն: Ոչինչ հիշյալ կաթողիկոսից, նրա ենթականերից և Ուչքիլիսայի սպասավորներից չպետք է վերցնեն: Թող ոչ մի դեպքում կարգադրությանը չհակառակվեն և այն իրենց պարտականությունը համարեն:

Գրվեց 1168 թվականի ռամազան ամսի 4-ին[196]:

[Կնիք]. «…Ազատ»:

[Հակառակ կողմում]

1) [Կնիք];
2) [Կնիք];
3) Գրվեց, [կնիք]. «Չկա Աստված բացի Ալլահից, նրանն է իշխանությունն ու արդար օրենքը, Աստծո ծառա Սադեղ»;
4) Գրանցվեց Իրաքի *սարքարի* մոտ, [կնիք]. «Չկա Աստված բացի Ալլահից, նրանն է իշխանությունն ու արդար օրենքը, Աստծո ծառա Իսմայիլ»;
5) Գրանցվեց *սարրեշթեի* կողմից, [կնիք]. «Չկա Աստված բացի Ալլահից, նրանն է իշխանությունն ու արդար օրենքը, Աստծո ծառա Աբդ առ-Ռազզակ»;
6) Գրանցվեց զորքերի *սարրեշթեի* կողմից, [կնիք]. «Ապավինում եմ Ալլահին, Աստծո ծառա Աբդալլահ»:

[Հայերեն]՝
Ազատ խանին գիրն է վասն մաղաֆութեան վանքիս:
ՃԴ
Ազատ խանին ռաղամն է վասն մաղաֆութեան Սրբոյ Աթոռոյս ըստ արզայի Աղէքսանդր կաթողիկոսին թէ որպէս 'ի բնէ թագաւորաց ռաղամօք մաղաֆ է լեալ Էջմիածին նոյնպէս և ես հրամայեմ զի այնպէս լիցի: Ուստի մի՛

[196] 1755թ. հունիսի 15:

առնուցուք ի նոցանէ զբահրայ բաղաթ, և զմալուճհաթս ոչխարի տաւարի, քեարվանսարայի ջրաղացի տինկի, ձիթահանքի, համամի և այլ այսպիսեաց: 'Ի թուին տաճկաց ՌՃԿԸ:

ՎԱՎԵՐԱԳԻՐ 48

Մուհամմադ Հասան խանի 1757թ. հրամանագիրը, որով արգելվում է ռահդարի գանձել Էջմիածնի նվիրակներից և ուխտավորներից

Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 1գ, վավերագիր 424, բնագիր, մեծ. 19,8 x 34,5 սմ, գիր՝ նասթալիղ շիքասթեի տարրերով

Բարձր հրաման եղավ որպեսզի Ազերբայջանի, Իրաքի ու Իրանի սահմանամերձ շրջանների ու *վիլայեթների* բարձրաստիճան մեծ *բեկլարբեկերը,* մեծահոգի *հաքիմները, զաբիթները, ամիլները, քալանթարները, բյադխուդաներն* ու ճանապարհները հսկող պաշտոնյաները լինելով գերագույն ծառաների լրջախոհ մտքի անչափ ուշադրությանը տեղյակ ու արժանի՝ իմանան, որ քանզի Երևանի Ուչքիլիսայի վանքի սնագլուխներն ու սպասավորները *զաքյաթը* հավաքելու և նվերներ տանելու համար այս ու այն կողմերն են գնում, նաև հեռավոր *վիլայեթներից* նույնպես մարդիկ ուխտագնացության են գալիս Ուչքիլիսայի վանքը, ապա Ուչքիլիսայի սնագլուխներից ու սպասավորներից, նաև այն մարդկանցից, որոնք Ռումի, Իրանի ու մնացած այլ հեռավոր *վիլայեթներից* ուխտագնացության նպատակով Ուչքիլիսա են գալիս-գնում, եթե առևտրի ու վաճառքի ապրանք չունենան, նվերների համար ոչ մի դեպքում չպետք է *ռահդարի* պահանջեն ու նեղեն: Նրանց մասին հոգ տանելով՝ չպետք է կարգադրությանը հակառակվեն և այս ընդունելով որպես խիստ կարգադրություն' թող իրենց պարտականությունը համարեն:

Գրվեց 1170 թվականի ողորմած շավալ ամսի 7-ին[197]:

[Հակառակ կողմում]

Գրանցվեց *սարրեշթեում:*

[Հայերեն]՝
Մահմադ Հասան խանի ռաղամն է, զոր գրեալ է թէ եկող ուխտաորացն ոչ ոք բան չունենա, և ոչ մաքսապետն: Ի' 'ՌՄԶ (1757) յունիս ԻԵ, 'ի թուին տաճկաց ՌՃԷ (1170):

[197] 1757թ. հունիսի 26:

Վ Ա Վ Ե Ր Ա Գ Ի Ր 49

Քերիմ խանի հրամանագիրը[198], որով հաստատվում են Սիմեոն կաթողիկոսի կաթողիկոսական իրավունքները, ինչպես նաև Էջմիածնի վանքի իրավունքները՝ շարադրված 14 կետերով

Կաթողիկոսական դիվան, թղթ. 1ե, վավերագիր 591, պատճեն,
մեծ. 39 x 56.5 սմ, գիր՝ շիքասթե

Բարձր հրաման եղավ հետևյալի մասին.

Որովհետև ողորմած մտքի և գերագույն արդարադատ էության նպատակը մշտապես այն է, որպեսզի մեր օրհնյալ մարգարե Հիսուսի, թող խաղաղություն լինի նրան, հավատի հետևորդների խումբն ու Իրանում բնակվող մյուս ժողովուրդները, որոնք գերապատիվ բարձր ծառաների մեծահոգության արեգակի ստվերում կատարում են իրենց *զիմմիական* պարտականությունները, ապահովության պայմանագրին[199] համապատասխան հանգիստ և [նրանց] հնարավորությունները գերազանցող, ծանր պահանջներից ազատ լինեն, այս բարեբախտ օրերին, երբ Ազերբայջանի շրջանի տարածքը ծածկվեց պատվարժան վրաններով, քրիստոնյաների վանքերից գլխավոր, Չուխուր Սաադի *օլքայում* գտնվող Ուչքիլիսայի քահանաներից ու սնագլուխներից մի քանիսը ներկայացան արդարադատության պալատ և գերագույն ներկայությունը գտնողներին զեկուցեցին, որ օրերս Ուչքիլիսայի Հակոբ կաթողիկոսը վախճանվել է, և խնդրեցին հիշյալ վանքի բոլոր հոգևորականների ու քահանաների կնիքներով հաստատված առանձին խնդրագրի հիման վրա Ուչքիլիսայի կաթողիկոսությունը հանձնել քրիստոնյա մեծամեծների առաջնորդ ու նրանցից լավագույն, քահանայապետ Երևանի քրիստոնյա Սիմեոն կաթողիկոսին, որն արժանի է այդ դիրքին, նաև [խնդրեցին] Սեֆյան դրախտաբնակ միապետների ու Նորին Մեծություն հանգուցյալ շահի, թող Ալլահն նրանց ողորմի, [կողմից հրապարակված] *ռաղամներին* համապատասխան պարտադիր գործադրության ենթակա հրովարտակներ հրապարակել ստորև նշվող խնդիրների կապակցությամբ.

1. Այն մասին, որ զեկուցեցին, որ Ուչքիլիսայի կաթողիկոսները, քահանաները, սնագլուխներն ու սպասավորները հին ժամանակներից ի վեր մշտապես դրախտաբնակ նախկին միապետների *ռաղամներով* ու *հոքմերով մալոջիաթից, վջուհաթից, ավարիզաթից* ու այլ ծանր հարկերից *մուաֆ* են

[198] Թեև փաստաթղթի վրա հրովարտակի թվականը ջնջված է, սակայն այն ձեռք բերող Սիմեոն Երևանցու վկայության համաձայն այն հրապարակվել է հիջրայի 1177 թվականին, որը համապատասխանում է 1763/1764թթ. (Սիմեոն Երևանցի, Ջամբռ, էջ 315):

[199] Խոսքն ամենայն հավանականությամբ Մոհամմադ մարգարեի կողմից զիմմի քրիստոնյա համայնքների, այդ թվում նաև հայերի, հետ կնքված պայմանագրերի մասին է:

եղել: [Նրանց] հացահատիկի, բրնձի ու այլ հողագործական [արտադրանքները] հարկագանձման համար հաշվառման չեն ենթարկվել, *մումայիզները* [նրանց կալվածքների] տարածքը չեն չափագրել, և նրանցից *դինար* չի գանձվել: Անհրաժեշտ է, որպեսզի Երևանի մեծ *ամիր-ալ-ումարա*, բարձրաստիճան *բեկլարբեկը, ամիլները*, *քալանթարներն* ու *դիվանի մումայիզները* այդ կապակցությամբ նախորդ տարիների *ռաղամների* բովանդակությանը համապատասխան վարվեն ու չհակառակվեն:

2. Այն կապակցությամբ, որ խնդրել են, որ եթե Երևանի ինչպես *զիմմի,* այնպես էլ մահմեդական բնակիչները Ուչքիլիսայի *վակֆային* հողերում հողագործությամբ զբաղվեն, *մուհասիլին* կարգադրվի *մալիքանեն* գանձել և հանձնել [կաթողիկոսին]. բարձրաստիճան *բեկլարբեկը* և *ամիլները* խնդրանքին ու կարգին համապատասխան թող գործադրեն, նրանց *մալիքանեն* գանձեն ու հանձնեն:

3. [Եկեղեցու] զանգերը խփելու, կոչնակ հնչեցնելու, ժամերգության, քրիստոնեական օրենքներով հանգուցյալներին տանելու, վանքերի, մենաստանների ու գյուղերի կարգուկանոնի հաստատման կապակցությամբ խնդրեցին, որպեսզի հին կարգը գործադրեն: Երևանի բարձրաստիճան *բեկլարբեկը, ամիլներն* ու *քալանթարը* թող նրանց խնդրանքով հին կարգի համապատասխան վարվեն;

4. Այն կապակցությամբ, որ զեկուցել են, որ գնված *մուլքերից*, որոնք *վակֆ* են արվել Ուչքիլիսային, որոշ հողատարածքներ, այգիներ, ջրաղացներ, *դինգեր, քրքրաներ*, ձիթհանքեր ու այլ անշարժ գույք, մի խումբ մարդիկ ապօրինաբար զավթել են: Որոշվեց, որ պետք է հետ վերադարձնեն: Բարձրաստիճան *բեկլարբեկն* ու *ամիլները* թող վերոհիշյալ իրողությունը քննեն և կարգին համապատասխան վարվելով զավթիչներից օտարեն ու հանձնեն Մայր Աթոռի կաթողիկոսի, հոգևորականների և [վանքի] սպասավորների տնօրինմանը;

5. Այն մասին, որ խնդրել են, որպեսզի Ուչքիլիսայի կաթողիկոսի գործերի կապակցությամբ կարգադրվի, որ վանքերի ու եկեղեցիների վանահայրերը, սնագլուխներն ու քահանաները նրա գործելակերպի հետ գործ չունենան: Այս առումով ըստ նրանց ունեցած նախորդ շահերի *ռաղամների* բարձրաստիճան *բեկլարբեկը* պետք է արգելի Նորին Գերազանցություն *շեյխ-ուլ-իսլամին, ղազիներին* ու բարեբախտ *ամիլներին,* մահմեդական *քալանթարներին* ու *զիմմի մելիքներին* որևէ կերպ միջամտել: Այս կապակցությամբ բարձրաստիճան *բեկլարբեկը* պետք է նախկին երկնաբնակ միապետների, թող Ալլահը նրանց ողորմի, *ռաղամների* բովանդակությանը համապատասխան գործադրի;

6. Այն կապակցությամբ, որ զեկուցել են, որ պատերազմի ժամանակ, երբ մարդիկ որոշ իրեր ու գույք Ուչքիլիսա տարան ու որպես գրավ թողեցին, ոմանք եկել, մի մասը տարել են, մի մասը խառնաշփոթի ժամանակ ոչնչացել է, մի մասն էլ *հաքիմները* զավթեցին: Այժմ այդ ունեցվածքի

տերերի ժառանգները և այլոք այդ պատճառով անօրինական վեճ են սկսել: Կարգադրվեց, որ, եթե ինչպես, որ զեկուցել են, պահանջատերերի պահանջածը տարել են, ապա թող բարձրաստիճան *բեկլարբեկը* թույլ չտա [այդ պատճառով] որևէ մեկին նեղեն;

7. Այն մասին, որ ինչպես զեկուցել են, որոշ հայեր իրենց պատկանող գանձագին *մուլքերը վակֆ* են արել Ուչքիլիսայի վանքին, բայց այժմ նրանց ազգականներն ու հարազատները, ժառանգները եկել, վեճ են սկսել նրանց տիրելու համար և ամենալուսավոր *շար'ին* հակառակ նեղություն են պատճառում, և խնդրել են, որպեսզի կարգադրվի, որ բարձրաստիճան *բեկլարբեկը* արգելի [նման արարքները]: Թող բարձրաստիճան *բեկլարբեկը* պարզի իրողությունը և ըստ կարգի գործադրի;

8. Այն կապակցությամբ, որ դիմել էին, որ որոշ անձիք հայերից շատերին բռնությամբ մահմեդականացնում են, և որ կարգադրվի չնեղել: Բարձրաստիճան *բեկլարբեկը* թող այս առթիվ նախորդ դրախտաբնակ միապետների հեղինակավոր *ռաղամների* բովանդակությանը համապատասխան գործադրի ու արգելի այդ արարքները;

9. Այն մասին, որ զեկուցել են, որ որոշ մահմեդականներից պարտքերի պահանջներ ունեն: Անհրաժեշտ է, որպեսզի բարձրաստիճան *բեկլարբեկը* պարզի իրողությունը և նրանց պարտքերի կապակցությամբ փաստաթղթերին ու օրինական հրամանագրերին համապատասխան որոշում կայացնի ու գանձի;

10. Այն մասին, որ դիմել են, որ մշտապես Ուչքիլիսայի հոգևորականներից, ուսանողներից, սպասավորներից ու գործակալներից [ոմանք] *զաքյաթն* ու հավատի *նոգուրաթը* գանձելու համար Ռումի ու Իրանի տարբեր կողմերն ու բնակավայրերն են գնում և նշված վանքը ուխտագնացության են գալիս: Եթե [նրանք] վաճառքի իրեր ու ապրանք իրենց հետ չունենան, ապա թող ըստ իրենց ունեցած նախկին միապետների *ռաղամների* նվիրատվությունների համար *ռահդարիից մուաֆ* լինեն և կարգադրվի, որ ոչ ոք այդ պատճառով *դինար* չգանձի: Այս պատճառով կարգադրվեց, որպեսզի Իրանի բոլոր շրջանների, հատկապես Երևանի, բարձրաստիճան *բեկլարբեկները, հաքիմները, ամիլները* և *քալանթարները,* նաև յուրաքանչյուր բնակավայրի *մուսթաաջիրն* ու *ռահդարը* այս կապակցությամբ նշված *ռաղամներին* համապատասխան վարվեն և նրանց իրենց ձիերի ու չորքոտանիների պատճառով չխոչընդոտեն;

11. Այն կապակցությամբ, որ դիմել են, որ հեծյալ շրջող հոգևորականները, [վանական] ուսանողները և սպասավորները նախորդ *ռաղամներով* բոլոր *վիլայեթներում* սուրհանդակի ձի [հարկը] տալուց *մուաֆ* են եղել: Իրանի, հատկապես Երևանի բարձրաստիճան *բեկլարբեկն* ու *ամիլները* այս առթիվ թող նշված *ռաղամներին* համապատասխան վարվեն ու սուրհանդակի ձիու պահանջով չնեղեն;

12. Այն կապակցությամբ, որ զեկուցել են, որ հին ժամանակներից ի վեր, դրախտաբնակ միապետների *ռաղամներով* ու *հոքմերով* կարգադրված է եղել, որ մահմեդականներից ու հայերից ոչ ոք բացի հոգևորականներից ու [վանքի] սպասավորներից չպետք է հողագործությամբ զբաղվի Ուչքիլիսայի *վակֆային մուլքերում,* հողատարածություններում ու այգիներում: [Թող] բարձրաստիճան *բեկլարբեկը* խստագույնս հին կարգին համապատասխան գործադրի;

13. Այն կապակցությամբ, որ զեկուցել են, որ նախկին միապետների կնիքներով կնքված *ռաղամներով* ու *հոքմերով* Կարբիի ու Օշականի գետի ջրի կեսը Ուչքիլիսայի բաժինն է եղել: Անհրաժեշտ է, որպեսզի բարձրաստիճան *բեկլարբեկն* ու *ամիլները* [նախորդ] տարիների *ռաղամները* հաշվի առնելով՝ հին կարգին համապատասխան գործադրեն, չհակառակվեն և նրանց [հասնող] մշտական ջուրը [նրանց] տնօրինմանը հատկացնեն;

14. Այն մասին, որ դիմել են, թե հին ժամանակներից նախկին միապետների *ռաղամների* հիման վրա մշտապես Ուչքիլիսայի հոգևորականները, սևագլուխներն ու սպասավորները *ավարիզաթից, սաղերաթից* ու *իխրաջաթից մուաֆ* ու նաև այլ տուրքերից *մուսալլամ* են եղել, կարգադրեցինք, որպեսզի Երևանի ու հայերի բնակավայրերի բարձրաստիճան *բեկլարբեկը, ամիլները* և *քալանթարը* ամեն առումով բարձր *ռաղամների* բովանդակությանը համապատասխան գործադրեն և [նրանցից] չշեղվեն:

Համապատասխանաբար կարգադրեցինք, որպեսզի բարձրաստիճան ու փառահեղ մեծ *ամիր-ալ-ումարա,* Երևանի *բեկլարբեկ* Հուսեյն խան Ղաջարը, բարեբախտ *ամիլներն* ու *քալանթարը,* մյուս մեծ *բեկլարբեկները,* հարգարժան *հաքիմները, քալանթարները* ու դրախտային Իրանի *վիլայեթների դիվանի* գործերի *մուբաշիրները, ռահդարները,* պաշտպանության տակ գտնվող երկրների սահմանային *վջուհի մուսթաաջիրները* ամեն առումով պետք է վարվեն Սեֆյան նախկին դրախտաբնակ միապետների, հանգուցյալ շահի[200], թող Ալլահը նրանց հոգիները լուսավորի, կողմից տարբեր խընդիրների շուրջ հրապարակված *ռաղամների* ու *հոքմերի* բովանդակությանը համապատասխան: Եվ թող այս իրենց պարտականությունը համարեն:

Գրվեց … թվականի շավալ ամսի 24-ին:

Քերիմ խան Վաքիլի կնիքի տեղը:

[Եզրից]

Դրախտաբնակ Քերիմ Վաքիլի վճռական *ֆերմանի* պատճենն է, որն արտագրել է Ուչքիլիսայի երկնափայլ օջախի կաթողիկոսի արդար *սարքարի* գրագիր պատվարժան Միրզա Քյալբա'լին, [կնիք]. «Աստծո ծառա Քալբա'լի»;

[200] Խոսքը վերաբերում է թերևս Նադիր շահին:

Անդրէաս արքեպիսկոպոս, [կնիք]. «Քրիստոսի ծառա Անդրէաս…»;
Ալէքսան արքեպիսկոպոս, [կնիք]. «Քրիստոսի ծառա Ալէքսան վարդապետ…»;
Սահակ արքեպիսկոպոս, [կնիք]. «Քրիստոսի ծառա Սահակ վարդապետ 1211»;
Եփրեմ վարդապետ, [կնիք]. «Քրիստոսի ծառա Եփրեմ վարդապետ…»;
Գրիգոր վարդապետ, [կնիք]. «Քրիստոսի ծառա Գրիգոր վարդապետ…»;
Սերովբէ վարդապետ, [կնիք]. «Քրիստոսի ծառա Սերովբէ վարդապետ…»;
Ստեփան վարդապետ, [կնիք]. «Քրիստոսի ծառա Ստեփան վարդապետ…»:

ՎԱՎԵՐԱԳԻՐ 50

Քերիմ խանի 1769թ. հրամանագիրը, որով կարգադրվում է քննել Ս. Ստեփաննոս Նախավկայի վանքի հացահատիկի պաշարների վրա ավազակային հարձակման դեպքը և պատժել մեղավորներին

Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 1դ, վավերագիր 465, բնագիր,
մեծ. 12.5 x 21 սմ, գիր՝ շիքասթ

Կարգադրվեց, որպեսզի քրիստոնյաներից լավագույն Տեր Մաղաքիան և Դանիելի վանքի[201] [մյուս] սևագլուխները իմանան, որ գերագույնին զեկուցվեց, որ մի քանի բեռ հացահատիկը որոշ անձիք Նախիջևանի կողմերն են տարել, սակայն հայտնի չէ, թե նրանք որ ցեղից են: Պետք է *թա՛նիչեն* ստանալուն պես իրականությանը հետամուտ լինեն, պարզեն հացահատիկը տանող անձանց անունները, ցեղային պատկանելությունն ու զեկուցեն և այսուհետև թույլ չտան, որպեսզի որևէ մեկը մեկ *ման* հացահատիկ տանի այն կողմերը: [Նման դեպքեր] տեղի ունենալու դեպքում, պատասխանատվության կկանչվեն:

Գրվեց 1183 թվականի օրհնյալ ռամազան ամսին[202]:

Կարգադրվեց հետևյալը.

Սրանից առաջ նրանց խստորեն կարգադրվել էր, որ չպետք է թույլ տան, որպեսզի որևէ մեկը մեկ *ման* հացահատիկ տանի: Այժմ, երբ հացահատիկը տարել են, եթե այն անձանց բռնել են, թող տեղեկացնեն, եթե՝ ոչ, ապա թող պարզեն ու զեկուցեն: Այսուհետև երբ էլ, որ պարզվի, որ մեկ *ման* հացահատիկ են տարել, պատասխանատվության են կանչվելու:
[Կնիք]. «Չկա Աստված բացի Ալլահից, նրանն է իշխանությունն ու արդար օրենքը, Աստծո ծառա Մուհամմադ Քերիմ»:

[201] Իրանական աղբյուրներում սկսած XVIII դարից այսպես է նշվում Դարաշամբի Ս. Ստեփաննոս Նախավկայի (Մաղարդա) վանքը:
[202] 1769թ. դեկտեմբերի 29 – 1770թ. հունվարի 28:

ՎԱՎԵՐԱԳԻՐ 51

Քերիմ խանի 1778թ. հրամանագիրը, որով Էջմիածնի Սիմեոն կաթողիկոսին հայտնվում է վերջինիս կողմից ուղարկված նվերների ստացման ու նրա հանդեպ շահական բարեհաճության մասին

Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 1դ, վավերագիր 487, բնագիր,
մեծ. 23 x 38,5 սմ, գիր՝ շիքասթ, նասթալիղ

Նա է:

Բարձր հրաման եղավ, որպեսզի գերապատիվ տեր ու հավատարիմ նվիրյալ, քրիստոնյա մեծամեծներից լավագույն Ուչքիլիսայի Սիմեոն կաթողիկոսը գթառատ գերագույն մտքի ուշադրությամբ գոտեպնդված՝ գիտենա, որ օրերս նրա հավատարմությունը հավաստող խնդրագիրը, որը [թվարկվող] *փիշքաշի* հետ.

բեռնակիր կենդանիներ		բեռ
ձի 39	ջորի 33	ժամացույց. մեկ հատ,
		ատլաս՝ 50 *զար՛*, մետաքս՝ 50 *զար՛*,
		հում մետաքս (աբրիշում)՝ 30 *զար՛*,
		մահուդ. 60 *զար՛*, դաշյուն՝ 12 հատ,
		կլոր կաթսա՝ 1 հատ,
		կանաչեղեն, համեմունքներ,
		մեխակ. 4 …,
		սանր՝ 3 հատ,
		հաշիշի տուփ՝ 6 հատ, այսքանը

որ ուղարկել էր իր կարգակիցների մեջ լավագույն Բարսեղի միջոցով, արժանացավ գերագույն արեգակնային հայացքին: Նրա պատասխանատվության մասին հավաստող բովանդակությունը սկզբից մինչև վերջ ընկալվեց և *փիշքաշն* ընդունվեց որպես մեծագույն սիրալիրության նշան: Շնորհակալ եմ: Այժմ, ուղարկված պատվարժանի պատվիրակին հեռանալու թույլտվություն տալով, ուղարկեցինք: Քանի որ գերագույն, սրբազնագույն ծառան այն պատվարժանի հանդեպ մեծ ողորմածությամբ է տրամադրված, ուստի անհրաժեշտ է, որպեսզի իր հանդեպ գթառատության *դիվանն* ու բարձրագույն մտքի ողորմածությունը իր սիրո դիմաց բաց համարելով, ունեցած խնդիրնե-ր[ի մասին] ամեն օր հույսով զեկուցի և այդ իր պարտականությունը համարի:

Գրվեց 1192 թվականի ռաբի՛ երկրորդ ամսին[203]:

[Հակառակ կողմում]

1) Գրվեց, [կնիք];

[203] 1778թ. ապրիլի 29 – մայիսի 28:

2) Գրանցվեց, [կնիք];
3) Գրի առնվեց;
4) Գրչի հանձնվեց;
5) Գրվեց;
6) Աչքի անցկացվեց, [կնիք]. «…Աստծո ծառա Մուհամմադ Հասան»;
7) Գրվեց;
8) Տեսա, [կնիք]. «…Մուհամմադ Ջա'ֆար»:

ՎԱՎԵՐԱԳԻՐ 52

Արքայազն Գեորգիի 1782թ. հրամանագիրը, որով Միրզա Ահմադն իր ընտանիքով վակֆ է արվում Էջմիածնի վանքին, որպեսզի ընդմիշտ լինեն կաթողիկոսի սպասավորը

Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 1դ, վավերագիր 494, բնագիր,
մեծ. 22 x 32 սմ, գիր՝ շիքասթե, նասթալիղ

Կարգադրվեց հետևյալը.

Նորին Գերազանցություն Միրզա Ահմադը Բարձրյալի մեծագույն ողորմածությամբ նրա ծառաների ուշադրությանն ու գովեստին արժանացած լինելով թող իմանա, որ քանի որ այն արժանավոր անձը ժառանգաբար հանդիսացել է Բորչալուի բնիկ *ռայաթներից* ու երկար ժամանակ է, ինչ բնակվում է Ուչքիլիսայում, Գերագույն միտքը որոշել էր նրան գաղթեցնել իր հին բնակավայրը: Բայց երկրորդ անգամ այն պատվարժան կաթողիկոսի գրավոր խնդրանքով և գիտակցելով նրա հետ բարեկամական կապերի ամրության կարևորությունը՝ Նորին Գերազանցությունը այն հպատակին իր ժառանգների ու ընտանիքի հետ *վակֆ* արեց Ուչքիլիսայի վսեմ ու սրբազան օջախին և հանձնեց այն բարձրաստիճան անձին, որպեսզի այսուհետև իր զավակների հետ գտնվի այն սուրբ վայրում, հանդիսանա նրա *ռայաթն* ու փառահեղ կաթողիկոսի արժանի սպասավորը, հանգիստ ու ապահով անձնվիրաբար ծառայի նրան: Այնուհետև ոչ ոք ոչ մի դեպքում չպետք է նրա ու նրա որդիների հետ գործ ու նրանց նկատմամբ հավակնություններ ունենա: Թող հույսը դնեն գերագույն ողորմածության վրա և այս իրենց պարտականությունը համարեն:

Գրվեց 1196 թվականի շավալ ամսին[204]:

[Կնիք]. «…Հիսուսի ծառա Գորգին»:

[Հակառակ կողմում]

[Հայերեն]՝

Գէօրկին խանն գրէ զայս առ մեր Միրզա Ահմատն, թէ շնորհեցի զքեզ Սրբոյ Աթոռոյն 'ի ծառայիլ յաւիտեանս: 'Ի ՌՄԼԱ թուոջ և 'ի յօգոստոսի:

[204] 1782թ. սեպտեմբերի 9 – հոկտեմբերի 8:

ՎԱՎԵՐԱԳԻՐ 53

Աղա Մուհամմադ խանի 1795թ. հրամանագիրը, որով վերջինս Էջմիածնի Ղուկաս կաթողիկոսին ու միաբանությանը իրենց հնազանդության համար ապահովություն է խոստանում առաջիկա արշավանքի ընթացքում

Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 1դ, վավերագիր 524, բնագիր,
մեծ. 36,8 x 53,5 սմ, գիր՝ շիքասթե, նասթալիղ

Հանուն Բարձրյալ Ալլահի

Բարձր հրաման եղավ հետևյալի մասին.

Քրիստոնյա մեծամեծներից լավագույն և Հիսուսի ժողովրդի առաջնորդ, կաթողիկոսների կաթողիկոս, Երևանի Ուչքիլիսայի Ղուկաս կաթողիկոսը թող թագավորական արեգակնային մտքի առատ ողորմածությամբ գոտեպնդված ու հպարտ իմանա, որ [նրա] հավատարմությունն արտահայտող խնդրագիրը, որ օրերս գրել էր՝ ելնելով իր հնազանդության ու նվիրվածության սկզբունքներից և, հպատակություն հայտնելով, իր կարգակիցների մեջ լավագույն Հովհաննեսի հետ հղել աշխարհի ապավենի պալատը, արժանացավ երկնային գահին հավասար պալատի մերձավոր պաշտոնյաների ուշադրությանը այն ժամանակ, երբ բոլոր գործերը Աստծո բարեհաճ նշանով ու նրա ճշմարիտ հավատի սրբապատկերի փայլով, ակնհայտ հաղթանակների ճառագայթներով ողողված, մոտեցել են [մեր] հույսերին և ցանկություններին [համապատասխան] իրականացմանը: Նրա [խնդրագրի] բովանդակությունը զեկուցվեց աշխարհը զարդարող մտքին, ու այն *խալիֆաներից* լավագույնի հնազանդությունն ու նվիրվածությունը պետությանը հայտնի դարձավ լուսավոր ու գթառատ սրտին: Քանի որ այս հավերժական պետության լուսատուի հզորացումն ու բարձրացումը կապված լինելով նրա յուրաքանչյուր շրջանի Արարչի ստեղծագործությունը հանդիսացող բնակիչների անդորրի ու հանգստության հետ՝ գթառատ ուշադրության կենտրոնում է, ուստի թագավորական ահեղ հրաման հրապարակվեց, որպեսզի այն *խալիֆաներից* լավագույնը և Ուչքիլիսայի ողջ միաբանությունն ու բնակչությունը ազնվագույն մտքի ողորմածությամբ գոտեպնդված, իրենց բնակավայրերում ու վանքերում հանդարտ բնակվեն, որովհետև ոչ մի դեպքում հաղթական շահի *սարդարներից* ու զորապետներից նրանց վնաս չի հասնի: Կարգադրվեց, որպեսզի բոլոր հաղթական զորքերի *սարդարներն* ու զորապետները բարձր *հոքմին* ու գերագույն, պարտադիր գործադրության ենթակա *ֆերմանին* համապատասխան գործադրեն և վճռական *ռաղամի* բովանդակությունից շեղում թույլ չտան: Թող այս իրենց պարտականությունը համարեն:

Գրվեց 1209 թվականի սրբազան զի հաջջե ամսի 12-ին[205]:
[Կնիք]. «Ապավինում եմ Ալլահին, Աստծո ծառա Մուհամմադ»:
[Հակառակ կողմում]
1) Գրվեց, [կնիք]. «Չկա Աստված բացի Ալլահից, նրանն է իշխանությունն ու արդար օրենքը, Աստծո ծառա Քազեմ»;
2) Գրանցվեց գործադրման *սարդեշքեում*, [կնիք]. «…Մուհամմադ»;
3) Գրանցվեց, [կնիք]. «… Աստծո ծառա Մուհամմադ»;
4) Աչքի անցկացվեց, [կնիք];
5) Գրի առնվեց;
6) Գրի առնվեց;
7) Տեսա, [կնիք]. «Ապավինում եմ Ալլահին…»
8) Ընդունեցի, [կնիք]. «… Ալի Իբրահիմ»:
[Հայերեն]՝
Աղայ Մահմատ խանն գրէ առ Ղուկաս կաթողիկոսն նստիլ 'ի Սուրբ Աթոռն աներկիւղ 'ի զօրաց պարսից: Շահի ֆերմանն է:
Ֆաթալի շահի Ապպաս Միրզայ շահզատայի, Ալիղուլի խան սարդարի[206] և այլ սարդարաց յուսադրական գրութիւնք են վասն նստելոյ և լինելոյ աներկիւղ:

ՎԱՎԵՐԱԳԻՐ 54
Աղա Մուհամմադ խանի 1795թ. հրամանագիրը, որով Երևանի Մուհամմադ խանին կարգադրվում է հարգել Էջմիածնի Ղուկաս կաթողիկոսին ու հոգ տանել նրա մասին

Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 1դ, վավերագիր 528, բնագիր,
մեծ. 38,6 x 42,5 սմ, գիր՝ շիքասթե, նասթալիղ

Բարձր հրաման եղավ, որպեսզի բարձրաստիճան պաշտոնյա, մեծահարուստ և բարեբախտ, փառաշուք ազնվական, քաջարի ու հավատարիմ, մեծ *ամիր-ալ-ումարա*, Երևանի *բեկլարբեկ* Մուհամմադ խանը բարձրագույն մտքի առատ բարեհաճությամբ մեծարված, գիտենա, որ քանի որ քրիստոնյա մեծամեծների գլխավոր Ուչքիլիսայի Ղուկաս կաթողիկոսը բարեգութ շեմքի հավատարիմ նվիրյալներից է և ամեն առումով նրա մասին հոգածությունը արեգակնային մտքի նպատակն է, ուստի այն պատվարժանին կարգադրվում է ամեն կերպ բարեկամաբար վարվել կաթողիկոսի հետ, օժանդակել նրան և ամեն դեպքում հարգանքը նրա նկատմամբ պարտադիր համարել: Այնպես, որ եթե այդ *վիլայեթում* վերոհիշյալին անհանգստացնեն, ապա նա՝ ինքը [*բեկլարբեկը*], պետք է

[205] 1795թ. հուլիսի 1:
[206] Հրովարտակի հայերեն մեկնաբանության այս մասը սխալ է:

զբաղվի դրանով և այնպես վարվի, որպեսզի [կաթողիկոսը] իրենից գոհ լինի: Այս առումով թող այս ընդունեն որպես խիստ կարգադրություն և այն իրենց պարտականությունը համարեն:
Գրվեց 1210 թվականի ռաբի' առաջին ամսին[207]:
[Կնիք]. «Ապավինում եմ Ալլահին, Աստծո ծառա Մուհամմադ»:
[Հակառակ կողմում]
1) Գրանցվեց;
2) *Մարքարի* կնիքի դրոշմը;
3) Աչքի անցկացվեց, [կնիք]. «… Մուհամմադ»;
4) Գրի առնվեց, [կնիք];
5) Գրվեց, [կնիք]. «…Ալի Աբդալլահ»;
6) Տեսա, [կնիք]. «Ապավինում եմ Ալլահին…»;
7) Ընդունեցի, [կնիք]. «Աստծո ծառա Իբրահիմ»:
[Հայերեն]՝
Աղայ Մահմատ խան շահի ֆերմանն է 'ի վերայ Երևանու Մահմատ խանին, առ 'ի հանգստեամբ և յարգասիրութեամբ ունիլ զՂուկաս Սրբազան կաթողիկոսն, գրեցեալ 'ի ՌՄԽԴ (1244) թուոջ մերում, և 'ի հոկտեմբերի ամսոջն:

ՎԱՎԵՐԱԳԻՐ 55
Աղա Մուհամմադ շահի 1797թ. հրամանագիրը, որով Իրանի զինվորականներին ու պետական պաշտոնյաներին արգելվում է առանց օրինական հիմքի հարկեր պահանջել Վաղարշապատ գյուղից

Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 1դ, վավերագիր 532, բնագիր,
մեծ. 30,2 x 42 սմ, գիր՝ շիքասթե, նասթալիղ

Հանուն Բարձրյալ Ալլահի
[Կնիք]. «Իշխանությունն Ալլահինն է: Ապավինում եմ Ալլահին, Աստծո ծառա Մուհամմադ»

Աշխարհասաստ հրաման եղավ հետևյալի մասին.
Քրիստոնյա արժանավոր անձանցից լավագույն Երևանի Ուչքիլիսայի Ղուկաս կաթողիկոսի խնդրանքով և այն կողմերի բնակչության մասին հոգածությունը բարեգութ մտքի կամքի հետ զուգակցելով՝ անհապաղ գործադրության ենթակա հրամանագիր հրապարակվեց, որպեսզի հավատի հաղթական մարտիկներից, *դիվանի* գործերի *մուհասիլներից* և Ազերբայջանի *վիլայեթով* այլ անցուդարձ անողներից ոչ ոք ծախսերի ու *շիլթաղի* պատճառով առանց բարձր *ռաղամի* ոչ մի դեպքում պահանջներ չունենան

[207] 1795թ. սեպտեմբերի 15 – հոկտեմբերի 15:

[Ուչքիլիսա] գյուղի բնակիչներից ու նրանց չնեղեն: Կարգադրությանը հակառակվելը ծանր պատժի պատճառ թող համարեն: Կարգադրվեց, որպեսզի պատվարժան բարձրաստիճան մեծ *ամիր-ալ-ումարա,* Երևանի Մուհամմադ Խան *բեկլարբեկը* կարգադրությանը համապատասխան վարվի, այն խիստ հրաման համարի, որին հակառակվողներից ոչ մեկին թույլ չտալ *իխրաջաթի* համար նեղել նրանց և այս հարցում անհրաժեշտ ջանասիրություն ցուցաբերի: Այս թող իրենց պարտականությունը համարեն:

Գրվեց 1211 թվականի ռամազան ամսին[208]:

[Հակառակ կողմում]

1) Գրանցվեց *սարրեշթեի* կողմից;
2) Գրանցվեց, [կնիք]. «…Աստծո ծառա Ֆազլ Ալի»;
3) Գրի առնվեց, [կնիք]. «…Աստծո ծառա Ռեզա Ղուլի»;
4) Գրվեց, [կնիք]. «Ապավինում եմ Ալլահին …»;
5) Աչքի անցկացվեց, [կնիք]. «…Աստծո ծառա Մուհամմադ»;
6) Տեսա, [կնիք]. «…Աստծո ծառա Ալի Իբրահիմ»:

[Հայերեն]՝

Աղայ Մահմատ խան շահի ֆարմանն է, յորում հրամայէ թէ Հատրբէջանու և այլ տեղից ով որ և շիլթաղ ինչ արասցէ բան չտրեսցե. և Մահմատ խանին ևս պատուէր գրէ առ այս:

.

[208] 1797թ. փետրվարի 28 – մարտի 30:

ԲԱՌԱՐԱՆ[209]

Աբվաբ-ե ջամ՚ - ابواب جمع – Այսպես կամ միայն «ջամ՚ - جمع» էր կոչվում հարկերի հաշվառման այն ձևը, երբ որևէ հարկատու օբյեկտից կամ առանձին գյուղական համայնքից գանձվող բոլոր պետական հարկերը մանրամասնությամբ հաշվվում էին և առանձին-առանձին հարկային մատյաններում գրանցվելուց հետո ի մի էին բերվում և ի վերջո դրամական արտահայտությամբ արձանագրվում որքա՞ն հարկ պետք է վճարի և դրանից որքանը ո՞ր հարկի հաշվից:

